ПОСВЯЩАЕТСЯ
120-ЛЕТИЮ
СО ДНЯ РОЖДЕНИЯ
И 90-ЛЕТИЮ СМЕРТИ
СЕРГЕЯ ЕСЕНИНА



ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 120
ԵՎ ՄԱՀՎԱՆ
90-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
**УНИВЕРСИТЕТ**

# Сергей Есенин

## СТИХИ РАННЕГО ПЕРИОДА

(1910-1915 гг.)

*В переводе и с предисловием*
В. С. МАГАЛЯНА

ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН 2015

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Սերգեյ Եսենին

ՎԱՂ ՇՐՋԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(1910-1915 թթ.)

Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆԻ
*Թարգմանությամբ և առաջաբանով*

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015

ՀՏԴ 821.161.1-1 Եսենին
ԳՄԴ 84(2Ռ)-5
Ե 586

***Տպագրվում է ԵՊՀ գրահրատարակչական խորհրդի որոշմամբ***
***Печатается по решению издательского совета ЕГУ***

**Գրախոս՝** ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր, մշակույթի վաստակավոր գործիչ ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ

**Рецензент:** профессор кафедры зарубежной литературы ЕГУ, доктор филологических наук, лауреат Государственной премии РА, заслуженный деятель культуры ГЕНРИХ ЭДОЯН

**Սերգեյ Եսենին**
Ե 586 Վաղ շրջանի բանաստեղծություններ (1910-1915 թթ.), Վ. Ս. Մաղալյանի թարգմանությամբ և առաջաբանով: Երևան, ԵՊՀ հրատ., 2015. - 318 էջ + 10 էջ ներդիր:

Ժողովածուն ընդգրկում է ռուս մեծ բանաստեղծ Սերգեյ Եսենինի վաղ շրջանի բանաստեղծությունները և դրանց զուգահեռ՝ թարգմանությունները, որոնց մեծ մասը հայերեն է հնչում առաջին անգամ:

**Сергей Есенин**
Е 823 Стихи раннего периода (1910-1915 гг.) в переводе и с предисловием В. С. Магаляна. Ереван, изд. ЕГУ, 2015. - 318 стр. + 10 стр. вкл.

В сборнике представлены стихи раннего периода великого русского поэта С. А. Есенина. Наряду с этим представлены их армянские переводы, большинство из которых выполнены впервые.

ՀՏԴ 821.161.1-1 Եսենին
ԳՄԴ 84(2Ռ)-5

**ISBN 978-5-8084-2035-9**

© ԵՊՀ հրատ., 2015
© Издательство ЕГУ, 2015

© Մաղալյան Վ., 2015
© Магалян В., 2015



ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆ | *1922 թ.*

# «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔՆԱՐԱԿԱՆ ՍԻՐՏԸ»*

*Բոլոր գրածներից այն եմ սիրում,*
*ինչ մէկը իր արիւնով է գրում:*
*Գրիր արիւնով, և կտեսնես,*
*որ արիւնը ոգի է:*

**ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԷ**

* Այս ակնարկը՝ Ս. Ա. Եսենինի ծննդյան 100 և մահվան 70-ամյակների առթիվ տպագրվել է «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուի 1995 թ. 3-րդ համարում (տե՛ս էջ 86-96), որն աննշան փոփոխություններով և որոշ հավելումներով ներկայացնում ենք այստեղ իբրև սույն հրատարակության առաջաբան:

Ամեն մի ճշմարտացի բանաստեղծ, սկսած Հոմերոսից, իր հաստատուն տեղն ու ձայնն ունի այս արևի ներքո, անկախ այն բանից, թե երբ և որտեղ է ծնվել նա: Նարեկացին ու Դանթեն, Ռուսթավելին ու Ֆիրդուսին, Խայյամն ու Հաֆեզը պատկանում են բոլոր ժամանակներին ու ժողովուրդներին: Շեքսպիրն ու Բայրոնը, Գյոթեն ու Շիլլերը, Հայնեն ու Պուշկինը, Բոդլերն ու Վեռլենը, Լերմոնտովն ու Հյուգոն, Լոնգֆելլոն ու Ուիթմենը նույնպես ուրույն ձայն ու լայնարձակ տեղ ունեն համաշխարհային գրականության մեջ: Հզոր թափի ու հուժկու ձայնի բանաստեղծներ են նաև Շևչենկոն ու Վերհառնը, Թումանյանն ու Ճավճավաձեն, Միցկևիչն ու Պետեֆին... Նրանց հավերժական երթին եկան միանալու նաև անցյալ դարասկզբի մեծանուն երգիչներ Իսահակյանն ու Բլոկը, Տերյանն ու Ռիլկեն, Չարենցն ու Մայակովսկին, Ֆեդերիկո Գարսիա Լորկան և շատ ուրիշներ:

Սերգեյ Եսենինը ևս նրանց թվին է պատկանում: Արդեն հարյուր քսան տարեկան դարձավ ռուս մեծ քնարերգակը: Սակայն նա ոչ միայն գրականության մեջ, այլև կյանքում մնաց հավերժ երիտասարդ, երեսունը դեռ նոր բոլորած...

Սերգեյ Եսենինը դուրս էր եկել գյուղական «թեք ընկած պառավ ու խարխուլ մի տնակից» և մաքուր ու անարատ հոգով մտել հակասություններով ու դառնություններով լի այս դաժան աշխարհը, քայլել դժվարին ճամփաներով: Նրան բաժին էր ընկել բանաստեղծական դառը ճակատագիր: Նա իր այդքան կարճատև կյանքն անցկացրել է հոգեկան ծանր ու տանջալի ապրումների, խոր ցնցումների ուղեկցությամբ և, ավա՜ղ, ավարտել մեծ ողբերգությամբ...

Իր ստեղծագործական կյանքի ընդամենը մեկուկես տասնամյակի ընթացքում ինչ գրել է Եսենինը, ոչ միայն մնայուն տեղ

է գրավում ռուսական քնարերգության մեջ, այլև դարձել է համայն մարդկության մշակույթի անբաժան մասը: Նա, ինչի մասին էլ որ գրում է, թվում է՝ բանաստեղծական վճիտ ու մաքուր լեզվով, անկեղծ ու շիտակ, մտերմիկ ու սրտաբաց խոսում է իր մասին, անում է իր կյանքի հուզախռով պատմությունը, որն այսօր խորապես հուզում է մեզանից յուրաքանչյուրին: Ճիշտ է ասված, որ բանաստեղծի անձնական կյանքի ետևում հառնում է նրա դարաշրջանը: Այդպես է և Եսենինը, որ անցյալ դարի հեռավոր 20-ական թվականներից իր լուսավոր կերպարով հասնում է մեր օրերը, ուղղորդվում դեպի գալիքը: Նրան հաճախ իրավացիորեն անվանում են «Ռուսաստանի քնարական սիրտը»:

Սերգեյ Ալեքսանդրի Եսենինը ծնվել է 1895 թ. սեպտեմբերի 21-ին (հին տոմարով՝ հոկտեմբերի 4-ին), Ռուսաստանի Ռյազանի նահանգի կուսական խորքերում գտնվող Կուզմինսկի գավառակի Կոստանտինովո (այժմ՝ Եսենինո) գյուղում, գյուղացու ընտանիքում:

*Ես ծնվեցի երգերով խոտե թավիշ վերմակին,*
*Արշալույսը ինձ գարնան ծիածանով բարուրեց:*
*Հասակ առա ես որպես թոռն Համբարչման գիշերվա,*
*Վհուկ-խավարն ինձ բարի բախտ է նախագուշակում:*

**(Թարգմ.՝ Պ. Սևակի)**

Այսպես է իր մասին գրել Եսենինը 1912 թ. բանաստեղծություններից մեկում: Սակայն մինչ այդ նա հարուստ ու հետաքրքիր մանկություն է ունեցել, ապրել ու մեծացել է իր ծննդավայրում, հայրենի բնության գրկում: Նրա հոգին հմայվել է ծագող արշալույսների հրդեհներով ու խաղաղ գետակների ցոլանքնե-

րով, տանիքներին կախվող արծաթ լուսնի լիրով ու անծիր երկընքի անհունով, կապույտ լճերի շլացուցիչ հայելիներով ու ճերմակ կեչիների լույսով, ծաղկած ցարասենիների բույրով ու լայնարձակ դաշտերի հակինթ ցողով, գետակներին կախված ուռենիների նազանքով ու հայրենի եզերքի այլ գեղեցկություններով, որոնք հետագայում դարձել են նրա բանաստեղծությունների ոգին: Նա մանկուց տեսել է բնության այդ ամենանրբին երանգները, ունկնդրել ամենաքնքուշ ձայները, ըմբոշխնել ամենաանուշ բուրմունքները:

«Երկու տարեկանից,– իր առաջին ինքնակենսագրության մեջ հետագայում գրել է բանաստեղծը,– հորս չքավորության և մեր ընտանիքի բազմանդամության պատճառով ինձ դաստիարակության են տվել մորս կողմից բավականին հարուստ պապիս մոտ, որն ուներ երեք չափահաս ամուրի որդի, որոնց հետ էլ անցել է իմ ողջ մանկությունը: Իմ քեռիները կռվարար ու չափից դուրս հանդուգն տղաներ էին: Երեքուկես տարեկանում նրանք ինձ նստեցնում էին անթամբ ձիուն և իսկույն բաց թողնում քառատրոփ արշավով: Ես հիշում եմ, թե ինչպես սթափվում ու ամուր բռնում էի նրա բաշից:

Հետո ինձ սովորեցրին լողալ: Մի քեռիս (քեռի Սաշան) ինձ առնում էր նավակի մեջ, հեռանում էր ափից, հանում էր շորերս և, շան լակոտի նման, նետում էր ջուրը: Ես անվարժ ու սփրթնած չփչփացնում էի ձեռքերով, և, մինչև շնչահեղձ լինելու չափ ջուր կուլ չէի տալիս, նա հա բղավում էր. «Է՜խ, զզվելի դիակ, ինչի՞ ես դու պետք»: «Զզվելի դիակ»-ը նրա փաղաքշական խոսքն էր: Հետո, ութ տարեկանից, մյուս քեռուս համար ես հաճախ փոխարինում էի որսորդական շանը, լողում էի լճակներով՝ սպանված բադերը բերելու: Ես շատ լավ էի սովորել մագլցել ծառերը: Երեխաներից ոչ մեկը ինձ հետ չէր կարող մրցել...

Երեխաների շրջանում ես միշտ լավ հեծյալ էի ու մեծ կռվազան և շրջում էի միշտ քերծվածքներով: Չարաճճիություններիս համար ինձ նախատում էր միայն տատս, իսկ պապս երբեմն բորբոքված թափահարում էր բռունցքն ու ասում կնոջը. «Դու, իմ հիմար, նրան մի կպնիր: Նա այդպես ուժեղ կլինի»»[1]:

Այդպես, ուժեղ ու ամեն մի փորձության պատրաստ, պատանի Եսենինը ոտք է դնում կյանքի մեծ ճանապարհին: Նա, տեղական ուսումնարանում նախնական կրթություն ստանալուց հետո, 1909 թ. ընդունվել և 1912-ին ավարտել է Կոստանտինովոյից 30 կմ հեռավորության վրա գտնվող Սպաս-Կլեպիկի հոգևոր-ուսուցչական դպրոցը: Այնուհետև մեկնել է Մոսկվա, ուր առևտրական մի գրասենյակում աշխատում էր նրա հայրը: Հոր օգնությամբ ու միջնորդությամբ 17-ամյա Եսենինը աշխատանքի է անցել այդ գրասենյակում՝ հաճախելով նաև Ա. Վ. Շանյավսկու անվան ժողովրդական համալսարանը, որը, սակայն, չի ավարտել: «Կարդալ սովորել եմ 5 տարեկանում, քեռուս օգնությամբ: Իսկ բանաստեղծություններ սկսել եմ գրել 8 տարեկանից: Ուսանել եմ շատ, բայց ոչինչ չեմ ավարտել»[2],– մի առիթով գրել է Եսենինը:

Մոսկվայից մի կարճ ժամանակով նա կրկին վերադարձել է հայրենի գյուղ, ապա 1913 թ. մարտին դարձյալ տեղափոխվել Մոսկվա, ուր էլ աշխատանքի է անցել տպարանում. սկզբում՝ որպես համեմատող, իսկ այնուհետև՝ սրբագրիչ: Աշխատելու այդ տարիներին նա ծանոթացել է տպագրական գործի ու գրականմշակութային կյանքի հետ և հենց այդ ժամանակ էլ մամուլում տպագրել իր առաջին ոտանավորները:

---

1 **С. А. Есении.** Собр. соч. в шести томах, том. V, М., 1979, էջ 219-220. Սույն առաջաբանում օգտագործված այս և սրան հաջորդող մյուս բոլոր արձակ մեջբերումների թարգմանությունը կատարվել է մեր կողմից (Վ. Մ.):

2 Նույն տեղում, էջ 234:

Եսենինը 1915 թ. տեղափոխվել է Պետրոգրադ, որտեղ ապրում ու ստեղծագործում էին ժամանակի ռուս մեծանուն բանաստեղծներից շատերը: Առաջինը, ում այցելել է պատանի բանաստեղծը, եղել է Ալեքսանդր Բլոկը: «Երբ ես նայում էի Բլոկին,– իր ինքնակենսագրականում գրում է Եսենինը,– ինձանից քրտինք էր կաթում, որովհետև առաջին անգամ էի տեսնում կենդանի բանաստեղծի»[3]: Այստեղ Եսենինը, ծանոթանալով գրական միջավայրին, հաճախելով հայտնի սալոնները, սովորել ու ապրել է ստեղծագործական բուռն կյանքով: «Ժամանակակից բանաստեղծներից ինձ ամենից շատ դուր էին գալիս Բլոկը, Բելին և Կլյուևը: Զնի առումով ինձ շատ բան է տվել Բելին, իսկ Բլոկն ու Կլյուևը քնարականություն են սովորեցրել ինձ»[4],– իր ինքնակենսագրական պատառիկներից մեկում խոստովանել է Եսենինը:

Պետրոգրադում 1916-ին[5] լույս տեսավ Եսենինի բանաստեղծությունների «Ռադունիցա»[6] անդրանիկ ժողովածուն, որը մեծ համբավ բերեց նրան: Այդպես Ս. Եսենինը մտնում է գրականության մեծ հորձանուտը: 1919-ից նա անդամակցում է իմաժինիստների գրական խմբակցությանը, ստորագրում նրանց մանիֆեստը, կրում է անարխիստների ազդեցությունը, ծանոթանում գրական այլ խմբակցությունների ծրագրերին ու նրանց անդամների ստեղծագործական մեթոդներին ու գաղափարական դավանանքներին: Այդ անկումային ուղղությունները, որքան էլ գայ-

---

[3] Նույն տեղում, էջ 220:

[4] Նույն տեղում, էջ 236:

[5] Ըստ Եսենինի հաղորդած տեղեկությունների, այն «լույս է տեսել 1915-ի նոյեմբերին՝ 1916-ի թվագրումով» («Տե՛ս Եսենինի Երկերի ժողովածուի հիշյալ 5-րդ հատորը, էջ 223 և 237):

[6] Եկեղեցական-կրոնական ծիսակատարության անվանում ռուսաց մեջ, որը տեղի է ունենում «Սուրբխաչ» տոնին հաջորդող 2-րդ շաբաթվա ընթացքում:

թակղիչ լինեին, չէին կարող շեղել քնարերգության բարձունքները ժողովրդական ակունքներից ելնող բանաստեղծի ճամփան: Եսենինը ուներ առողջ ու պայծառ ոգի, որը ժառանգել էր իր աշխատասեր ժողովրդից: Եվ գրական այդ մոլորությունները նրա վրա գրեթե ոչ մի ազդեցություն չեն թողել: Նա իր էությամբ մնացել է ռեալիզմի դիրքերում: «Ես բոլորովին էլ կրոնասեր մարդ չեմ և ոչ էլ միստիկ եմ,– գրել է նա:– Ես ռեալիստ եմ, և եթե իմ մեջ ռեալիստի համար ինչ-որ մշուշային բան կա, ապա դա ռոմանտիկան է, բայց ոչ հին քնքուշ ու տնասեր խառնվածքի, այլ ամենաիսկական երկրային...»[7]:

Եսենինը իր կենդանության օրոք հրատարակել է 23 ժողովածու[8], որոնք բարձր են գնահատվել գրաքննադատության կողմից: Իհարկե, ժամանակին նրա ստեղծագործությունների շուրջ եղել են նաև թեր ու դեմ կարծիքներ, որոնք, սակայն, շուտով խլացել են բանաստեղծի հզոր քնարի հնչյունների ներքո: Մաքսիմ Գորկին նրա մասին գրել է. «Այդ բանաստեղծություններից հետո ակամա մտածում ես, որ Սերգեյ Եսենինը ոչ այնքան մարդ է, որքան մի օրգան, որ բնությունը ստեղծել է բացառապես պոեզիայի համար՝ արտահայտելու դաշտերի անսպառ տխրությունը, սերը աշխարհի յուրաքանչյուր կենդանի արարածի նկատմամբ և գթասրտությունը, որին ամեն ինչից առավել արժանի է մարդը»[9]:

Եսենինին գնահատել են նաև տարբեր ազգերի շատ ու շատ այլ մեծություններ, որոնց թվում և Վիլյամ Սարոյանը: Նա, Վա-

7 Նույն տեղում, էջ 206:

8 Դրանցից են՝ «Голубень» (СПб, 1918), «Преображение» (М., 1918), «Сельский часослов» (М., 1918), «Трерядница» (М., 1920), «Исповедь хулигана» (М., 1921), «Стихи скандалиста» (Берлин, 1923), «Москва кабацкая» (Л., 1924), «Персидские мотивы» (М., 1925) և այլն:

9 **Максим Горький**. Пол. собр. соч., том. 20, М., 1974, էջ 67-68.

հագն Դավթյանից լսելով Եսենինի մասին, ասել է. «Ուրեմն Եսենինն ալ մեծ բանաստեղծ է, որովհետև մեծ գութ ունի...»:

Ե. Չարենցը ևս ժամանակին բարձր է գնահատել Ս. Եսենինի ստեղծագործությունները և 1923 թ. հայերենի է փոխադրել դրանցից մեկը՝ «Ընկերը», իսկ Գ. Մահարին 1928-ին մի բանաստեղծություն է նվիրել Եսենինին:

Եսենինը մեծ ռեալիստ է, «մայր Ռուսիայի» նկատմամբ նրա անսահման սերը ծնունդ է առել իր հայրենի եզերքից՝ հետագայում իր մեջ ներառելով այն ամենալավը, գեղեցիկն ու վեհը, որոնք հատուկ են ռուս ժողովրդին: Նրա քնարը բխում է ժողովրդական երգերի խոր ու վճիտ ակունքներից և հասնում է դասական պարզության: Նրա բանաստեղծությունները առանձնանում են իրենց թարմությամբ ու կոլորիտայնությամբ, պարզությամբ ու պայծառությամբ, հագեցած են հայրենի բնության գունագեղ պատկերներով: Բնությունը նրա համար եղել է կերպարների, պատկերների, գույների ու ձայների վերարտադրման անսպառ աղբյուր, քնարական նրբանուրբ ապրումների արտահայտման շտեմարան: Եսենինն ուներ մարդկանց հոգու խորքերը թափանցելու մեծ կարողություն: Նա ազգային խոշոր բանաստեղծ է, և իր բարձրարվեստ ստեղծագործություններում արտահայտել է ռուս ժողովրդի ոգու անհուն մեծությունը, գրել է բազմաթիվ հայրենասիրական, սիրային բանաստեղծություններ ու պոեմներ, բալլադներ ու հեքիաթներ, դրամատիկական ստեղծագործություններ ու արձակ երկեր, քննադատական հոդվածներ, ճամփորդական նոթեր և այլն: Եսենինի թողած գրական ժառանգությունը նրա ապրած ժամանակաշրջանի հակասություններով լի դիմապատկերն է, հնի ու նորի հոգեկան խռովքը, «հեռացող Ռուսաստանի» թախիծը և նրա «չուգուն ու բետոն հագնող» քաղաքների գեղարվեստական կենսագրությունը:

Արդ, մեր նպատակից վեր է Ս. Ա. Եսենինի ստեղծագործությունների վերլուծությունը, դրանց մասին շատ է խոսվել, ստեղծվել են առանձին մենագրություններ ու գրքեր, գրվել են բազմաթիվ հուշեր և այլն: Հայ իրականության մեջ ևս գնահատվել է Եսենինի գրական ժառանգությունը, ընդարձակ առաջաբաններով լույս են տեսել նրա երկերի ժողովածուները[10]:

Մեր նպատակը Եսենինի վաղ շրջանի ստեղծագործություններին ծանոթացնելն ու նրա անդրկովկասյան ուղևորություններին անդրադառնալն է՝ կապված հայ իրականության հետ:

* * *

Սերգեյ Եսենինի բանաստեղծական հոգին թևածել է անսահման հեռուներում: Նա եղել է ճամփորդությունների մեծ սիրահար: Իր կարճատև կյանքի ընթացքում հասցրել է Ռուսաստանը ակոսել լայնքով ու երկայնքով՝ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսից մինչև Սև ու Կասպից ծովերը, արևմուտքից մինչև Չինաստան, Պարսկաստան ու Հնդկաստան: Նա եղել է նաև Ուկրաինայում ու Ղրիմում, ուղևորություն է կատարել Միջին Ասիայում, շրջել է Թուրքեստանում ու կիրգիզական տափաստաններում, ծանոթացել է այդ վայրերում ապրող ժողովուրդների մշակու-

[10] Դրանք են՝ **Սերգեյ Եսենին.** Հատընտիր (Երևան, Հայպետհրատ, 1961, 400 էջ), «Ռուս դասականների գրադարան» մատենաշարի **Ալեքսանդր Բլոկ, Սերգեյ Եսենին**. Ընտիր երկեր (Երևան, «Սովետական գրող», 1986, 448 էջ) ժողովածուները, որոնք կազմել, խմբագրել և առաջաբանները գրել է բանաստեղծ ու թարգմանիչ Վահագն Դավթյանը: «Սովետական գրող» հրատարակչությունը 1982 թ. լույս է ընծայել Ս. Եսենինի բանաստեղծությունների և պոեմների մի փոքրիկ ժողովածու ևս՝ Հրաչյա Թամրազյանի թարգմանությամբ: Ռուս մեծ բանաստեղծի երկերի հայերեն առանձին թարգմանություններ տպագրվել են նաև գրական հանդեսներում ու ժողովածուներում:

թային արժեքներին: 1922-23 թթ. շրջագայել է Արևմտյան Եվրոպայում, ինչպես նաև ԱՄՆ-ում, իսկ 1924-25-ին ուղևորություններ է կատարել դեպի Անդրկովկաս: Դրանք պատահական ճամփորդություններ չէին, այլ՝ ստեղծագործական ներշնչանքների երկարատև պահեր:

*Հնուց ի վեր մեր Պառնասն ռուսական*
*Դեպի անծանոթ ափեր է քաշել,*
*Եվ ամենից շատ դու ես, ո՛վ Կովկաս,*
*Առեղծվածային մշուշով կանչել:*

**(Թարգմ.՝ Հ. Սահյանի)**

Եսենինը առաջին անգամ Կովկաս է եկել 1924 թ. սեպտեմբերին, սկզբում եղել է Բաքվում, ապա այցելել է Թիֆլիս և մի կարճ ժամանակ այստեղ մնալուց հետո կրկին մեկնել է Բաքու: Իսկ հոկտեմբերի կեսերից նորից եկել է Թիֆլիս, ուր մնացել է մինչև դեկտեմբերի սկիզբը: Այդ օրերին Մոսկվա՝ իր հարազատներին ու ծանոթներին գրած նամակներում հստակ ուրվագծված են Եսենինի այստեղ գալու ծրագրերը: Նրա նպատակն էր Բաքվին ու Թիֆլիսին ծանոթանալուց հետո մեկնել Երևան, ապա անցնել Պարսկաստան, լինել Թավրիզում ու Թեհրանում: Այդ ամենից հետո նա նպատակ ուներ նաև անցնել Թուրքիա, գնալ Տրապիզոն ու Կոստանդնուպոլիս, տեսնել Բոսֆորի ափերը: Սակայն նյութական միջոցների սղության և այլ պատճառներով նա չի կարողանում իրականացնել իր այդ երազանքը: Այդ աշնանն էլ՝ սկսած հոկտեմբերի կեսերից, Եսենինը ձեռնարկում է գրել իր «Պարսկական մոտիվներ» շարքը: Դեկտեմբերին մեկնում է Բաքում և այնտեղ մնում մինչև հաջորդ տարվա գարունը: Նա

այնտեղ ծանոթանում և հանդիպումներ է ունենում երիտասարդ ուսուցչուհի մի կնոջ՝ հայուհի Շահանե Ներսեսի Տալյանի հետ, որի անունն էլ բանաստեղծը անմահացրել է իր «Պարսկական մոտիվներ» շարքում.

*Շահանե, օ՜, դու իմ Շահանե,*
*Հյուսիսից եմ եկել ես հեռու,*
*Ու պատրաստ եմ ես քեզ պատմելու*
*Արտերից ու լուսնից մեր անեղծ,*
*Շահանե, օ՜, դու իմ Շահանե:*

*Հյուսիսից եմ եկել ես հեռու,*
*Ուր լուսինն այնքան մեծ է ու ջինջ,*
*Ձեր Շիրազը որքան էլ թովիչ,*
*Բայց էլի ինձ Ռյազանն է գերում,*
*Հյուսիսից եմ եկել ես հեռու:*

*Ես պատրաստ եմ հիմա պատմելու,*
*Որ մազերն իմ առա արտերից,*
*Թե կուզես, փաթաթիր մատներիդ,*
*Նրանք նուրբ են այնպես ու հլու,*
*Ես պատրաստ եմ հիմա պատմելու:*

*Մեր լուսնի, արտերի մասին լայն*
*Դու զանգուր մազերից իմ դատիր,*
*Թանկագին, ժպտա, կատակիր,*
*Չարթնացնես իմ հուշերը միայն*
*Մեր լուսնի, արտերի մասին լայն:*

*Շահանե, օ՜, դու իմ Շահանե,*
*Հյուսիսում մի աղջիկ կա նույնպես,*
*Որ դեմքով քեզ նման է այնպես...*
*Չի կարող նա մտքից իմ հանել,*
*Շահանե, օ՜, դու իմ Շահանե:*
1924

**(Թարգմ.՝ Վ. Դավթյանի)**

Եսենինը նրան նվիրել է նաև իր «Москва кабацкая» (1924 թ.) գիրքը հետևյալ մակագրությամբ.

*Дорогая моя Шагане,*
*Вы приятны и милы мне.*

4 января 1925, Батум

Բաթումում Եսենինը անչափ ազատ ու կենսախինդ կյանքով է ապրել՝ շատ շուտ ծանոթանալով քաղաքին ու նրա մարդկանց հետ: Այդ մասին իր «Բաթում» բանաստեղծության մեջ գրել է.

*Նավահանգիստ եմ գալիս ես հանդարտ,*
*Ո՛վ էլ հանդիպի՝*
*Ճամփում-ուղեկցում,*
*Եվ իմ հայացքը*
*Ճնշող ու անթարթ,*
*Դեպի կախարդիչ հեռուն եմ գցում:*

**(Թարգմ.՝ Պ. Սևակի)**

Եվ, «կախարդիչ հեռուների» կարոտը սրտում, Եսենինը տենդագին աշխատում է «Պարսկական մոտիվներ» շարքի վրա, գրում է բազմաթիվ նոր բանաստեղծություններ ու պոեմներ, կապ է պահպանում իր մոսկովյան ծանոթների հետ, նամակներ է գրում Թիֆլիս ու Բաքու: Մոսկվա ուղարկած իր նամակներից մեկում նա գրում է. «Այնպես առատ ու հեշտ է գրվում, որ կյանքում հազվադեպ է լինում»[11]: Այդ նույն նամակում կարդում ենք նաև՝ «Հայաստանում ինձանից հայերեն տպագրվում է մի ամբողջ գիրք»: Սակայն, ցավոք սրտի, մինչև այսօր էլ հայտնի չէ այդ գրքի ճակատագիրը: Նույն օրերին Եսենինի գրած մեկ այլ նամակից տեղեկանում ենք, որ Հայաստանից նրան ուղարկել են 400 ռուբլի, սակայն ինքն այդ գումարը դեռ չի ստացել: Եվ դա կապելով իր հասցեն հաճախակի փոփոխելու հետ՝ նա Գ. Ա. Բենիսլավսկայային խնդրում է, որ եթե վերջինս այդ դրամը ստանա, ապա անպայման ուղարկի Բաթում[12]: Սակայն այդ գումարը Հայաստանից ո՞վ էր ուղարկել նրան, դարձյալ մնում է անհայտ: Այստեղ կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ հայերեն գրքի հրատարակության և այդ 400 ռուբլու միջև մի ընդհանուր կապ կա, որը մինչև այսօր էլ մնում է հանգուցված:

Եսենինը Բաթումում մնում է մինչև 1925 թ. փետրվարի սկիզբը, ապա մեկնում է Թիֆլիս և նույն ամսվա վերջերին հասնում Մոսկվա: Մի կարճ ժամանակ այնտեղ անցկացնելուց հետո կրկին վերադառնում է Բաքու և ապրիլի սկզբից մինչև մայիսի վերջը մնում այնտեղ: Այդ ժամանակ էլ «Բակինսկի ռաբոչի» թերթի խմբագիր, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Պ. Ի. Չագինը Ս. Մ. Կիրովի խորհրդով նրան ցույց է տալիս Բաքվի տեսարժան վայրերը, որոնք գրեթե նույն պատրանքն

[11] **С. А. Есенин**. Собр. соч., том VI, էջ 169:

[12] Նույն տեղում, հատ. VI, էջ 165:

են ստեղծում, ինչ կստանար բանաստեղծը Շիրազ ու Թեհրան քաղաքների պատկերները դիտելիս: Ծանոթանալով արևելյան համայնապատկերին՝ Եսենինը բավարարվում է դրանով ու հրաժարվում Իրան մեկնելու մտադրությունից:

1925 թ. ամռանը Եսենինը ծանր կանխազգացումներով ու մեծ տագնապով մեկնում է Մոսկվա՝ իր բարեկամներին գրկելով «վերջին անգամ սիրով անշեջ» և ասելով.

*Երկյուղ կա իմ հոգում հիմա և փրփմություն կա իմ հոգում...*
*Պաղում է իմ սիրտը կարծես և դժվար եմ ուրախանում...*

Կովկասը, փաստորեն, Եսենինի համար դարձավ այն, ինչ ժամանակին Բոլդինոն՝ Պուշկինի: Նա այստեղ ունեցավ իր «Բոլդինյան աշունը», գրեց իր լավագույն բանաստեղծությունների ու պոեմների մի զգալի մասը, որոնք տպագրվել են «Բակինսկի ռաբոչի» և «Զարյա Վոստոկա» թերթերում ու տարբեր հանդեսներում: Թիֆլիսում և Բաքվում 1925-ին հրատարակվել են «Страна Советская» և «Русь Советская» ժողովածուները, որոնք ջերմությամբ են ընդունվել ընթերցողների կողմից:

Հարուստ տպավորություններով և բանաստեղծական մեծ ավարով Եսենինը վերադարձել է Մոսկվա և ձեռնարկել իր ստեղծագործությունների եռհատորյակի պատրաստման աշխատանքները:

Նույն թվականի դեկտեմբերի 23-ի երեկոյան Եսենինը Մոսկվայից գնացքով ուղևորվել է Լենինգրադ, հաջորդ օրը, իջևանելով «Անգլետեր» (ներկայումս՝ «Աստորիա») հյուրանոցում, նա արդեն պետրոգրադյան իր ծանոթների ու մտերիմների շրջանում էր:

Լենինգրադում նա ցանկանում էր մնալ մինչև ամառ, որից հե-

տո՝ մեկնել Իտալիա՝ Մաքսիմ Գորկու մոտ: Սակայն այդ ամենն, ավա՜ղ, ի դերև ելան: Այստեղ՝ «Անգլետեր» հյուրանոցում, նա ապրեց ընդամենը չորս օր: Դեկտեմբերի 27-ի գիշերը գրելու մեծ կիրքը նրան մղեց իր վերջին բանաստեղծությունը թղթին հանձնելու սեփական արյունով:

Առավոտյան, երբ բանաստեղծ Վ. Ի. Էռլիխն ու Ե. Ա. Ուստինովան նրա մոտ են գալիս, Ս. Եսենինը վերջինիս գանգատվում է, որ հյուրանոցում ո՛չ թանաք կա, ո՛չ էլ թանաքաման՝ ցույց տալով իր ձեռքի դաստակի կտրվածքը, որտեղից արյուն է հանել՝ գրելու համար: Ե. Ա. Ուստինովան, տեսնելով այդ, խիստ զայրացել է ու հանդիմանանքով ասել՝ մի՞թե հնարավոր չէր սպասել ու հետո գրել: Իսկ Եսենինը նրան պատասխանել է՝ իսկ ես հաշվապա՞հ եմ, ինչ է, որ գործս հետաձգեմ վաղվան: Դրանով էլ այդ զրույցն ավարտվել է: Հետո Եսենինը սեղանին դրված ծոցատետրից պոկել է մի թերթիկ և, հեռվից ցույց տալով, որ բանաստեղծություն է, քառածալ է արել ու խցկել Էռլիխի պիջակի գրպանը, ասելով՝ սա քեզ: Վ. Ի. Էռլիխը ձեռքը տարել է թղթին, բայց Եսենինը նրան կանխել է. «Թո՛ղ մնա, հետո կկարդաս»: Այսպես նրանք հրաժեշտ են տվել միմյանց:

Նույն օրը երեկոյան նրանք նորից են այցելում Եսենինին, միասին ընթրում են և, լինելով շատ հոգնած, շուտ հեռանում են՝ նրան թողնելով մենակ[13]:

Նրանց գնալուց հետո, մինչև այսօր, ոչ ոք չգիտե, թե այդ գիշեր ի՞նչ է կատարվել «Անգլետեր» հյուրանոցում, մասնավորապես Եսենինի զբաղեցրած № 5 սենյակում: Միայն դեկտեմբերի 28-ի առավոտյան ահեղ բոթը ցնցում է ողջ Ռուսաստանը. Եսենինը ինքնասպան է եղել...

---

[13] Воспоминания о Сергее Есенине, М., 1975, էջ 457-458:

Վ. Ի. Էռլիխը, այդ գույժն առնելուն պես, հիշում է իր ծոցագրպանում եղած Եսենինի՝ արյունով գրված բանաստեղծությունը, որը հանում է ու կարդում.

*Մնաս բարո՜վ, իմ բարեկամ, մնաս բարով,*
*Թանկագի՛նս, իմ սրտի մեջ ես դու մնում,*
*Կանխարեսված այս բաժանումը շատ շուտով*
*Մեզ առջևում նոր հանդիպում է խոստանում:*

*Մնաս բարո՜վ, իմ բարեկամ, անխոս, անձեռք,*
*Դու մի թախծիր, վիշտ մի բարդիր քո հոնքերին,*
*Այս աշխարհում մեռնելն, այո՛, նոր չէ երբեք,*
*Բայց ապրելն էլ, անշուշտ, նոր չէ բոլորովին:*

**(Թարգմ.՝ Վ. Դավթյանի)**

Ահա այսպես լռել է «Ռուսաստանի քնարական սիրտը», կյանքից վաղաժամ հեռացել է աշխարհի մեծագույն բանաստեղծներից մեկը, որի երգերն այսօր էլ, նրա եղերական մահվանից իննսուն տասնամյակ անց, «բրոնզի պես զնգում» ու իրենց քաղցրալուր հնչյուններով կախարդում են պոեզիայի միլիոնավոր սիրահարների սրտերը:

Դեկտեմբերի 29-ին Լենինգրադի գրողների տանը կատարվում է քաղաքացիական հոգեհանգիստ, իսկ 30-ին Ս. Ա. Եսենինի աճյունը տեղափոխվում է Մոսկվա և հրաժեշտի համար դրվում Մամուլի տանը: Հուղարկավորությունը տեղի է ունեցել դեկտեմբերի 31-ին, Մոսկվայի Վագանկովյի գերեզմանատանը:

Ս. Եսենինի եղերական վախճանից հետո, ինչպես նրա մա-

սին գրված մահախոսականներում ու հրաժեշտի խոսքերում, այնպես էլ առանձին հոդվածներում ու գրքերում, տարբեր կարծիքներ են հայտնվել, ոմանք նույնիսկ փորձել են նսեմացնել նրա բնատուր տաղանդը և խոր հայրենասիրությունը, ոմանք էլ մերժել են նրա զրնգուն քնարի կախարդական հնչյունները ընդհանրապես: Այդ հրապարակումներից երկուսը՝ Լ. Ն. Տրոցկու («Սերգեյ Եսենինի հիշատակին», «Պրավդա», 19 հունվարի 1926 թ.) և Ն. Ի. Բուխարինի («Չար գրառումներ», «Պրավդա», 12 հունվարի 1927 թ.) հոդվածները տասնամյակներ շարունակ, ընդհուպ մինչև 1950-ականները, բացասական դեր են կատարել Եսենինի գրական ժառանգության գնահատման գործում: Լ. Տրոցկին իր այդ հոդվածում այն կարծիքն է հայտնել, որ իբրև Եսենինը ինքնասպանություն է գործել, որովհետև «նա հեղափոխության բանաստեղծ չէր... Նա ինքնասպան է եղել, որովհետև հաշտ չէր հեղափոխության հետ... Եսենինը մահվան էր ձգտում համարյա իր ստեղծագործական կյանքի առաջին իսկ տարիներից»:

Ավելի հեռուն է գնացել Ն. Բուխարինը, որն իրոք իր չար «գրառումներում» նշել է, թե «Եսենինը իր ողջ զգացմունքային արմատներով շրջապատող կյանքից ներծծել է բոլորովին այլ հյութեր, և խորհրդային ձգտումները նրա ուժերից վեր էին»: Չմոռանանք ասել, որ Տրոցկին և Բուխարինը այն տարիներին Խորհրդային Միությունում զբաղեցնում էին կուսակցական և պետական բարձր պաշտոններ՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ու քաղբյուրոյի անդամներ էին, իսկ վերջինս նաև «Պրավդա» թերթի գլխավոր խմբագիրն էր: Ուստի, նրանց այդ բնութագրումները այն ժամանակվա համար կարևոր են եղել, որոնց հիման վրա էլ նույն տարիներին շրջապատում եղած բանաստեղծների ու գրականագետների կողմից Եսենինին տրվել են աննպաստ գնահատականներ. այսպես, օրինակ՝ «Եսենինը ցանկանում էր լինել հեղափո-

խության հետ, բայց չկարողացավ... Նա չկարողացավ կյանքին համընթաց քայլել, ուստի կյանքը երես թեքեց նրանից... Եվ նա ինքնասպան եղավ» (Վ. Պոլոնսկի): «Եսենինը ինքնասպանության բանաստեղծ է», «Եսենինը որպես բանաստեղծ ապրեց ու մեռավ «Բոհեմական Մոսկվայում»» (Ա. Կրուչկինին) և այլն:

Հակառակի պես, արտահայտված այս տեսակետների «ճշմարտացիությունը» հաստատելու են գալիս նաև այն բազմաթիվ ինքնասպանությունները, որոնք այդ ժամանակ տեղի էին ունենում Մոսկվայում և այլուր: Եսենինի հուղարկավորությունից մեկ տարի էլ չանցած, 1926 թ. դեկտեմբերի 3-ին, նրա շիրմի վրա ինքնասպան է լինում «Բեդնոտա» թերթի խմբագրության աշխատակից Գալինա Բենիսլավսկայան, բանաստեղծի նախկին կինը: Այդ օրերին ինքնասպանությունների թիվն այնքան է մեծանում, որ Վլ. Մայակովսկուն առիթ է տալիս գրելու իր «Սերգեյ Եսենինին» հանրահայտ բանաստեղծությունը, որը կարևոր դեր է կատարել անկումային տրամադրություններով լի Ռուսաստանում ինքնասպանությունները կանխելու գործում:

Սակայն, հակառակ եղած թյուր կարծիքների, նույն օրերին Եսենինի զտարյուն ազգային քնարը բարձր են գնահատել բազմաթիվ նշանավոր գրողներ ու գիտնականներ: Օրինակ՝ Ալ. Տոլստոյը գրել է. «Մեռավ խոշորագույն բանաստեղծը: Նրա ստեղծագործությունները կարծես թե երկու բռով շռայլորեն շաղ տված հոգու գանձեր լինեն»: Իսկ Մ. Գորկին, առնելով նրա մահվան բոթը, խոր վշտով բացականչել է. «Մենք կորցրինք ռուս մեծ բանաստեղծին»: Ս. Եսենինի տաղանդը բարձր են գնահատել նաև Ս. Գորոդեցկին. Ն. Տիխոնովը, Ալ. Վորոնսկին, Վ. Ռոժդեստվենսկին, Ն. Ասեևը և ուրիշներ: Վերջին տասնամյակներում Եսենինի մասին արժեքավոր աշխատություններ են գրել Կ. Զելինսկին, Յու. Պրոկուշևը, Ա. Կոշեցկինը, Վ. Ֆյոդորովը և այլք: Նրա

մասին լույս են տեսել հուշերի երկհատորյակ[14], «Եսենինի կյանքը»[15] և այլ մնայուն աշխատություններ:

Այս ամենով հանդերձ, շուրջ երեք տասնամյակ, Եսենինի գրական ժառանգությունը մղվել է ետին պլան, նույնիսկ մատնվել մոռացության: Միայն 1950-ականներից են սկսվել տպագրվել նրա երկերը: Այդ տարիների հրատարակությունների շարքում առանձնանում է 1955 թ. լույս ընծայված Ս. Եսենինի երկերի երկհատորյակը, որը գիտական պատշաճ մակարդակով կազմել, ծանոթագրել ու տպագրության են պատրաստել Կ. Զելինսկին ու Պ. Չագինը, ընդարձակ առաջաբան է գրել Կ. Զելինսկին (տե՛ս **Сергей Есенин**, Сочинения в двух томах, Москва, госиздат «Художественной литературы», 1955): Ի դեպ, նշենք նաև, որ Ս. Եսենինի բանաստեղծությունների հայերեն առաջին «Հատընտիրը» (1961 թ.) թարգմանվել ու կազմվել է ըստ այս երկհատորյակի:

Այս հատորներից հետո Խորհրդային անծայրածիր երկրի տարբեր հանրապետություններում ու Ռուսաստանի մարզերում, խոշոր քաղաքներում, ամենատարբեր հրատարակչությունների կողմից մեկը մյուսի ետևից լույս են տեսնում նրա բանաստեղծությունները, թարգմանվում ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով: Այդ հրատարակությունների շարքում առանձնանում է Երևանում 1975 թ., «Խուդոժեստվեննայա լիտերատուրա» և «Սովետական գրող» հրատարակչությունների համատեղ ուժերով, 100 հազար օրինակ տպաքանակով, լույս ընծայված Ս. Եսենինի Երկերի

[14] Серия литературных мемуаров. С. А. Есенин в воспоминаниях современников в двух томах, вст. статья, сост. и коментарии А. А. Козловского, том 1, М., «Худ. лит.», 1986, 512 էջ, том 2., М., «Худ. лит.», 1986, 448 էջ:

[15] Жизнь Есенина, рассказывают современники, составитель, автор вступительной статьи и примечаний С. П. Кошечкин, М., изд. «Правда», 1988, 608 էջ:

միհատորյակը: Այս հրատարակությունը նախորդներից տարբերվում է իր ուրույն կառուցվածքով: Նրանում ժամանակագրական կարգով ներկայացված են Եսենինի կենդանության օրոք լույս տեսած նրա հեղինակային, մեկը մյուսին չկրկնող, 10 ժողովածուները ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ականավոր գրականագետ Վ. Բազանովի խմբագրությամբ ու ընդարձակ առաջաբանով, որն ունեցել է նաև երկրորդ հրատարակություն (Եր., 1978):

Այնուամենայնիվ, եղած գրքերի մեջ իրենց գիտականությամբ արժեքավորվում է չորս հրատարակություն, որոնցից առաջինը հեղինակի կազմած եռհատորյակն է, ապա 1960-ականներին տպագրված հինգհատորյակները (երկու անգամ՝ 1961-1962 և 1966-1967 թթ. ) և վերջին վեցհատորյակը[16]: Այս հրատարակության հիմքում ընկած է 1925 թ. Եսենինի կողմից պատրաստված «Բանաստեղծությունների» եռհատորյակը, որի տպագրությունը, դժբախտաբար, իրականացվել է բանաստեղծի եղերական մահից հետո միայն[17]: Եսենինն իր այդ ժողովածուն կազմելիս ընտրել է այն բանաստեղծությունները, որոնք նա համարել է հաջողված ու ավարտված: Նա այստեղ չի զետեղել իր երկերի մոտ մեկ երրորդ մասը:

Եռհատորյակից դուրս մնացած այդ գործերի թվում կան ինչպես վաղ շրջանում, այնպես էլ ընդհուպ մինչև մահը նրա կողմից գրված ստեղծագործություններ: 1925 թ. աշնանը բանաստեղծը սկսել է և՛ մամուլում տպագրված իր նոր ստեղծագործությունները, և՛ հները վերամշակել ու աստիճանաբար զետեղել հիշյալ

[16] Տե՛ս **С. А. Есенин.** Собрание сочинений в шести томах, под общей редакцией В. Г. Базанова, вступительная статья Ю. Л. Прокушева, Москва, «Художественная литература», 1977-1980:

[17] Տե՛ս **Сергей Есенин.** Собрание стихотворений, том. 1-4, Москва-Ленинград, 1926-1927:

հատորներում: Սակայն նա չի կարողացել այդ գործն ավարտին հասցնել ու լիակատար դարձնել իր երկերի ժողովածուն: Շատ ստեղծագործություններ մնացել են անմշակ, ձեռագիր վիճակում կամ սփռված մամուլի էջերում:

Եսենինի մահից հետո Պետհրատը «Ընտիր բանաստեղծությունների ժողովածուն» «լիակատար» դարձնելու միտումով որոշում է, բանաստեղծի կազմած եռհատորից բացի, կազմել նաև լրացուցիչ մեկ հատոր՝ 4-րդը, դրա մեջ ընդգրկելով ձեռագիր մնացած և մամուլում սփռված բոլոր այն բանաստեղծությունները, որոնք Եսենինը դուրս էր թողել իր կազմած հատորներից կամ չէր հասցրել վերամշակել:

«Բանաստեղծություններ և արձակ» վերտառությամբ այդ լրացուցիչ հատորը լույս է տեսել 1927 թվականին: Կազմողը նախորդ երեք հատորների խմբագիր, բանաստեղծի մտերիմ ընկեր, գրող Իվան Վասիլևիչ Եվդոկիմովն (1887-1941) էր: Ժողովածուն ունի հետևյալ բովանդակությունը. ա) Բանաստեղծություններ, որոնք տարբեր պատճառներով գրողի կողմից չեն ընդգրկվել եռհատորյակում, բ) Մոռացված և հին ամսագրերում ու թերթերում տպագրված բանաստեղծություններ, գ) Տարբեր անձանցից ստացված, ալբոմներից հանված գործեր, որոնք չէին տպագրվել մինչ այդ և դ) Եսմահու հայտնաբերված բանաստեղծություններ: Այդ ստեղծագործությունները, որոնք մեծ մասամբ թվագրված չեն եղել, հիշյալ հատորում դասավորված են ժամանակագրական կարգով. մի դեպքում հաշվի է առնվել մամուլում դրանց տպագրության ժամանակը, իսկ մյուս դեպքում՝ ձեռագրերում պահպանված հեղինակային տարեթվերը: Այդ գրքում ընդգրկված է 62 բանաստեղծություն, այդ թվում և ալբոմներում ու գրքերի վրա եղած գրառումները: Դրանց մի մասը՝ ժամանակին՝ մինչև հիշյալ հատորի լույս տեսնելը, թերթերում, հանդեսներում ու ժո-

ղովածուներում տպագրվածները, բնականաբար, նույնությամբ տեղ են գտել հիշյալ 4-րդ հատորում: Նրա առաջաբանում Ի. Վ. Եվդոկիմովը գրում է, որ ինքը հնարավորություն չի ունեցել օգտըվելու բանաստեղծի ձեռագիր ժառանգությունից, քանի որ այն պահպանվելիս է եղել պետի քրոջ՝ Ե. Ա. Եսենինայի և տարբեր անձանց մոտ: Ուստի, պետք է ենթադրել, նշում է նա, որ 4-րդ հատորը ևս ամբողջությամբ չի սպառում այն ամենը, ինչ գրել է Եսենինը, հնարավոր է, որ լինեն առանձին բացթողումներ, հետագայում գտնվեն նոր գործեր, տարբերակներ ու այլընթերցումներ:

Ի. Վ. Եվդոկիմովի ենթադրությունները ճիշտ են դուրս եկել. հիշյալ քառհատորյակի հրատարակությունից հետո, անցած շուրջ 50 տարիների ընթացքում, մինչև վերջին վեցհատորյակի տպագրվելը, բանաստեղծի ընկերների ու բարեկամների, հետազոտողների, ինչպես նաև ընթերցողների ջանքերով գտնվել և մամուլում տպագրվել են Եսենինի կորած համարվող ու մոռացության մատնված շատ բանաստեղծություններ ու սևագրություններ:

* * *

Հատկապես մեծ թվով նոր նյութեր են հայտնաբերվել 1950-70-ականներին: Այդ տարիներին նորանոր հրապարակումներով հանդես են եկել Եսենինի քույրերը՝ Ե. Ա. և Ա. Ա. Եսենինաները, Կ. Զելինսկին, Յու. Պրոկուշևը, Վ. Բելոուսովը, Դ. Զոլոտնիցկին, Վ. Զեմսկովը, Վ. Աստախովը, Ն. Խովրյակովը, Տ. Կոնսպացկայան և շատ ուրիշներ: Նորահայտ ոտանավորների շարքում լայնորեն ներկայացվել են նաև բանաստեղծի վաղ շրջանի գործերը, դրանց մեջ հատկապես պետք է առանձնացնել «Հիվանդոտ խոհեր» շարքը: Այն բաղկացած է 16 ոտանավորից, որոնցից 15-ը նախկինում հայտնի չեն եղել:

«Հիվանդոտ խոհեր» վերտառությամբ այդ ձեռագիր տետրը մինչև 1965 թ. պահպանվել է Ռյազանի բնակչուհի Մ. Դ. Իլյինայի ընտանիքում: 1912 թ. ամռանը Եսենինն իր այդ տետրը տվել էր նրա եղբորը՝ իր դասընկեր Ս. Դ. Իլյինին, որը զոհվել է Հայրենական մեծ պատերազմում, և այդպես էլ հիշյալ տետրը մնացել է նրա քրոջ մոտ: Իսկ վերջինս 1965 թ., երբ Կոստանտինովոյում բացվում է Եսենինի տուն-թանգարանը, այն հանձնում է նորաստեղծ թանգարանին:

Ներկայումս շուրջ 175 բանաստեղծություն է հաշվվում, որոնք չեն զետեղվել Եսենինի մինչև 1978 թ. լույս տեսած հիմնական ժողովածուներում[18]: Դրանք գրեթե ամբողջությամբ ընդգրկված են վերջին վեցհատորյակի 4-րդ հատորում, որը Եսենինի բանաստեղծական ժառանգության եզրափակիչ հատորն է և պարունակում է 169 բանաստեղծություն[19]: Այն բացվում է «Պոետը»

[18] Բացի նշված հինգհատորյակներից ու վերջին վեցհատորյակից, ուշադրության արժանի են նաև Ս. Ա. Եսենինի երկերի այլ ամբողջական հրատարակություններ, որոնցից կարելի է առանձնացնել Ա. Ա. Կոզլովսկու և Յու. Լ. Պրոկուշևի կազմած ու ծանոթագրած եռհատորյակը՝ Յու. Պրոկուշևի ընդարձակ առաջաբանով, որը տպագրվել է 1.280.000 օրինակ տպաքանակով և ունեցել է երեք հրատարակություն (տե՛ս **Сергей Есенин,** Собрание сочинений в трех томах, под общей редакцией Е. А. Есениной, А. А. Есениной, С. А. Васильева, С. А. Кошечкина, Ю. Л. Прокушева, В. Д. Феодорова, Библиотека «Огонька», изд. «Правды», Москва, 1970), ինչպես նաև՝ **С. А. Есенин,** Стихотворения и поэмы, вступ. статья И. С. Эвентова, сост., подг. текста и примеч. М. С. Эвентова и И. В. Алексахиной. Л., изд. Совет. писатель, 1986 (Б-ка поэта, БС): Արժեքավոր է նաև 1990 թ. հրատարակված երկհարտորյակը՝ 300.000 օրինակ տպաքանակով, որը կազմել, ծանոթագրել և դրա համար առաջաբան է գրել Յու. Լ. Պրոկուշևը (տե՛ս **Сергей Есенин,** Собрание сочинений в двух томах, Москва, изд. «Советская Россия» и «Современник», 1990):

[19] Մյուս վեց բանաստեղծությունները «Հավելում» ընդհանուր խորագրով, որպես առանձին բաժին, ներկայացվել է Եսենինի վեցհատորյակի 6-րդ հատորում՝ տե՛ս **С. А. Есенин,** Собр. соч., том. VI, М., 1980, էջ 391-397:

ոտանավորով և ավարտվում Եսենինի «Մնաս բարո՛վ, իմ բարեկամ, մնաս բարով» վերջին ստեղծագործությամբ: Նրանում զետեղված ոտանավորները՝ ինչպես Եսենինի կենդանության օրոք հրատարակվածները, այնպես էլ անտիպները, ներկայացվել են բանաստեղծի ինքնագրերի հիման վրա:

Եսենինի վաղ շրջանի ստեղծագործությունները թվով 49-ն են՝ ներառյալ «Հիվանդոտ խոհեր» շարքը: Ծանոթանալով դրանց հետ՝ դժվար չէ նկատել, թե պատանի բանաստեղծը ո՛ւմ գրքերն է խոր և ուշադիր ընթերցել, ո՛ւմ ազդեցությունն է կրել: Նրա այդ գործերում շնչում են Պուշկինն ու Բլոկը, Լերմոնտովն ու Կոլցովը, Ներկրասովն ու Նադսոնը, Նիկիտինն ու Դրոժկինը և ուրիշներ: Սակայն, չնայած դրան, Եսենինի պատանեկան շրջանի ոտանավորները լուրջ հետաքրքրություն են ներկայացնում և արժանի են ամենայն ուշադրության: Պատանի պոետը այդ տարիքում արդեն կարողացել է նկատել ու անխաթար վերարտադրել բնության գեղեցիկ պատկերները: Նա խոր սիրով ու անանց կարոտով երգել է հայրենի գյուղի «գերանակապ խրճիթներն» ու նրանց շուրջ «ծաղկած ցարասենիները», «ժամատներ թվացող դեղին դեզերն» ու «վառվող մոմերի նման ուղին լուսավորող ճերմակ կեչիները», «արևամուտի ծիրանավառ գոտին» ու «արշալույսների լաջվարդ քողը», «գետակի արծաթ խոխոջյունն» ու «հեռավոր աստղերի դողը»...

Այդ ստեղծագործությունների վրա նկատելի է նաև Եսենինի՝ իր տատից կրած խոր ազդեցությունը: «Նա երեք տարեկանից իմ գլուխն էր լցնում հին, նահապետական-եկեղեցական մշակույթը...,– հետագայում գրել է Եսենինը:– Ութ տարեկանից տատս ինձ իր հետ տանում էր զանազան սրբավայրեր... Ես նրա ձեռնափայտից բռնած՝ հազիվ էի քարշ տալիս հոգնած ոտքերս,– հիշում է բանաստեղծը,– իսկ նա հա ասում էր. «Արի՛, արի՛, գառնուկս,

աստված քեզ երջանիկ բախտ կտա»»[20]: Մեկ այլ առիթով Եսենինը գրել է. «Հաճախակի էին մեր տանը հավաքվում կույր երգասացները, որոնք, գյուղից գյուղ շրջելով, երգում էին հոգևոր երգեր գեղեցիկ դրախտի, Ղազարի և Միկոլայի սիրո մասին: Իսկ իմ դայակը պատմում էր հեքիաթներ, շաբաթ և կիրակի օրերին նա ինձ ուսուցանում էր Աստվածաշունչը և անում սրբազան պատմություններ: Պապս երգում էր հին ու թախծալի երկարաձիգ երգեր»[21]:

Ահա այս ոգով է դաստիարակվել Եսենինը մանկության օրերին: Դրա հետ մեկտեղ նա ամռան գիշերներին լսել ու տեսել է ջահել աղջիկների ու տղաների հարմոնի նվագակցությամբ հնչող քաղցրալուր երգերն ու պարերը, որոնց անմիջական տպավորության ներքո էլ, գուցե, գրվել են հետևյալ տողերը.

*Հնչի՛ր, հարմոն, աղջի՛կ, պնից դուրս ե՛կ համարձակ,*
*Դիմավորի՛ր նշանածիդ ցանկապատի պակ:*

*Կապույտ կրակն է բռնկվել իմ սրտի խորքում,*
*Կապույտ աչքերն է հիմա հարմոնն իմ երգում:*

*Անեղնագործ թաշկինա՞կդ է հեռվից ծածանվում,*
*Թե՞ լուսայգն է լճի վրա նախշերն իր փռում:*

*Հնչի՛ր, հարմոն, ու պարածի՛ր քո ձայնն ամեն կողմ,*
*Գեղեցկուհին նշանածի երգը լսի թող:*

1912

**(Թարգմ.՝ Հ. Սահյանի)**

[20] Նույն տեղում, էջ 125:

[21] Նույն տեղում, էջ 205 և 208:

Եսենինի պատանեկան շրջանի ստեղծագործական կյանքի ինքնատիպ ու հետաքրքիր երևույթներից պետք է համարել «Հիվանդոտ խոհեր» շարքը: Հատկապես այս շարքում պոետը իրականությունը ներկայացնում է մռայլ գույներով: Նա իրեն համարում է «ծանր ու անհուն տանջանքի և դառն բախտի» երգիչ: «Դառնության արցունքներ սնող», «անբախտ ու սառնաշունչ խոհերը» անվերջ տանջում են նրա «հոգնած հոգին» և «հավետ փակում ճամփան»: Նրա համար հեռաստանները մառախլապատ են, ամենուր թանձր խավարն է տիրում, «ճերմակ մշուշները» տանջում և նրա սրտին հասցնում են «դառն վերքեր»: Եվ այդպես, պատանի բանաստեղծն անվերջ բողոքում է «ուրախ երգերը խլացնող» վշտերի դեմ: Պարզ է, այս ամենը ոչ թե նա ապրել ու զգացել էր, այլ դրանք գրքերից եկող ազդեցություններ էին, որոնք դեռ չէր կարողացել հաղթահարել:

Սակայն զանազան բանաստեղծներից կրած այս ակնհայտ ազդեցությունների կողքին կան նաև ինքնուրույն պատկերներ ու մտքեր, բանաստեղծական գեղեցիկ տողեր: Հավանական է այն կարծիքը, ըստ որի, երբ Եսենինը գյուղից 1912-ին մեկնել է Մոսկվա, նպատակ է ունեցել «Հիվանդոտ խոհերը» հրատարակել որպես առանձին ժողովածու, բայց ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է այդ մտքից, հետագայում նույնիսկ մոռացել է հիշյալ տետրի գոյության մասին և չի ընդգրկել այն իր կազմած եռահատորյակում:

Եսենինի «Հիվանդոտ խոհեր» շարքը և նրա վաղ շրջանի մյուս ստեղծագործությունները, ներառյալ նաև 1914-1915 թթ. գրած բանաստեղծությունները, որոնց ընդհանուր թիվն անցնում է 120-ից, այժմ տպագրված են վեցհատորյակում: Դրանցից շուրջ 40-ը ժամանակին թարգմանվել է հայերեն և զետեղվել վերոհիշյալ «Հատընտիրում»: Այնտեղ ներկայացված են նաև Ս.

Եսենինի հետագայում գրած շուրջ 160 այլ բանաստեղծություններ ու պոեմներ, որոնք թարգմանվել են Հ. Սահյանի, Գ. Էմինի, Պ. Սևակի, Վ. Դավթյանի և Գ. Բանդուրյանի կողմից: Նշենք նաև, որ Եսենինի բանաստեղծություններից կատարված հայերեն մի շարք թարգմանություններ էլ տպագրվել են դրանից հետո հրատարակված «Ընտիր էջեր ռուս սովետական պոեզիայի» (Եր., Հայպետհրատ, 1963) ժողովածուում:

Ս. Եսենինի բազմաթիվ բանաստեղծություններ նորովի է թարգմանել բանաստեղծ ու գրականագետ Հրաչյա Թամրազյանը և հրատարակել «Ուսանողի գրադարան» մատենաշարով լույս տեսած «XX դարասկզբի ռուսական բանաստեղծություն» (Եր., ԵՊՀ հրատ., 1982) անթոլոգիայում: Վերջին երկու տասնամյակների ընթացքում Եսենինի որոշ ստեղծագործությունների թարգմանությամբ հանդես են եկել Աղվան Վիրաբյանը[22], Վիգեն Բաբայանը[23], Արտեմ Սարգսյանը[24], Արարատ Աղասյանը[25] և ուրիշներ: Սակայն պետք է նկատել, որ նրանց կատարած փոքրաթիվ այդ թարգմանությունների շուրջ կեսը ավելի շուտ փոխադրություններ են, քան թե թարգմանություններ: Նույնը կարելի է ասել նաև մյուս թարգմանությունների մի զգալի մասի վերաբերյալ, որոնք տեղ են գտել վերոհիշյալ հայերեն հրատարակություններում:

---

[22] **Աղվան Վիրաբյան,** Կարոտների սփոփանք, Երևան, 2002, էջ 165-177:

[23] **Վիգեն Բաբայան,** Բազմանվագ, Երևան, 2003, էջ 179-192:

[24] **Արտեմ Սարգսյան,** Ամենը քեզ, հատ. Բ, Երևան, 2005, էջ 87-92:

[25] **Արարատ Աղասյան,** Ռուսական պոեզիայի գանձարանից, Երևան, 2013, էջ 134-145:

* * *

Մենք Ս. Եսենինի վաղ շրջանի բանաստեղծությունների թարգմանությունն սկսել ենք անցյալ դարի վերջերից: Մեր որոշ թվով թարգմանություններ և «Հիվանդոտ խոհեր» շարքն ամբողջությամբ տպագրվել են գրական մամուլում: Մի քանի թարգմանություններ էլ տեղ են գտել մեր հեղինակած ժողովածուներում: Սակայն դրանք մեր կատարած թարգմանությունների մի մասն են միայն: Այժմ ներկայացնում ենք Եսենինի վաղ շրջանի ստեղծագործությունների մեծ մասը՝ թվով 100 բանաստեղծություն: Շուրջ մեկ տասնյակ բանաստեղծություններ էլ թարգմանել ենք Եսենինի հետագա տարիների (1916-1919 թթ.) գրածներից, որոնք ցարդ հայերեն չեն թարգմանվել: Չորս բանաստեղծություն էլ թարգմանել ենք նրա՝ կյանքի վերջին օրերին գրածներից, որոնցից երկուսը հայերեն են հնչեցվում առաջին անգամ:

Մենք աշխատել ենք հարազատ մնալ եսենինյան բնագրերի բովանդակությանն ու էությանը, հնարավորության սահմաններում պահպանել ենք նաև այդ բանաստեղծությունների չափն ու ռիթմը: Պետք է նշել, որ Եսենինի վաղ շրջանի գործերը, չնայած գրված են պարզ ու անպաճույճ լեզվով, ունեն զգալի բարդություններ, կրում են ժողովրդական բանավոր խոսքի, բառ ու բանի ազդեցությունները, օգտագործված են բարբառային շատ բառեր ու արտահայտություններ, սլավոնական ու հին ռուսական դարձվածքներ, կրոնական ու եկեղեցական հասկացություններ ու եզրույթներ, որոնք բավականին դժվարացնում են դրանց հայերենացումը:

Այդուհանդերձ, մենք աշխատել ենք հաղթահարել այդ դժվարությունները և փորձել Եսենինի վաղ շրջանի ստեղծագործությունները ներկայացնել բնագրերին համահունչ: Դրանք

հիմնականում այն բանաստեղծություններն են, որոնք մինչև այժմ ուրիշների կողմից հայերեն չեն թարգմանվել: Այդ շրջանի շուրջ մեկ տասնյակ բանաստեղծություններ ու պոեմներ, որոնցից են, օրինակ, «Бельгия», «Греция», «Польша», «Город», «Марфа Посадница», «Песнь о Евпатии Коловрате», «Ус» և այլն, չենք թարգմանել ո՛չ թե դժվարությունների կամ էլ թարգմանված լինելու պատճառով, այլ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանք հիմնականում նվիրված են Առաջին աշխարհամարտի անցքերին և, մեր կարծիքով, գեղարվեստական վարպետության առումով զիջում են հեղինակի վաղ շրջանի մյուս ստեղծագործություններին, ուստի գիտակցաբար թողել ենք մի կողմ: Ուրիշների կողմից ևս դրանք առայժմ հայերեն չեն թարգմանվել:

* * *

Սույն ժողովածուում ընդգրկված բանաստեղծությունները դասավորված են ժամանակագրական կարգով, այնպես, ինչպես կատարված է ռուսերեն վեցհատորյակում: Եսենինի մի շարք բանաստեղծություններ, որ անցյալ հինգհատորյակներում ունեն գրության տարբեր թվականներ, այստեղ ճշգրտված և ուղղված են: Մենք ևս, առաջնորդվելով վերջին վեցհատորյակով, ուղղել ենք մեր թարգմանությունների նախկին թվագրումները և համապատասխանեցրել վեցհատորյակում օգտագործված թվականների հետ: Միայն ավելացնենք, որ փակագծերում առնված թվականները հրատարակիչներինն են ու մոտավոր, իսկ առանց փակագծերի դրվածները հեղինակինն են և ճիշտ: Հայերեն տեքստերին զուգահեռ ներկայացված են նաև ռուսերեն բնագրերը: Մեզ թվում է, մեր ներկա թարգմանությունները, իրենց հնարավոր

թերություններով ու բացթողումներով հանդերձ, կարող են հիմք հանդիսանալ հետագա, ավելի կատարյալ թարգմանությունների համար:

«Սերգեյ Եսենինը Ռուսաստանի պոետական համաստեղության լուսաշող, անմարելի աստղն է»,– այսօր այսպես է բնութագրվում ոչ միայն ռուս, այլև աշխարհի շատ ու շատ ժողովուրդների կողմից սիրված մեծ բանաստեղծը: Ուստի նրա ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները անհրաժեշտ են և միշտ էլ սիրով կընդունվեն ընթերցող լայն շրջանների և հատկապես երիտասարդության կողմից:

Վերջում ավելացնենք, որ Եսենինը, մեծ բանաստեղծ լինելուց բացի, եղել է նաև նվիրված ու անձնազոհ ընկեր, ունեցել է մարդկանց դեպի իրեն ձգելու եզակի անմիջականություն ու ջերմություն: Նա սիրել ու մինչև վերջ հավատացել է իր ընկերներին, մերձավորներին ու բարեկամներին՝ նրանց նկատմամբ ցուցաբերելով հոգատարություն ու սրտացավություն: Այստեղ՝ Կովկասում ևս նրան շրջապատել են նորանոր բարեկամներ ու մտերիմներ, որոնց մեջ, բնականաբար, եղել են նաև բազմաթիվ հայեր: Հետագա ուսումնասիրություններն ու պրպտումները գուցե կբացահայտեն Եսենինի՝ հայ իրականության հետ ունեցած կապերին վերաբերող հետաքրքիր փաստեր, որոնք նոր լույս կսփռեն մեծ բանաստեղծի կյանքի ու գործունեության առանձին կողմերի վրա:



ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆ | *1914 թ.*

# СТИХИ РАННЕГО ПЕРИОДА
# СЕРГЕЯ ЕСЕНИНА
# И ИХ АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ

# ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆԻ
# ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
# ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ
# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* * *

Вот уж вечер. Роса
Блестит на крапиве.
Я стою у дороги,
Прислонившись к иве.

От луны свет большой
Прямо на нашу крышу.
Где-то песнь соловья
Вдалеке я слышу.

Хорошо и тепло,
Как зимой у печки.
И березы стоят,
Как большие свечки.

И вдали за рекой,
Видно, за опушкой,
Сонный сторож стучит
Мертвой колотушкой.

*1910*

* * *

Там, где капустные грядки
Красной водой поливает восход,
Клененочек маленький матке
Зеленое вымя сосет.

*1910*

* * *

Ահա իջավ լուրթ իրիկուն.
Ցողն է ցոլում եղինջներին:
Եվ ես՝ կռթնած ծեր ուռենուն,
Կանգնել եմ լուռ ճամփի եզրին:

Լուսնի լիրն է լույսով իր մեծ
Ուղիղ կախվել մեր տանիքին:
Ինչ-որ մի տեղ կապույտ հեռվից
Երգն եմ լսում ես սոխակի:

Այստեղ որքա՜ն լավ է ու տաք,
Խարույկի մոտ՝ ձմռանն ինչպես:
Կեչիներն են շարվել շիտակ
Վառվող հսկա մոմերի պես:

Ու մութ հեռվում, գետից անդին,
Երևում է փեշն անտառի,
Ուր որ քնատ պահակն իր թին
Զարկում է խուլ բնին ծառի:

*1910*

* * *

Այնտեղ, ուր այգը կաղամբի ձգված
Թմբաշարերն է լաջվարդով օծում,
Փոքրիկ թխկենին՝ շուրթերով հպված,
Մոր կանաչ կուրծքն է մանկան պես ծծում:

*1910*

* * *

Поет зима – аукает,
Мохнатый лес баюкает
Стозвоном сосняка.
Кругом с тоской глубокою
Плывут в страну далекую
Седые облака.

А по двору метелица
Ковром шелковым стелется,
Но больно холодна.
Воробышки игривые,
Как детки сиротливые,
Прижались у окна.

Озябли пташки малые,
Голодные, усталые,
И жмутся поплотней.
А вьюга с ревом бешеным
Стучит по ставням свешенным
И злится все сильней.

И дремлют пташки нежные
Под эти вихри снежные
У мерзлого окна.
И снится им прекрасная,
В улыбках солнца ясная
Красавица весна.

*1910*

* * *

Ձմեռն ինչ-որ երգ է մանում,
Խուլ անտառի քունն է տանում
　　Սոճիների խմբերգով:
Եվ ամենուր թախիծով խոր
Լուռ չվում են երկիր մի նոր
　　Գորշ ամպերը երկնքով:

Իսկ բակով մեկ հողմը պարում,
Իր մետաքսե գորգն է փռում,
　　Կախում սառցե ծոպեր:
Ճնճղուկները ժիր ու կայտառ,
Որբերի պես խեղճ ու անճար,
　　Փեղկերին են կիպ կպել:

Նրանք քաղցած մրսել, հոգնել,
Իրար գգված կուչ են եկել
　　Ու դողում են ցավալի:
Իսկ մրրիկը խենթ հեծեծում,
Լուսամուտի փեղկն է ծեծում
　　Եվ կատաղում ավելի:

Խեղճ հավքերն են հեզ ու քնքուշ,
Այդ բքի տակ ննջում անուշ,
　　Պատուհանի մոտ սառած:
Ու երազում տեսնում են պերճ
Արևի ջինջ ծիծաղի մեջ
　　Գարնան դեմքը ջերմառատ:

*1910*

## ПОДРАЖАНЬЕ ПЕСНЕ

Ты поила коня из горстей в поводу,
Отражаясь, березы ломались в пруду

Я смотрел из окошка на синий платок,
Кудри черные змейно трепал ветерок.

Мне хотелось в мерцании пенистых струй
С алых губ твоих с болью сорвать поцелуй.

Но с лукавой улыбкой, брызнув на меня,
Унеслася ты вскачь, удилами звеня.

В пряже солнечных дней время выткало нить.
Мимо окон тебя понесли хоронить.

И под плач панихид, под кадильный канон,
Все мне чудился тихий раскованный звон.

*1910*

## ԵՐԳԻ ՆՄԱՆԱԿՈՒՄ

Բուռ-բուռ առնում ջրում էիր դու քո ձիուն՝ սանձը վրան,
Իսկ լճակում կեչիների շողքն էր բեկվում ճերմակիրան:

Ես նայեցի պատուհանից. գլխաշորդ էր ծփում կապույտ
Ու քամին էր օձագալար գանգուրներդ ձաղկում անփույթ:

Ես մոտեցա, որ փրփրած հորդ շիթերի թրթիռներում
Քո ալ շուրթից համբույր քաղեմ՝ ցավեցնելով կուրծքդ եռուն:

Իսկ դու, մի նենգ ժպիտ դեմքիդ, վրաս առատ ջուր շաղ տալով,
Թամբին թռար ու սլացար՝ զանգակներդ իրար տալով:

Բայց արևի հինած ցանցից, ժամանակն իր թելն է հանում...
Պատուհանիս տակով մի օր քո դին էին թաղման տանում:

Ու խնկաբույր սաղմոսների և ողբաձայն երգերի տակ
Ասես առա ես հրաշքով այն զանգերի զնգոցն հստակ:

*1910*

* * *

Выткался на озере алый свет зари.
На бору со звонами плачут глухари.

Плачет где-то иволга, схоронясь в дупло.
Только мне не плачется – на душе светло.

Знаю, выйдешь к вечеру за кольцо дорог,
Сядем в копны свежие под соседний стог.

Зацелую допьяна, изомну, как цвет,
Хмельному от радости пересуду нет.

Ты сама под ласками сбросишь шелк фаты,
Унесу я пьяную до утра в кусты.

И пускай со звонами плачут глухари.
Есть тоска веселая в алостях зари.

*1910*

* * *

Այգաբացի ցոլքն է բոսոր ժանյակի պես լճին հյուսվում:
Խոր անտառից խլահավի լալկան կանչն է անվերջ լսվում:

Ինչ-որ մի տեղ ցախսաքլորն է թաքուն լացում մութ փչակում:
Միայն ես չեմ կարող լացել, անծիր լույս կա իմ խենթ հոգում:

Գիտեմ՝ կգաս մթնշաղին խաչմերուկն այն ճամփաբաժան,
Ու կնստենք թարմ խրձերին, մոտիկ դեզի շուրջը այնժամ:

Մինչ արբելս՝ կհամբուրեմ, կճմլեմ քեզ ծաղկի նման,
Խնդությունից թունդ արբածին երբեք չկա դատ ու դիվան:

Եվ իմ քնքուշ շոյանքներից դու կնետես քողդ խավոտ,
Ու ես հարբած քեզ կտանեմ թփերի մեջ մինչ առավոտ:

Ինչքան կուզե թող որ կանչեն խլահավերն այնտեղ լացով,
Այգաբացի ալ ցոլքերում ուրախ թախիծ կա մի տանջող:

*1910*

* * *

Дымом половодье
Зализало ил.
Желтые поводья
Месяц уронил.

Еду на баркасе,
Тычусь в берега.
Церквами у прясел
Рыжие стога.

Заунывным карком
В тишину болот
Черная глухарка
К всенощной зовет.

Роща синим мраком
Кроет голытьбу...
Помолюсь украдкой
За твою судьбу.

*1910*

* * *

Տիղմը ծխի պես ցրվեց,
Ավար դարձավ հեղեղին,
Եվ լուսինը կորցրեց
Շողասանձերն իր դեղին:

Ես լողում եմ բարկասով
Ու ափերին զարնվում:
Շարված դեզերն հեռվում զով
Ժամատներ են թվում:

Կռկռոցով տխրալուր,
Լռության մեջ, խոր ճահճում,
Խլահավը սևափետուր
Ժամերգության է կանչում:

Եվ պուրակը բիլ մեգով
Մերկությունն է քողարկում...
Բախտիդ համար մորմոքով
Աղոթում եմ ես թաքուն:

*1910*

* * *

Сыплет черемуха снегом,
Зелень в цвету и росе.
В поле, склоняясь к побегам,
Ходят грачи в полосе.

Никнут шелковые травы,
Пахнет смолистой сосной.
Ой вы, луга и дубравы, –
Я одурманен весной.

Радуют тайные вести,
Светятся в душу мою.
Думаю я о невесте,
Только о ней лишь пою.

Сыпь ты, черемуха, снегом,
Пойте вы, птахи, в лесу.
По полю зыбистым бегом
Пеной я цвет разнесу.

*1910*

* * *

Թխենին առատ ձյուն է շաղ տալիս,
Ծաղկանց մեջ սեզն է ցողով լվացվում,
Դաշտում՝ թեքվելով ծիլերին թավիշ,
Սերմնագռավներն են հերկերով անցնում:

Մետաքս խոտերն են թավալվում գետնին,
Եվ սոճու բույրն է ծավալվում խեժից,
Հե՜յ, դուք կաղնուտներ ու մարգագետին,-
Ես խենթացել եմ ձեր թանձր մուժից:

Գաղտնի լուրերին հավատ չեմ տածում
Ու լուսավորվում հոգուս ընդերքում,
Հարսիս մասին եմ անվերջ մտածում,
Եվ միայն նրա համար եմ երգում:

Թխենի՛, թափի՛ր ձյուներդ անհոգ,
Երգե՛ք դուք, հավքե՛ր, անտառում մեր պերճ,
Դաշտով մեկ ես իմ խելահեղ վազքով
Փրփուր ծաղիկներ կփռեմ անվերջ:

*1910*

## КАЛИКИ

Проходили калики деревнями,
Выпивали под окнами квасу,
У церквей пред затворами древними
Поклонялись пречистому Спасу.

Пробиралися странники по полю,
Пели стих о сладчайшем Исусе.
Мимо клячи с поклажею топали,
Подпевали горластые гуси.

Ковыляли убогие по стаду,
Говорили страдальные речи:
«Все единому служим мы господу,
Возлагая вериги на плечи».

Вынимали калики поспешливо
Для коров сбереженные крохи.
И кричали пастушки насмешливо:
«Девки, в пляску! Идут скоморохи!»

*1910*

## ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Ուխտավորներն անցնում էին մեր գյուղերով,
Կանգնում էին կվաս խմում ամեն բակում,
Վանքերի հին փականներին խոնարհվելով՝
Մաքրամաքուր Փրկչին էին երկրպագում:

Լայն դաշտով մեկ փռվում էին, անփույթ ծփում,
Եվ Հիսուսի մասին անուշ տաղեր երգում:
Իսկ բեռնված յաբուների շուրջը տոփում,
Սագերն էին ձայնակցելով աղաղակում:

Եվ հոտերով մուրացկաններն այնտեղ հայում,
Խղճահարույց ճառեր էին ասում վերին.
«Մենք բոլորս Տիրոջ փառքին ենք ծառայում՝
Ճգնավորի քուրձեր առած մեր ուսերին»:

Ուխտավորներն հացերն էին հապճեպ հանում
Ու խնայած կտորտանքը կովերին տալիս:
Կանչում էին հովիվներն ու զվարճանում.
«Դե՛, աղջիկնե՛ր, ելե՛ք պարի, խենթերն են գալիս»:

*1910*

* * *

Упоенье — яд отравы,
Не живи среди людей,
Не меняй своей забавы
На красу бесцветных дней.

Все пройдет, и жизни холод
Сердце чуткое сожмет,
Все, чем жил, когда был молод,
Глупой шуткой назовет.

Берегись дыханья розы,
Не тревожь ее кусты.
Что любовь? Пустые грезы,
Бред несбыточной мечты.

*⟨1910⟩*

* * *

Զմայլանքը սոսկ մի խայթ է թույնի,
Մի՛ ապրիր երբեք մարդկանց մեջ գերի,
Զվարճանքներդ մի փոխիր նույնիսկ
Գեղեցկության հետ անգույն օրերի:

Ամեն բան կանցնի, և կյանքի ցուրտը
Զգայուն սիրտդ կճզմի իր տակ,
Ջահել օրերիդ վսեմ խորհուրդը,
Կանվանեն դատարկ ու հիմար կատակ:

Պաշտպանվիր վարդի շնչից բուրավետ,
Եվ մի վրդովիր թփերը նրա:
Սերն ի՞նչ է՝ ունայն անրջանք հավետ,
Ու սին իղձերի անկատար երազ:

*(1910)*

## ПОЭТ

Он бледен. Мыслит страшный путь.
В его душе живут виденья.
Ударом жизни вбита грудь,
А щеки выпили сомненья.

Клоками сбиты волоса,
Чело высокое в морщинах,
Но ясных грез его краса
Горит в продуманных картинах.

Сидит он в тесном чердаке,
Огарок свечки режет взоры,
А карандаш в его руке
Ведет с ним тайно разговоры.

Он пишет песню грустных дум,
Он ловит сердцем тень былого.
И этот шум, душевный шум...
Снесет он завтра за целковый.

*〈1910 – 1912〉*

# ՊՈԵՏԸ

Նա գունատ է: Խորհում է իր զարհուր ուղին:
Հոգում նրա տեսիլքներ են ապրում պերճ-պերճ:
Կյանքի զարկից կուրծքն է ուռել, դեմքն է դեղին,
Իսկ այտերին կասկածներ են դաջվել անվերջ:

Մազերն անկարգ՝ խռիվ փնջեր՝ ցրիվ տված
Եվ կնճռապատ ճակատը լայն, բարձր ու աննինջ,
Բայց նրա պարզ անուրջների գույները վառ
Իր ցնորքի պատկերներում վառվում են ջինջ:

Նստած է նա մութ ու անշուք ձեղնահարկում,
Մոմի լույսն է արտացոլվում դեմքին պայծառ,
Եվ գրիչը նրա ձեռքին շրշում թաքուն
Ու նրա հետ զրուցում է գիշերն անծայր:

Եվ նա թախծոտ իր խոհերի երգն է գրում,
Հոգով որսում ստվերները անցած հուշի:
Եվ աղմուկն այդ, որ իր հոգու շունչն է կրում,
Նա կտանի վաղն ու ... կտա մի գրոշի:

*(1910-1912)*

## НОЧЬ

Усталый день склонился к ночи,
Затихла шумная волна,
Погасло солнце, и над миром
Плывет задумчиво луна.
Долина тихая внимает
Журчанью мирного ручья.
И темный лес, склоняясь, дремлет
Под звуки песни соловья.
Внимая песням, с берегами,
Ласкаясь, шепчется река.
И тихо слышится над нею
Веселый шелест тростника.

*〈1910 – 1912〉*

# ԳԻՇԵՐ

Հոգնած օրը թեքվեց դեպի մայրամուտ,
Եվ հորձանքի խուլ աղմուկն է մարմրում,
Հանգավ արևն ու աշխարհի վրա մութ
Լուսնի նավն է խոկումներով երերում:
Խաղաղ հովիտն ունկնդրում է խավարում
Խոխոջյունը մեղմաթավալ առվակի,
Մութ անտառն է խոնարհվելով խոր նիրհում
Երգի քաղցր հնչյուններով սոխակի:
Երգով  տարված գետն է անուշ շշնջում,
Եվ ափերն է փայում ինչպես մեղեդի:
Այլյաց վրա մեղմ զեփյուռն է լուռ ննջում,
Ու շրշյունն է լսվում ուրախ եղեգնի:

*(1910-1912)*

# ՆՄՈՒՇՆԵՐ ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻՑ



Поэтъ

Онъ блѣденъ. Мыслитъ страшный путь.
Въ его душѣ живутъ видѣнья.
Ударомъ жизни вбита грудь,
А щеки выпили сомнѣнья.

Клоками сбиты волоса,
Чело высокое въ морщинахъ,
Но ясныхъ грезъ его краса
Горитъ въ продуманныхъ картинахъ.

Сидитъ онъ въ тѣсномъ чердакѣ,
Огарокъ свѣчки рѣжетъ взоры,
А карандашъ въ его рукѣ
Ведетъ съ нимъ тайно разговоры.

Онъ пишетъ пѣсню грустныхъ думъ,
Онъ ловитъ сердцемъ тѣнь былого.
И этотъ шумъ, душевный шумъ...
Снесетъ онъ завтра за целковый.

Сергѣй Есенинъ.

*«Պոետ» բանաստեղծության ինքնագիրը*


Звѣзды

Звѣздочки ясныя, звѣзды высокія!
Что вы храните въ себѣ, что скрываете?
Звѣзды, таящія мысли глубокія,
Силой какою вы душу плѣняете?
Частыя звѣздочки, звѣздочки тѣсныя!
Что въ васъ прекраснаго, что въ васъ могучаго?
Чѣмъ увлекаете, звѣзды небесныя,
Силу великую знанія жгучаго?
И почему такъ, когда вы сіяете,
Маните въ небо, въ объятья широкія?
Смотрите нѣжно такъ, сердце ласкаете,
Звѣзды небесныя, звѣзды далекія!

Есенинъ Сергѣй

*«Աստղեր» բանաստեղծության ինքնագիրը*



Воспоминани

За окномъ, у воротъ
Вьюга завываетъ,
А на печкѣ старикъ
Юность вспоминаетъ.
„Эхъ была де пора
Жилъ тоски не зная,
Лишь кутилъ да гулялъ
Пѣсни распѣвая.
А теперь что за жизнь?
Въ тоскѣ изнываю,
И порой эти дни
Съ грустью вспоминаю.
Погулялъ на вѣку
Говорятъ: довольно.
Размахнуть старину
Не даютъ раздолья.

*«Հուշեր» բանաստեղծության ինքնագիրը*


грустно... Душевныя муки
сердце терзаютъ и рвутъ,
Времени скучные звуки
Мнѣ и вздохнуть не даютъ.
Ляжешь, а горькая дума
Так и не сходит съ ума...
Голову кружитъ отъ шума,
Какъ же мнѣ быть... А сама
Моя изнываетъ душа.
Нѣтъ утѣшенья ни въ комъ,
Ходишь едва.. дыша
Мрачно и дико кругомъ.
Доля! Зачѣмъ ты дана!
Голову негдѣ склонить,
Жизнь и горька и бѣдна,
Тяжко безъ счастья мнѣ жить.

*«Տխուր է…» բանաստեղծության ինքնագիրը*

* * *

Под венком лесной ромашки
Я строгал, чинил челны,
Уронил кольцо милашки
В струи пенистой волны.

Лиходейная разлука,
Как коварная свекровь.
Унесла колечко щука,
С ним – милашкину любовь.

Не нашлось мое колечко,
Я пошел с тоски на луг,
Мне вдогон смеялась речка:
«У милашки новый друг».

Не пойду я к хороводу:
Там смеются надо мной,
Повенчаюсь в непогоду
С перезвонною волной.

*1911*

* * *

Երիցուկի պսակի տակ՝ գետափին,
Անտառի մեջ մակույկ էի նորոգում,
Մեկ էլ հանկարծ իմ սիրածի մատանին
Ընկավ ջուրն ու կորավ պղտոր կոհակում:

Սա փործանք էր նենգադավ ու չարամիտ,
Ասես ջաղու սկեսուրի՝ մի պառավ:
Գայլածուկը մեկեն առավ մատանին
Ու սիրուհուս սերն էլ հետը նա տարավ:

Իմ մատանին չգտնվեց, ինչ արած,
Ու ես տխուր իջա հովիտ գլխիկոր,
Իմ ետևից ծիծաղելով գետն ասաց.
«Քո սիրուհին արդեն ունի նոր ընկեր»:

Ես էլ երբեք խմբապարի չեմ գնա,
Կծիծաղեն բոլորն այնտեղ ինձ վրա,
Կպսակվեմ մի օր թախծոտ ու մռայլ
Կարկաչահոս ալիքի հետ ես ցմահ:

*1911*

* * *

Темна ноченька, не спится,
Выйду к речке на лужок.
Распоясала зарница
В пенных струях поясок.

На бугре береза-свечка
В лунных перьях серебра.
Выходи, мое сердечко,
Слушать песни гусляра.

Залюбуюсь, загляжусь ли
На девичью красоту,
А пойду плясать под гусли,
Так сорву твою фату.

В терем темный, в лес зеленый,
На шелковы купыри,
Уведу тебя под склоны
Вплоть до маковой зари.

*1911*

* * *

Մթին գիշեր է, չի լինում քնել,
Ելնեմ, թափառեմ գետակի ափին:
Փայլակն էլ արդեն ալ գոտին հանել
Նետել է փրփուր ջրերի ծափին:

Կեչին մոմի պես բարձունքին կանգնել,
Զուգվել է լուսնի շողերով դեղին:
Դուրս ե՛կ, իմ հոգյակ, լսիր անարգել
Երգող տավիղի թովիչ մեղեդին:

Կսիրեմ ես քեզ ու չեմ հագենա
Քո այդ կուսական աննման տեսքից,
Իսկ թե միասին մենք պարի գնանք,
Նուրբ քողը կառնեմ քո չքնաղ դեմքից:

Բլրի լանջով ես քեզ կտանեմ
Կանաչ թավուտը մթին անտառի,
Թավիշ դդյակում թաքուն կպահեմ,
Մինչև որ կակաչ լուսայգը վառվի:

*1911*

## ЗВЕЗДЫ

Звездочки ясные, звезды высокие!
Что вы храните в себе, что скрываете?
Звезды, таящие мысли глубокие,
Силой какою вы душу пленяете?

Частые звездочки, звездочки тесные!
Что в вас прекрасного, что в вас могучего?
Чем увлекаете, звезды небесные,
Силу великую знания жгучего?

И почему так, когда вы сияете,
Маните в небо, в объятья широкие?
Смотрите нежно так, сердце ласкаете,
Звезды небесные, звезды далекие!

*1911*

# ԱՍՏՂԵՐ

Ո՜վ պայծառ աստղեր, ո՜վ բարձրիկ աստղեր,
Ի՞նչ եք թաքցնում դուք ձեր խորքերում:
Ո՜վ խորախորհուրդ, անմեկին աստղեր,
Ի՞նչ զորությամբ եք իմ հոգին գերում:

Աստղե՜ր իմ սուտակ, աստղեր՝ ուս-ուսի,
Ինչո՞վ եք չքնաղ, ինչո՞վ եք զորեղ,
Ինչո՞վ եք գերում, գիտության լույսի
Տենչանքը հզոր, երկնայի՜ն, բյուրե՜ղ:

Եվ ինչպե՞ս եք ձեր կապույտ շողերով
Հմայում, կանչում երկինք՝ ընդարձակ:
Նայում եք քնքուշ ու սրտագորով,
Երկնային աստղե՜ր, աստղե՜ր հեռարձակ:

*1911*

## И. Д. РУДИНСКОМУ

Солнца луч золотой
Бросил искру свою
И своей теплотой
Согрел душу мою.

И надежда в груди
Затаилась моей;
Что-то жду впереди
От грядущих я дней.

Оживило тепло,
Озарил меня свет.
Я забыл, что прошло
И чего во мне нет.

Загорелася кровь
Жарче дня и огня.
И светло и тепло
На душе у меня.

Чувства полны добра,
Сердце бьется сильней.
Оживил меня луч
Теплотою своей.

Я с любовью иду
На указанный путь,
И от мук и тревог
Не волнуется грудь.

*1911*

## Ի. Դ. ՌՈՒԴԻՆՍԿՈՒՆ

Ոսկի շողը արևի
Կայծն իր վար նետեց,
Հոգիս իր ջերմ բարևի
Հուրը ավետեց:

Սրտիս խորքում պահ մտավ
Հույսի մի ալիք,
Ինչ-որ բան եմ սպասում
Օրերից գալիք:

Կենդանացա այդ հրից,
Լույս իջավ վրաս:
Մոռացա հինն ու նորից
Մեջս ի՞նչ մնաց:

Եվ արյունս հուրհրաց
Բոցից առավել,
Ե՛վ ջերմ է, և՛ լույս անանց
Հոգում իմ ջահել:

Սիրտս՝ լցված բարությամբ,
Բաբախում է հույժ:
Շողն ինձ օծեց հարությամբ
Ու ջերմով աշխույժ:

Ես սիրով եմ արդ անցնում
Նշված իմ ուղին,
Սիրտս էլ չի տագնապում
Ահ ու երկյուղից:

*1911*

## ВОСПОМИНАНИЕ

За окном, у ворот
Вьюга завывает,
А на печке старик
Юность вспоминает.

«Эх, была-де пора,
Жил, тоски не зная,
Лишь кутил да гулял,
Песни распевая.

А теперь что за жизнь?
В тоске изнываю
И порой о тех днях
С грустью вспоминаю.

Погулял на веку,
Говорят, довольно.
Размахнуть старину
Не дают раздолья.

Полно, дескать, старик,
Не дури ты много,
Твой конец не велик,
Жизнь твоя у гроба.

# ՀՈՒՇԵՐ

Այնտեղ՝ դրսում, դարպասի մոտ
Բուքն է ոռնում հանց մի շուն.
Իսկ ծերուկը՝ քուրսուն թախծոտ,
Պատանությունն է հիշում:

«Է՜խ, ի՜նչ օրեր էին անվիշտ,
Ապրում էի ես անհոգ,
Շրջում էի քեֆերում միշտ,
Ուրախ երգեր երգելով:

Իսկ հիմա ի՞նչ կյանք է, ավա՜ղ,
Նվաղում եմ վշտերում,
Եվ օրերն այն, վաղուց անցած,
Տրտմությամբ եմ միտ բերում:

-Քեֆ ես արել դու ողջ մի դար,-
Ասում են՝ դա բավ է քեզ,
Ծերությունս վանել անդարձ
Էլ չեն տալիս ասպարեզ:

Ինձ ասում են՝ բա՛վ է, ծերուկ,
Հիմար բաներ մի՛ արա,
Քո վերջն էլ է շուտով գալու,
Մահվան շունչն է քեզ վրա:-

Ну и что ж, покорюсь, –
Видно, моя доля.
Придет им тоже час
Старческого горя».

За окном, у ворот
Вьюга завывает,
А на печке старик
С грустью засыпает.

*1911 – 1912*

Կհարմարվեմ, է՛հ, ինչ արած,
Երևում է բախտս էս է:
Կգա նաև հերթը նրանց՝
Ծերունական ցավ կտեսնեն»:

Այնտեղ՝ դրսում, դարպասի մոտ,
Բուքն է ոռնում հանց մի շուն,
Իսկ ծերուկը՝ քուրսուն թախծոտ
Քուն է մտնում անշշուկ:

*(1911-1912)*

## МОЯ ЖИЗНЬ

Будто жизнь на страданья моя обречёна;
Горе вместе с тоской заградили мне путь;
Будто с радостью жизнь навсегда разлучёна,
От тоски и от ран истомилася грудь.

Будто в жизни мне выпал страданья удел;
Незавидная мне в жизни выпала доля.
Уж и так в жизни много всего я терпел,
Изнывает душа от тоски и от горя.

Даль туманная радость и счастье сулит,
А дойду – только слышатся вздохи да слезы,
Вдруг наступит гроза, сильный гром загремит
И разрушит волшебные, сладкие грезы.

Догадался и понял я жизни обман,
Не ропщу на свою незавидную долю.
Не страдает душа от тоски и от ран,
Не поможет никто ни страданьям, ни горю.

*1911 – 1912*

# ԻՄ ԿՅԱՆՔԸ

Կյանքն իմ ասես տանջանքի է անվերջ մատնված,
Վիշտն ու թախիծն իմ ճամփան են մեկտեղ փակել,
Խնդությունից կյանքը կարծես բաժանվել է հավերժ պարտված,
Խոր կարոտից ու վերքերից խոնջացել է սիրտս անքեն:

Ասես կյանքում վերուստ ինձ մի չար ու դաժան բախտ է տրվել,
Այս փուչ կյանքում ի՜նչ դառնագին բաժին է ինձ ընկել վերից,
Առանց այն էլ կյանքում այնքան շատ եմ տխրել ու համբերել,
Որ մաշվում է հոգիս անվերջ մորմոքներից ու ցավերից:

Մուժոտ հեռուն խինդ ու բախտ է խոստանում ու դյութում կրկին,
Մոտենում և միայն լացի ու հառաչի ձայն եմ լսում,
Հանկարծ եթե որոտ ճայթի ու կայծակը զարկի ուժգին
Եվ խորտակվեն կախարդական անուրջներն իմ քաղցր ու վսեմ:

Գուշակեցի ու հասկացա ես խաբկանքը դառը կյանքի,
Չեմ տրտնջում էլ իմ բաժին թշվառ բախտից ու չեմ լալիս,
Եվ հոգիս էլ չի տառապում վերքերից ու թախծից անծիր,
Ու չի կարող ոչ ոք օգնել՝ ո՛չ տանջանքիս, ո՛չ էլ ցավիս:

*(1911-1912)*

## ЧТО ПРОШЛО – НЕ ВЕРНУТЬ

Не вернуть мне ту ночку прохладную,
Не видать мне подруги своей,
Не слыхать мне ту песню отрадную,
Что в саду распевал соловей!

Унеслася та ночка весенняя,
Ей не скажешь: «Вернись, подожди»
Наступила погода осенняя,
Бесконечные льются дожди.

Крепким сном спит в могиле подруга,
Схороня в своем сердце любовь.
Не разбудит осенняя вьюга
Крепкий сон, не взволнует и кровь.

И замолкла та песнь соловьиная,
За моря соловей улетел,
Не звучит уже более, сильная,
Что он ночкой прохладною пел.

Пролетели и радости милые,
Что испытывал в жизни тогда.
На душе уже чувства остылые.
Что прошло – не вернуть никогда.

*1911 – 1912*

# ԻՆՉ ԱՆՑԵԼ Է, ԵՏ ՉԵՍ ԴԱՐՁՆԻ

Ետ չես դարձնի ինձ գիշերն այն զովասուն,
Էլ չեմ տեսնի ընկերուհուս ես կյանքում,
Էլ չեմ լսի ես այն երգը երազուն,
Որ սոխակն էր երգում քաղցր մով այգում:

Թռա՜վ, գնա՛ց գարնանային գիշերն այն,
Էլ չես ասի  նրան՝ դարձի՛ր, սպասի՜ր,
Եկավ աշուն, բուքն է վայում ու միայն
Անձրևներն են թափվում անվերջ ու զազիր:

Խոր քնել է իմ սիրուհին պաղ  շիրմում՝
Թաղած սերս սրտում իր սառն ու մեռած:
Այդ խոր քունը չի արթնացնի հողմն աշնան,
Եվ արյունն էլ չի բորբոքի պինդ սառած:

Եվ լռել է այն դայլայլը սոխակի,
Արդ սոխակն է ծովից անդին թևածում,
Եվ չի հնչի էլ առավել, խնդագին,
Որ երգում էր նա գիշերը զովասուն:

Եվ վաղ թռան հրճվանքներն իմ անանց,
Որ ես կյանքում ճաշակեցի վշտաբեկ:
Արդ իմ հոգում զգացմունքներն են մարած:
Ինչ անցել է, ետ չես դարձնի էլ երբեք:

*(1911-1912)*

## НОЧЬ

Тихо дремлет река.
Темный бор не шумит.
Соловей не поет,
И дергач не кричит.

Ночь. Вокруг тишина.
Ручеек лишь журчит.
Своим блеском луна
Все вокруг серебрит.

Серебрится река.
Серебрится ручей.
Серебрится трава
Орошенных степей.

Ночь. Вокруг тишина.
В природе все спит.
Своим блеском луна
Все вокруг серебрит.

*1911 – 1912*

## ԳԻՇԵՐ

Գետն է խաղաղ ննջում մուշ-մուշ:
Մութ անտառը չի խշշում:
Եվ չի երգում սոխակն անուշ,
Ու ջրհավն էլ չի կանչում:

Գիշեր է մութ: Շուրջը խաղաղ:
Առվակն է լոկ կարկաչում:
Եվ իր փայլով լուսաշաղախ
Լուսինն է շուրջն արծաթում:

Արծաթվում է գետը խաղաղ:
Առվակներն են լույս ծաթում:
Տափաստանի ցողաշաղախ
Թավիշ խոտն է արծաթվում:

Գիշեր է ջինջ: Շուրջը խաղաղ:
Բնությունն է մտել քուն:
Լուսնարծաթն է կաթնաշաղախ
Շուրջն ամեն ինչ արծաթում:

*(1911-1912)*

## ВОСХОД СОЛНЦА

Загорелась зорька красная
В небе темно-голубом,
Полоса явилась ясная
В своем блеске золотом.

Лучи солнышка высоко
Отразили в небе свет.
И рассыпались далеко
От них новые в ответ.

Лучи ярко-золотые
Осветили землю вдруг.
Небеса уж голубые
Расстилаются вокруг.

*1911 – 1912*

## ԱՐԵՎԱԾԱԳ

Այգը վառվեց հիր ու ալվան
Կապտամշուշ երկնքում,
Եվ ծիրանի գոտին վառման
Ցոլաց փայլով ոսկեգույն:

Եվ արևի շողերն անհաս
Լուրթ երկնքում լույս դարձան:
Նրանց խրձերն հեռվում մաս-մաս
Կրկին եղան ցիր ու ցան:

Հրդեհեցին երկիրն հանկարծ
Վառ շողերն այդ ոսկեհուռ:
Ողջ երկինքն էլ կապույտ հագած
Սփռվում է ամենուր:

*(1911-1912)*

## К ПОКОЙНИКУ

Уж крышку туго закрывают,
Чтоб ты не мог навеки встать,
Землей холодной зарывают,
Где лишь бесчувственные спят.

Ты будешь нем на зов наш зычный,
Когда сюда к тебе придем.
И вместе с тем рукой привычной
Тебе венков мы накладем.

Венки те красотою будут,
Могила будет в них сиять.
Друзья тебя не позабудут
И будут часто вспоминать.

Покойся с миром, друг наш милый,
И ожидай ты нас к себе.
Мы перетерпим горе с силой,
Быть может, скоро и придем к тебе.

*1911 – 1912*

## ՆՆՋԵՑՅԱԼԻՆ

Արդեն դագաղն են ամրապինդ փակում,
Որ չկարենաս դու ելնել հավետ,
Թաղում են խորն ու սառն հողով ծածկում,
Ուր լոկ դիերն են ննջում առհավետ:

Դու մունջ կլինես, երբ այստեղ մենք գանք,
Մեր զիլ կանչերին չես արձագանքի:
Մեր հոգու տուրքը մեր ձեռքով կտանք
Ու քեզ պսակներ կբերենք անգին:

Նրանք կլինեն այն փայլ ու շուքով,
Որոնց մեջ հողդ թավիշ կբացվի:
Ընկերներդ քեզ կհիշեն սուգով
Եվ հաճախ կգան քո շիրմին այցի:

Ննջի՛ր դու խաղաղ, մեր լավ բարեկամ,
Ու մեզ սպասիր աշխարհում քո մութ:
Ուժով կտանենք մեր վիշտն այս անգամ,
Եվ գուցե շուտով մենք էլ գանք քեզ մոտ:

*(1911-1912)*

## ЗИМА

Вот уж осень улетела,
И примчалася зима.
Как на крыльях, прилетела
Невидимо вдруг она.

Вот морозы затрещали
И сковали все пруды.
И мальчишки закричали
Ей «спасибо» за труды.

Вот появилися узоры
На стеклах дивной красоты.
Все устремили свои взоры,
Глядя на это. С высоты

Снег падает, мелькает, вьется,
Ложится белой пеленой.
Вот солнце в облаках мигает,
И иней на снегу сверкает.

*1911 – 1912*

## ՁՄԵՌ

Աշունն ահա արդեն չվեց
Ու ձմեռը եկավ փութով,
Հավքի թևով ասես թևեց
Եվ նա անտես փռվեց շուտով:

Պաղ ցրտերն են ահա փչում,
Ու լճերն են սառցապատել:
Մանուկներն են ուրախ ճչում,
Ասում` լավ ես դու աշխատել:

Ապակիներն ահա սառել,
Ու զարդեր են դաջվել վրան:
Բոլորն իրենց հայացքն հառել
Եվ նայում են դյութված դրան:

Ձյունն է վերից արծաթ մանում,
Շուրջը ծածկում ճերմակ քողով,
Արևն ամպից աչքով անում,
Ու փայլում է մի այլ շողով:

*(1911-1912)*

## ПЕСНЯ СТАРИКА РАЗБОЙНИКА

Угасла молодость моя,
Краса в лице завяла,
И удали уж прежней нет,
И силы – не бывало.

Бывало, пятерых сшибал
Я с ног своей дубиной,
Теперь же хил и стар я стал
И плачуся судьбиной.

Бывало, песни распевал
С утра до темной ночи,
Теперь тоска меня сосет
И грусть мне сердце точит.

Когда-то я ведь был удал,
Разбойничал и грабил,
Теперь же хил и стар я стал,
Все прежнее оставил.

*1911 – 1912*

## ԾԵՐ ԱՎԱԶԱԿԻ ԵՐԳԸ

Զահելությունն իմ շուտ հանգավ,
Թառամել է դեմքս, դեղնել,
Առաջվա իմ ուժն ու համբավն
Ասես երբեք չեն էլ եղել:

Եղել է, որ հինգին առել
Ու փռել եմ դագանակով,
Արդ ես ծեր ու տկար դառել
Եվ իմ բախտն եմ լալիս հանգով:

Եղել է. ես առավոտից
Երգել եմ մինչ խորին գիշեր,
Արդ թախիծն է հալածում ինձ
Եվ վշտերն են սիրտս մաշում:

Չէ՞ որ մի օր ինձ ահ չկար,
Թունդ գող էի ու ավազակ.
Հիմա ծեր եմ ես ու տկար,
Ողջ անցյալս եմ թողել ազատ:

*(1911-1912)*

* * *

Заиграй, сыграй, тальяночка, малиновы меха.
Выходи встречать к околице, красотка, жениха.

Васильками сердце светится, горит в нем бирюза.
Я играю на тальяночке про синие глаза.

То не зори в струях озера свой выткали узор,
Твой платок, шитьем украшенный, мелькнул
за косогор.

Заиграй, сыграй, тальяночка, малиновы меха.
Пусть послушает красавица прибаски жениха.

*1912*

* * *

Հնչի՛ր, հարմո՛ն, ախորժալուր, նվագներդ առատ ածի՜ր:
Դուրս ե՛կ, աղջի՛կ, դարպասի մոտ, դիմավորիր նշանածիդ:

Կապույտ հուրն է սիրտս առել ու վառվում է ինչպես փիրուզ:
Ես երգում եմ իմ հարմոնով բիլ աչքերի մասին սիրույս:

Այդ լուսա՞յգն է նուրբ նախշերն իր արծաթ լճի վրա փռում,
Թե՞ զարդահյուս գլխաշորդ է լեռան ուսին թույլ թռթռում:

Հնչի՛ր, հարմո՛ն, ախորժալուր, նվագներդ զիլ տարածիր:
Գեղեցկուհին թող որ լսի խաղերգերն իր նշանածի:

*1912*

* * *

Матушка в Купальницу по лесу ходила,
Босая, с подтыками, по росе бродила.

Травы ворожбиные ноги ей кололи,
Плакала родимая в купырях от боли.

Не дознамо печени судорга схватила,
Охнула кормилица, тут и породила.

Родился я с песнями в травном одеяле.
Зори меня вешние в радугу свивали.

Вырос я до зрелости, внук купальской ночи,
Сутемень колдовная счастье мне пророчит.

Только не по совести счастье наготове,
Выбираю удалью и глаза и брови.

Как снежинка белая, в просини я таю
Да к судьбе-разлучнице след свой заметаю.

*1912*

* * *

Համբարձման տոնին մայրս անտառում երկար թափառել,
Շրջել է բոբիկ ցողերի միջով, հանգիստ չի առել:

Հուռութ խոտերն են ծվատել, ճաղկել ոտքերը փոշոտ,
Եվ հարազատս ցավից լացել է թփերում փշոտ:

Նա իմացել է, թե լերդն է ցավում, բայց դողն է բռնել,
Եվ սնուցողն իմ ճչացել այդտեղ և ինձ է ծնել:

Ու ես ծնվել եմ խոտե ծածկոցին, երգերով ծանոթ:
Ինձ գարնան այգն է բարուրել նախշուն իր ծիածանով:

Հասակ եմ առել, դարձել խելահաս թոռն այն գիշերվա,
Վհուկ-խավարն է կանխագուշակել իմ բախտը ցմահ:

Բայց իմ խղճով չէ պատրաստի բախտը, այն ինձ չէ հարմար,
Ես քաջությամբ եմ աչքեր ու ունքեր ընտրում ինձ համար:

Ես, ինչպես ձյան ճերմակ մի փաթիլ, կապույտում հալվում,
Անջատիչ բախտի բոլոր հետքերն եմ իմ ճամփից ավլում:

*1912*

* * *

Задымился вечер, дремлет кот на брусе,
Кто-то помолился: «Господи Исусе».

Полыхают зори, курятся туманы,
Над резным окошком занавес багряный.

Вьются паутины с золотой повети.
Где-то мышь скребется в затворенной клети...

У лесной поляны – в свяслах копны хлеба,
Ели, словно копья, уперлися в небо.

Закадили дымом под росою рощи...
В сердце почивают тишина и мощи.

*1912*

* * *

Իրիկունն իր ծուխն է մանում, կատուն նիրհում է խորանում,
Ինչ-որ մեկը աղոթում է, տեր Հիսուսին չի մոռանում:

Վերջալույսն է բոցավառվում ու ծխում են մեգ ու մշուշ,
Դրվագազարդ պատուհանին վարագույրն է ծիրան խշշում:

Ոսկեզօծված գմբեթի տակ ոստայններ են հյուսվել թավիշ,
Ինչ-որ մի տեղ թակարդն ընկած մուկն է ճանկռում, տխուր
լալիս...

Եվ անտառի լայն բացատում կապկպել են խրձերն հասկի,
Եղևնիներն, ինչպես գեղարդ, երկնքին են հպվել ոսկի:

Եվ պուրակի ցողերի տակ բուրվառում է մուժը սիրով...
Իսկ իմ սրտում հանգչում են լուռ խոր անդորրն ու ուժը Տիրոջ:

*1912*

## ПОЭТ

*Горячо любимому другу*
*Грише*

Тот поэт, врагов кто губит,
Чья родная правда мать,
Кто людей, как братьев, любит
И готов за них страдать.
Он все сделает свободно,
Что другие не могли.
Он поэт, поэт народный,
Он поэт родной земли!

*⟨1912⟩*

## ՊՈԵՏԸ

*Ջերմագին սիրելի ընկերոջս՝*
*Գրիշային*

Նա է պոետ, ով թշնամուն չի ներում,
Ճշմարտությունն ով պաշտում է առավել,
Ով որ մարդկանց իր եղբոր պես է սիրում
Եվ պատրաստ է նրանց համար տառապել:
Եվ հեշտությամբ այն ամենը նա կանի,
Ինչ չեն կարող ուրիշները խմբովի:
Պոետ է նա, պոետ է նա ազգային,
Նա է պոետն հայրենական իր հողի:

*(1912)*

## КАПЛИ

Капли жемчужные, капли прекрасные,
Как хороши вы в лучах золотых,
И как печальны вы, капли ненастные,
Осенью черной на окнах сырых.

Люди, веселые в жизни забвения,
Как велики вы в глазах у других
И как вы жалки во мраке падения,
Нет утешенья вам в мире живых.

Капли осенние, сколько наводите
На душу грусти вы чувства тяжелого.
Тихо скользите по стеклам и бродите,
Точно как ищете что-то веселого.

Люди несчастные, жизнью убитые,
С болью в душе вы свой век доживаете.
Милое прошлое, вам не забытое,
Часто назад вы его призываете.

*⟨1912⟩*

# ԿԱԹԻԼՆԵՐ

Օ՜, կաթիլներ մարգարտյա, օ՜, կաթիլներ գեղեցիկ,
Դուք ինչ լավն եք ու սիրուն շողերի մեջ ոսկեվառ,
Եվ ինչ մեղկ եք ու թախծոտ, դուք կաթիլներ մեղեսիկ,
Մռայլ աշնան սառն ու թեն լուսամուտի կուրծքն ի վար:

Մարդ՛իկ, խենթ ու խնդագին, մոռացության կյանքում սին,
Դուք ինչ վեհ եք ու անհաս ուրիշների աչքերում,
Եվ ինչ մեղք եք ու ափսոս խավար գրկում անկումի,
Չկա՛ էլ ձեզ սփոփանք ապրողների աշխարհում:

Աշնանային կաթիլներ, ինչքան վիշտ եք դուք ծնում
Թախծոտ հոգում դժվարին, զգացմունքներ դառնության:
Մեղմ սահում եք ապակուն, թափառումով վար իջնում,
Կարծես, իրոք, փնտրում եք ձեր շուրջն ինչ-որ ուրախ բան:

Մարդի՛կ, դժբախտ ու թշվառ՝ դաժան կյանքով սպանված,
Հոգում՝ ցավը դառնագին, դուք ձեր դարն եք ավարտում:
Անցյալն, ավա՜ղ, հաճելի՝ ձեր հուշերում պահպանված,
Հաճախ ետ եք կանչում դուք՝ հին կարոտը ձեր սրտում:

*(1912)*

# БОЛЬНЫЕ ДУМЫ

* * *

Нет сил ни петь и ни рыдать,
Минуты горькие бывают,
Готов все чувства изливать,
И звуки сами набегают.

*‹1912›*

* * *

Я ль виноват, что я поэт
Тяжелых мук и горькой доли,
Не по своей же стал я воле –
Таким уж родился на свет.

Я ль виноват, что жизнь мне не мила,
И что я всех люблю и вместе ненавижу,
И знаю о себе, чего еще не вижу,
Ведь этот дар мне муза принесла.

Я знаю – в жизни счастья нет,
Она есть бред, мечта души больной,
И знаю – скучен всем напев унылый мой,
Но я не виноват – такой уж я поэт.

*‹1912›*

# ՀԻՎԱՆԴՈՏ ԽՈՀԵՐ

***

Ես չեմ կարող էլ չերգել ու չլացել,
Րոպեներ են լինում հաճախ դառն ու անվերջ,
Որ պատրաստ եմ հուզախռով սիրտս բացել,
Եվ հնչյուններն ինքնիրենց են լցվում իմ մեջ:

*(1912)*

***

Մեղավո՞ր եմ ես արդյոք, որ պոետ եմ իմ հոգով
Ծանր ու անհուն տանջանքի, դառը բախտի՝ չար ու սին:
Ես իմ կամքով չեմ դարձել կյանքում հետո այդպիսին,
Այդպիսին եմ ես ծնվել, աշխարհ եկել մորմոքով:

Մեղավո՞ր եմ ես արդյոք, որ ինձ կյանքը չի փայել,
Որ բոլորին սիրում եմ ու նույն պահին և ատում:
Եվ իմ մասին ես գիտեմ՝ ինչը դեռ չեմ նկատում,
Այդ պարգևը չէ՞ որ ինձ իմ մուսան է ընծայել:

Երջանկություն այս կյանքում չկա՛ երբեք, ես գիտեմ,
Ջառանցանք է սա մի սին, հիվանդ հոգու երազ հին:
Գիտեմ՝ երգն իմ միալար ձանձրացնում է բոլորին,
Բայց մեղքս ինչ թաքցնեմ, ես այդպիսի պոետ եմ:

*(1912)*

## ДУМЫ

Думы печальные, думы глубокие,
Горькие думы, думы тяжелые,
Думы от счастия вечно далекие,
Спутники жизни моей невеселые!

Думы – родители звуков мучения,
Думы несчастные, думы холодные,
Думы – источники слез огорчения,
Вольные думы, думы свободные!

Что вы терзаете грудь истомленную,
Что заграждаете путь вы мне мой?
Что возбуждаете силу сломленную
Вновь на борьбу с непроглядною тьмой?

Не поддержать вам костра догоревшего,
Искры потухшие... Поздно, бесплодные.
Не исцелить сердца вам наболевшего,
Думы больные, без жизни, холодные!

*‹1912›*

# ԽՈՀԵՐ

Խոհեր իմ խորին, խոհեր թախծալի,
Խոհեր իմ ծանր, դառնախեղդ խոհեր:
Դուք՝ հավերժ հեռու բախտից բաղձալի,
Դուք տխուր կյանքիս լուռ ուղեկիցներ:

Խոհեր՝ տանջանքի հնչյուններ ծնող,
Խոհեր իմ անբախտ, սառնաշունչ խոհեր,
Խոհեր՝ դառնության արցունքներ սնող,
Խոհեր իմ ազատ, անկաշկանդ խոհեր:

Ինչ եք դուք տանջում իմ հոգնած հոգին,
Ինչո՞ւ եք ճամփաս դուք փակում հավետ:
Ինչ եք արթնացնում ուժերն իմ կրկին՝
Դարձյալ կռվելո՞ւ սև խավարի հետ:

Դուք չեք անթեղի հանգած խարույկի
Մարող կայծերը... Ո՜ւշ է, զո՜ւր տանջանք:
Եվ էլ չեք բուժի իմ ցաված հոգու
Խոհերն հիվանդոտ, անշունչ ու անկյանք:

*(1912)*

## ЗВУКИ ПЕЧАЛИ

Скучные песни, грустные звуки,
Дайте свободно вздохнуть.
Вы мне приносите тяжкие муки,
Больно терзаете грудь.

Дайте отрады, дайте покоя,
Дайте мне крепко заснуть.
Думы за думами смутного роя,
Вы мне разбили мой путь.

Смолкните, звуки – вестники горя,
Слезы уж льются из глаз.
Пусть успокоится горькая доля,
Звуки! Мне грустно от вас.

Звуки печали, скорбные звуки,
Долго ль меня вам томить?
Скоро ли кончатся тяжкие муки,
Скоро ль спокойно мне жить?

*⟨1912⟩*

## ՏԽՐՈՒԹՅԱՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

Թախծոտ հնչյուններ, ճանճրալի երգեր,
Թողե՛ք որ ես մի շունչ քաշեմ կարգին:
Դուք ինձ բերում եք ծանր տանջանքներ
Եվ ծվատում եք կուրծքս ցավագին:

Ինձ հանգիստ թողե՛ք, տվե՛ք ինձ բերկրանք,
Թողե՛ք, որ մի խոր ես նիրհեմ խաղաղ:
Խոհեր խոհերի միջով խուռներամ,
Դուք խորտակել եք իմ ուղին, ավա՜ղ:

Լռե՛ք, հնչյուննե՛ր, կսկիծ տարածող,
Արդեն հորդում են արցունքներն աղի:
Թո՛ղ հանգստանա բախտն ինձ հալածող,
Հնչյուննե՛ր, դուք ինձ բերում եք թախիծ:

Տխրության ձայներ, հնչյուններ վշտոտ,
Արդյոք երկա՞ր եք տանջելու դուք ինձ:
Արդյոք կավարտվե՞ն տանջանքներն իմ շուտ,
Եվ արդյոք շուտով ես կապրե՞մ հանգիստ:

*(1912)*

## СЛЕЗЫ

Слезы... опять эти горькие слезы,
Безотрадная грусть и печаль;
Снова мрак... и разбитые грезы
Унеслись в бесконечную даль.

Что же дальше? Опять эти муки?
Нет, довольно... Пора отдохнуть
И забыть эти грустные звуки,
Уж и так истомилася грудь.

Кто поет там под сенью березы?
Звуки будто знакомые мне –
Это слезы опять... Это слезы
И тоска по родной стороне.

Но ведь я же на родине милой,
А в слезах истомил свою грудь.
Эх... лишь, видно, в холодной могиле
Я забыться могу и заснуть.

*⟨1912⟩*

## ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Արցունքներն այդ... Նորից այդ դառն արցունքները,
Անբերկրալի վիշտ ու թախիծ, տանջանք ու մահ:
Նորից խավար... Ու փշրված անուրջները
Անցան անդարձ դեպի հեռուն այն անսահման:

Իսկ առջևո՞ւմ... Նորից այդ ծով տանջանքները:
Ո՜հ, ո՛չ, բա՛վ է... Ժա՛մն է արդեն նստել հանգիստ
Եվ մոռանալ այդ  սիրտ մաշող հնչյունները,
Առանց այն էլ ճմլվում է ծվատ հոգիս:

Ո՞վ է երգում կեչիների շուքում՝ այնտեղ,
Հնչյունները՝ կարծես թե ինձ վաղուց ծանոթ,
Դրանք կրկին արցունքներ են... ծով արցունքներ,
Եվ հայրենի ջինջ վայրերի անանց կարոտ:

Բայց չէ՞ որ ես իմ հայրենի տանն եմ անուշ,
Իսկ իմ սիրտը տառապում է վշտի ցավից:
Ա՜խ, ես գիտեմ, լոկ պաղ շիրմում պառկած անուժ,
Ես կարող եմ մոռանալ ու նիրհել հավետ:

*(1912)*

* * *

Не видать за туманною далью,
Что там будет со мной впереди,
Что там... счастье, иль веет печалью,
Или отдых для бедной груди.

Или эти седые туманы
Снова будут печалить меня,
Наносить сердцу скорбные раны
И опять снова жечь без огня.

Но сквозь сумрак в туманной дали
Загорается, вижу, заря –
Это смерть для печальной земли,
Это смерть, но покой для меня.

*⟨1912⟩*

***

Չի նշմարվում մառախլապատ հեռաստանի ետևում,
Թե առջևում ի՞նչ է արդյոք ինձ հետ այնտեղ կատարվելու:
Ի՞նչ է այնտեղ... երջանկությո՞ւն, թե՞ վշտերն են լայն թևում,
Թե՞ հանգիստ եմ խեղճ ու հիվանդ կրծքիս համար բերելու:

Թե՞ այդ ճերմակ մշուշները տանջելու են ինձ կրկին,
Ու նորից են վշտացնելու՝ առանց աստղ ու ճրագի,
Եվ հասցնելու արնածոր ու դառն վերքեր իմ սրտին,
Ու նորից են ինձ այրելու՝ դարձյալ առանց կրակի:

Բայց խավարի միջով թանձր, հեռաստանում մուժապատ,
Ես տեսնում եմ՝ հրդեհվում է արշալույսը ոսկեվառ:
Ո՜հ, դա մահ է թախծամորմոք երկրի համար ուժահատ,
Ո՜հ, դա մահ է ու կործանում, բայց խոր նինջ է ինձ համար:

*(1912)*

## ВЬЮГА НА 26 АПРЕЛЯ 1912 г.

Что тебе надобно, вьюга,
Ты у окна завываешь,
Сердце больное тревожишь,
Грусть и печаль вызываешь.

Прочь уходи поскорее,
Дай мне забыться немного,
Или не слышишь – я плачу,
Каюсь в грехах перед богом.

Дай мне с горячей молитвой
Слиться душою и силой,
Весь я истратился духом,
Скоро сокроюсь могилой.

Пой ты тогда надо мною,
Только сейчас удалися,
Или за грешную душу
Вместе со мной помолися.

*⟨1912⟩*

## 1912 ԹՎԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԲՈՒՔԸ

Պատուհանիս մոտ դու ոռնում,
Ի՞նչ ես ուզում, ով փոքրի՛կ,
Վիշտ ու թախիծ իրար խառնում,
Հիվանդ սիրտս ես կոծում նորից:

Գնա՜ դու շուտ, ո՞ւր ես գալիս,
Թող որ մի քիչ նիրհեմ խաղաղ,
Կամ՝ չե՞ս լսում, որ ես լալիս,
Մեղանչում եմ Աստծո առաջ:

Թույլ տո՛ւր, որ ես ջերմ աղոթքով
Մի մարմին ու մի շունչ դառնամ,
Սպառվել եմ ամբողջ հոգով,
Շուտով կիջնեմ ես գերեզման:

Երգիր այնժամ դու ինձ վրա,
Միայն հիմա շո՛ւտ հեռացիր,
Կամ մեղավոր հոգուս համար
Ինձ հետ մեկտեղ, ե՛կ, աղոթիր:

*(1912)*

## ПРЕБЫВАНИЕ В ШКОЛЕ

Душно мне в этих холодных стенах,
Сырость и мрак без просвета.
Плесенью пахнет в печальных углах —
Вот она, доля поэта.

Видно, навек осужден я влачить
Эти судьбы приговоры,
Горькие слезы безропотно лить,
Ими томить свои взоры.

Нет, уже лучше тогда поскорей
Пусть я уйду до могилы,
Только там я могу, и лишь в ней,
Залечить все разбитые силы.

Только там я могу отдохнуть,
Позабыть эти тяжкие муки,
Только лишь там не волнуется грудь
И не слышны печальные звуки.

*‹1912›*

## ԴՊՐՈՑՈՒՄ

Այս պատերի ներսում ցուրտ, հեղձուցիչ է ինձ համար,
Մգլահոտ է ու խավար, չկա լույսի գեթ մի շող:
Բորբոսներն են բուրում թաց անկյուններից անհամար,
Ահա բախտը պոետի, ճակատագիրն ինձ մաշող:

Երևում է՝ ես պիտի հավետ կրեմ լուռ ու մունջ
Դատավճիռն իմ բախտի, տանեմ կյանքում ամեն ինչ:
Դառն արցունքներն իմ աղի պիտի հեղեմ անտրտունջ
Եվ դրանց մեջ խորտակեմ հայացքներս լուսաջինջ:

Ո՛չ, ուրեմն, այդ դեպքում, լավ է թողնեմ կյանքն ունայն,
Շուտով մտնեմ հողի տակ, իջնեմ շիրիմ կարեվեր,
Միայն այնտեղ եմ կարող, նրա գրկում միմիայն,
Բուժեմ մեկեն իմ բոլոր ուժերն հիվանդ ու ավեր:

Միայն այնտեղ եմ կարող հանգստանալ ցավիս հետ,
Եվ մոռանալ այդ ծանր տանջանքները անցյալի,
Միայն այնտեղ չի հուզվում հիվանդ կուրծքը առհավետ,
Եվ չեն լսվում էլ երբեք հնչյունները թախծալի:

*(1912)*

## ДАЛЕКАЯ ВЕСЕЛАЯ ПЕСНЯ

Далеко-далеко от меня
Кто-то весело песню поет.
И хотел бы провто́рить ей я,
Да разбитая грудь не дает.

Тщетно рвется душа до нее,
Ищет звуков подобных в груди,
Потому что вся сила моя
Истощилась еще впереди.

Слишком рано я начал летать
За мечтой идеала земли,
Рано начал на счастье роптать,
Разбираясь в прожитой дали.

Рано пылкой душою своей
Я искал себе мрачного дня
И теперь не могу вторить ей,
Потому что нет сил у меня.

*⟨1912⟩*

## ՀԵՌԱՎՈՐ ՈՒՐԱԽ ԵՐԳ

Հեռո՜ւ-հեռո՜ւ, ինձնից հեռու անսահման,
Ինչ-որ մեկը ուրախ երգ է միշտ երգում:
Եվ ուզում եմ արձագանքել ես նրան,
Բայց հիվանդ ու հյուծված կուրծքս չի ներում:

Անզոր հոգիս զուր տենչում է նրա մոտ,
Որոնում է նման ձայներ կրծքիս տակ,
Որովհետև իմ ողջ ուժը կենսահորդ
Սպառվել է դեռ շատ վաղուց բովանդակ:

Եվ շատ վաղ եմ ես սկսել խենթ թռչել
Երկրի մաքուր երազների ետևից,
Բախտի վրա նույնպես վաղ եմ տրտնջել՝
Ապրած հեռուն հասկանալով՝ փետել ինձ:

Վաղ եմ հոգուս կրակներով անվարան
Ես ինձ համար փնտրել մութ ու մռայլ օր,
Եվ չեմ կարող կրկնել հիմա ես նրան,
Քանզի էլ ուժ չունի կուրծքս վիրավոր:

*(1912)*

## МОИ МЕЧТЫ

Мои мечты стремятся вдаль,
Где слышны вопли и рыданья,
Чужую разделить печаль
И муки тяжкого страданья.

Я там могу найти себе
Отраду в жизни, упоенье,
И там, наперекор судьбе,
Искать я буду вдохновенья.

*⟨1912⟩*

# ԻՄ ԵՐԱԶՆԵՐԸ

Իմ երազները թռչում են հեռու,
Ուր որ լավում են ողբ ու կական,
Ուրիշի ցավն ու վիշտը կիսելու
Եվ տանջանքները՝ օրհասական:

Ես անդ կարող եմ գտնել ինձ համար
Անհուն խնդություն ու ծով հրճվանք,
Եվ այնտեղ՝ ընդդեմ բախտին իմ խավար,
Ես պիտի փնտրեմ խոր ներշնչանք:

*(1912)*

## БРАТУ ЧЕЛОВЕКУ

Тяжело и прискорбно мне видеть,
Как мой брат погибает родной.
И стараюсь я всех ненавидеть,
Кто враждует с его тишиной.

Посмотри, как он трудится в поле,
Пашет твердую землю сохой,
И послушай ты песни про горе,
Что поет он, идя бороздой.

Или нет в тебе жалости нежной
Ко страдальцу сохи с бороной?
Видишь гибель ты сам неизбежной,
А проходишь его стороной.

Помоги же бороться с неволей,
Залитою вином, и с нуждой!
Иль не слышишь, он плачется долей
В своей песне, идя бороздой?

*⟨1912⟩*

# ԵՂԲՈՐՍ՝ ՄԱՐԴՈՒՆ

Թախծալի ու ծանր է տեսնել ինձ համար
Ոնց է եղբայրն իմ հարազատ կործանվում:
Եվ ձգտում եմ ես բոլորին ատել հար,
Ովքեր նրա խոր անդորրն են նախանձում:

Տե՛ս, նա ոնց է տանջվում դաշտում՝ բահն ուսին.
Հին արորով հողն է հերկում քարացած,
Դու երգերը լսիր նրա՝ վշտի մասին,
Որ երգում է ակոսներում իր բացած:

Մի՞թե քո մեջ չկա քնքուշ կարեկցանք
Ցաքանով այդ տառապյալի նկատմամբ:
Դու տեսնում ես մահ ու տանջանք և հանցանք,
Բայց անցնում ես դրանց կողքով լռությամբ:

Դե՜, դու օգնիր՝ բռնության դեմ կռվելու
Եվ կարիքի՝ հեղված գինով ու լեղով,
Կամ՝ չե՞ս լսում, բախտն է լացում նա հլու
Իմ երգի մեջ՝ ակոսներով քայլելով:

*(1912)*

* * *

Я зажег свой костер,
Пламя вспыхнуло вдруг
И широкой волной
Разлилося вокруг.

И рассыпалась мгла
В беспредельную даль,
С отягченной груди
Отгоняя печаль.

Безнадежная грусть
В тихом треске углей
У костра моего
Стала песней моей.

И я весело так
На костер свой смотрел,
Вспоминаючи грусть,
Тихо песню запел.

Я опять подо мглой.
Мой костер догорел,
В нем лишь пепел с золой
От углей уцелел.

***

Ես վառեցի իմ  խարույկը,
Բոցը հանկարծ բռնկվեց,
Լայն թևերով փռվեց շուրջը
Ու մութի մեջ ինձ գգվեց:

Եվ խավարը ցրվեց անհետ,
Կորավ հեռվում անսահման,
Իմ ծանրացած կրծքից իր հետ
Տարավ ահը սին մահվան:

Անհայտ թախիծն առկայծելով
Ճարճատյունի մեջ խաղաղ,
Խարույկիս մոտ վառ կայծերով
Երգս դարձավ տխրուրախ:

Ու ես այնպես գոհ ու զվարթ
Նայում էի ալ բոցին,
Եվ հիշելով թախիծն անթարթ՝
Անձայն մի երգ երգեցի:

Ես խավարի մեջ եմ նորից,
Թեժ կրակս մարմրեց,
Մոխիր մնաց ածուխներից,
Հանգավ ծուխն ու շուտ լռեց:

Снова грусть и тоска
Мою грудь облегли,
И печалью слегка
Веет вновь издали.

Чую – будет гроза,
Грудь заныла сильней,
И скатилась слеза
На остаток углей.

*⟨1912⟩*

Նորից վիշտն ու թախիծն անթև
Իջան հիվանդ իմ կրծքին,
Ու տխրությամբ հեռվից թեթև
Մեղմ թռվում են ինձ կրկին:

Զգում եմ ես  շանթ ու որոտ.
Սիրտս ուժգին թպրտաց,
Եվ արցունքս ընկավ մրոտ
Ածուխների կույտին թաց:

*(1912)*

## ДЕРЕВЕНСКАЯ ИЗБЕНКА

Ветхая избенка
Горя и забот,
Часто плачет вьюга
У твоих ворот.

Часто раздаются
За твоей стеной
Жалобы на бедность,
Песни звук глухой.

Всё поют про горе,
Про тяжелый гнет,
Про нужду лихую
И голодный год.

Нет веселых песен
Во стенах твоих,
Потому что горе
Заглушает их.

*⟨1912⟩*

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀՅՈՒՂԱԿ

Ո՜վ հինավուրց հյուղակ՝
Վիշտ ու կարիքոտ,
Բուքն է լալիս շարունակ
Քո դարպասի մոտ:

Եվ հնչում են հաճախ
Քո շեմից խարխուլ,
Հոգսի բողոքն անճար,
Երգի ձայներ խուլ:

Միշտ նույն երգն են ասում
Ծանր ու բիրտ կյանքի,
Սովի տարվա մասին
Ու ծով տանջանքի:

Չկան ուրախ երգեր
Քո ներսում սրտանց,
Քանզի վիշտն է կերկեր
Խլացնում նրանց:

*(1912)*

## ОТОЙДИ ОТ ОКНА

Не ходи ты ко мне под окно
И зеленой травы не топчи,
Я тебя разлюбила давно,
Но не плачь, а спокойно молчи.

Я жалею тебя всей душою,
Что тебе до моей красоты?
Почему не даешь мне покою
И зачем так терзаешься ты?

Все равно я не буду твоею,
Я теперь не люблю никого,
Не люблю, но тебя я жалею,
Отойди от окна моего!

Позабудь, что была я твоею,
Что безумно любила тебя,
Я теперь не люблю, а жалею —
Отойди и не мучай меня.

*⟨1912⟩*

## ՀԵՌԱՑԻ՛Ր ԻՄ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ

Մի՛ արի ինձ մոտ՝ պատուհանիս տակ,
Եվ կանաչ խոտը դու մի՛ տրորիր,
Ես քեզ էլ վաղուց չեմ սիրում իսպառ,
Բայց դու մի՛ լացիր, այլ հանգիստ լռիր:

Ես ափսոսում եմ քեզ ամբողջ հոգով,
Իմ վեհության հետ դու ի՞նչ գործ ունես,
Եվ ինչո՞ւ դու ինձ հանգիստ չես տալիս,
Եվ ինչո՞ւ այդպես հոգիդ տանջում ես:

Մեկ է, ես քոնը չե՛մ լինի երբեք,
Ես էլ չեմ սիրում արդեն ոչ մեկին,
Չե՛մ սիրում, բա՜յց և կարեկցում եմ քեզ,
Հեռացի՛ր դու շուտ, թող իմ ապակին:

Մոռացի՛ր, որ ես եղել եմ քոնը,
Որ քեզ սիրել եմ խելագարի պես,
Հիմա չեմ սիրում, այլ քեզ խղճում եմ,
Հեռացի՛ր և ինձ մի՛ տանջիր այդպես:

*(1912)*

## ВЕСЕННИЙ ВЕЧЕР

Тихо струится река серебристая
В царстве вечернем зеленой весны.
Солнце садится за горы лесистые.
Рог золотой выплывает луны.

Запад подернулся лентою розовой,
Пахарь вернулся в избушку с полей,
И за дорогою в чаще березовой
Песню любви затянул соловей.

Слушает ласково песни глубокие
С запада розовой лентой заря.
С нежностью смотрит на звезды далекие
И улыбается небу земля.

*⟨1912⟩*

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԻՐԻԿՈՒՆ

Գետակն արծաթ խոխոջում է մեղմ ու թեթև
Կանաչ գարնան իրիկնային անդորրում:
Արփին իջնում անտառապատ լեռան ետև,
Լուսնի դեղին ոսկեղջյուրն է դուրս լողում:

Արևմուտքն իր ծիրանավառ գոտին կապեց,
Եվ հերկվորը հյուղն իր դարձավ դաշտերից,
Ճամփից անդին կեչիների լույս սափորում
Սոխակն անուշ սիրո երգն է տարփողում:

Արևմուտքից արշալույսը լաջվարդ քողով
Այդ երգերն է լսում խորն ու քնքշագին,
Եվ հեռավոր աստղերին է նայում դողով,
Ու ժպտում է մայր երկիրը երկնքին:

*(1912)*

* * *

И надо мной звезда горит,
Но тускло светится в тумане,
И мне широкий путь лежит,
Но он заросший весь в бурьяне.

И мне весь свет улыбки шлет,
Но только полные презренья,
И мне судьба привет несет,
Но слезы вместо утешенья.

*⟨1912⟩*

***

Եվ իմ  վերևում մի աստղ է վառվում,
Բայց աղոտ է լույս տալիս խավարում,
Եվ իմ դեմ մի լայն ուղի է փռվում,
Բայց նա կորած է մոլախոտերում:

Ինձ ժպիտներ է ողջ երկիրն հղում,
Բայց դրանք լի են քամահրանքով,
Եվ բախտն ինձ կարծես ողջույն է բերում,
Բայց լոկ արցունքներ՝ սփոփանքի տեղ:

*(1912)*



Սերգեյ Եսենին

*Գործ՝ Գ. Գրիգորյանի (Ջիոտտո)*



*«Տասնյոթ տարեկան էի,*
*երբ առաջին անգամ գնացի Մոսկվա»*
*(1912 թ.)*



Ս. Եսենինի ծնողները՝

Ալեքսանդր Նիկիտիչ Եսենինը և Տատյանա Ֆեոդորովնա Տիտովան



Բանաստեղծի հայրական կողմից պապի՝ Նիկիտա Օսիպովիչ Եսենինի տունը Կոստանտինովոյում, որտեղ 1895 թ. ծնվել է Ս. Ա. Եսենինը



Տեսարան Ս. Ա. Եսենինի ծննդավայր Կոստանտինովո գյուղից



Սերյոժա Եսենինը
(երկրորդ շարքում աջից՝ առաջինը)
իր հասակակիցների հետ
Կոնստանտինովոյում
*(1909-1910 թթ.)*



Սերգեյ Եսենինը քույրերի՝
Կատյայի և Շուրայի հետ
*(1912 թ.)*



Փայտաշեն այս դպրոցում է սովորել ապագա մեծ բանաստեղծը



Սպաս-Կլեպիկովսկի եկեղեցական-ուսուցչական սեմինարիայի շենքը,
որտեղ 1907-1909 թթ. սովորել է Ս. Եսենինը



Ս. Եսենին *(1913 թ.)*



Ս. Եսենին *(1913 թ.)*



Ս. Եսենին *(1914 թ.)*



Ս. Եսենին *(1915 թ.)*




Ս. Ա. Եսենինի բանաստեղծությունների առաջին ժողովածուի՝ «Ռադունիցա»-ի շապիկը

*(1916 թ.)*

*«Այն լույս է տեսել
1915 թ. նոյեմբերին՝ 1916 թ. նշումով»:
Բանաստեղծի «Ինքնակենսագրությունից»*



Բանաստեղծի երգած Ռյազանյան ձիեր



Ռյազանյան կեչիներ՝ Օկա գետի ափերին

## ИСПОВЕДЬ САМОУБИЙЦЫ

Простись со мною, мать моя,
Я умираю, гибну я!
Больную скорбь в груди храня,
Ты не оплакивай меня.

Не мог я жить среди людей,
Холодный яд в душе моей.
И то, чем жил, и что любил
Я сам безумно отравил.

Своею гордою душой
Прошел я счастье стороной.
Я видел пролитую кровь
И проклял веру и любовь.

Я выпил кубок свой до дна.
Душа отравою полна,
И вот я гасну в тишине,
Но пред кончиной легче мне.

Я стер с чела печать земли,
Я выше трепетных в пыли,
И пусть живут рабы страстей,
Противна страсть душе моей.

# ԻՆՔՆԱՍՊԱՆԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հրաժեշտ տո՛ւր ինձ, մա՛յր իմ վշտամած,
Ես մահանում եմ, հեռանում կյանքից:
Անհուն կսկիծը կրծքիդ տակ պահած
Մի՛ ողբա իզուր, մի՛ սգա դու ինձ:

Ես էլ չեմ կարող մարդկանց մեջ շրջել՝
Դառն ու պաղ թույնը հոգուս մեջ տկար:
Ինչով ապրել եմ և այն, ինչ շնչել,
Թունավորել եմ ինքս խելագար:

Իմ հպարտ հոգով անցել եմ հաճախ
Ես բախտի կողքով կույր ու անտարբեր,
Տեսել եմ հեղված արյուն ու վախճան,
Ու նզովել եմ և՛ հավատ, և՛ սեր:

Թասն իմ քամել եմ ես մինչև մրուր,
Եվ հոգիս լիքն է թույնով մահաբեր,
Ահա հանգչում եմ խաղաղ ու անլուր,
Բայց մահից առաջ զգում եմ թեթև:

Երկրի կնիքն եմ դեմքիցս ջնջել,
Ես բարձր եմ փոշում գալարվող մարդուց,
Կրքերի ճորտերն հանգիստ թող ննջեն,
Կիրքն անհարիր է իմ հարուստ հոգուն:

Безумный пир, кошмарный сон,
А жизнь есть песня похорон,
И вот я кончил жизнь мою,
Последний гимн себе пою.

А ты с тревогою больной
Не плачь напрасно
Надо мной.

*⟨1912 – 1913⟩*

Խելահեղ խնջույք, տանջալից երազ,
Իսկ կյանքը տաղտուկ մի երգ է թաղման,
Եվ ահա ես իմ կյանքին վերջ տվի,
Եվ վերջին ձոնն եմ երգում ինձ համար:

Իսկ դու, հիվանդոտ տագնապով հիմա
Իզուր մի ողբա, մա՛յր իմ,
Ինձ վրա:

*(1912-1913)*

* * *

Я положил к твоей постели
Полузавядшие цветы,
И с лепестками помертвели
Мои усталые мечты.

Я нашептал моим левкоям
Об угасающей любви,
И ты к оплаканным покоям
Меня уж больше не зови.

Мы не живем, а мы тоскуем,
Для нас мгновенье красота,
Но не зажжешь ты поцелуем
Мои холодные уста.

И пусть в мечтах я все читаю:
«Ты не любил, тебе не жаль»,
Зато я лучше понимаю
Твою любовную печаль.

*⟨1912–1913⟩*

***

Ես քո սնարին դրել եմ անփույթ
Մի փունջ ծաղիկներ կիսաթոշնած,
Եվ թերթերի հետ նրանց դալկաշուրթ
Դժգունել են իմ խոհերն հոգնած:

Ու ես շշուկով իմ շապրակներին
Պատմել եմ մարող սիրո մասին,
Եվ դու քո հանգիստ լացով մտերիմ
Էլ ինձ մի կանչիր կյանքում այս սին:

Մենք արդ թախծում ենք և ոչ թե ապրում,
Պահը մեզ համար գանձ է չքնաղ,
Բայց քո համբույրով ջերմ ու անդադրում
Դու էլ չես այրի շուրթերն իմ պաղ:

Քո հոգում ես միշտ կարդում եմ թեև.
«Քեզ համար ի՞նչ փույթ, դու չես սիրել»,-
Բայց ես հո լավ եմ հասկանում նաև
Քո այդ սիրային թախիծն անվերջ:

*(1912-1913)*

* * *

Грустно... Душевные муки
Сердце терзают и рвут,
Времени скучные звуки
Мне и вздохнуть не дают.
Ляжешь, а горькая дума
Так и не сходит с ума...
Голову кружит от шума.
Как же мне быть... и сама
Моя изнывает душа.
Нет утешенья ни в ком.
Ходишь едва-то дыша.
Мрачно и дико кругом.
Доля, зачем ты дана!
Голову негде склонить,
Жизнь и горька и бедна,
Тяжко без счастия жить.

*⟨1913⟩*

***

Տխուր է... հոգու տառապանքները
Սիրտս կրծում են, անվերջ մաշում,
Եվ ժամանակի թախծոտ ձայները
Նույնիսկ չեն թողնում, որ շունչ քաշեմ:
Պառկում ես, սակայն, խոհերը դառն
Մտքիցդ իսկի չեն հեռանում,
Ու պտտվում է գլուխդ խառն...
Ես ինչպե՞ս վարվեմ... Չեմ իմանում:
Հոգիս ինքնիրեն տանջվում է իզուր,
Սփոփանք չկա ոչ մի բանում,
Հազիվ շնչելով քայլում ես տխուր,
Շուրջդ մռայլ է, բիրտ ու անհուն:
Բա՛խտ, էլ ինչո՞ւ ես դու վերուստ տրված,
Գլուխ դնելու երբ տեղ չկա,
Կյանքն աղքատ է և դառն է, ու դժվար՝
Ապրելն առանց երջանկության:

*(1913)*

* * *

Ты плакала в вечерней тишине,
И слезы горькие на землю упадали,
И было тяжело и так печально мне,
И все же мы друг друга не поняли.
Умчалась ты в далекие края,
И все мечты увянули без цвета,
И вновь опять один остался я
Страдать душой без ласки и привета.
И часто я вечернею порой
Хожу к местам заветного свиданья,
И вижу я в мечтах мне милый образ твой,
И слышу в тишине тоскливые рыданья.

*⟨1913⟩*

***

Լալիս էիր դու իրիկվա  մով անդորրում,
Արցունքներդ ընկնում էին դառն հողին,
Եվ իմ սրտից ծով թախիծն էր ծանր ծորում,
Բայց մենք իրար չհասկացանք, մութ էր ուղին:
Դու սլացար հեռու ափեր, և իմ բոլոր
Երազները դեռ չծաղկած թառամեցին,
Ու մնացի ես մենակ ու դարձյալ մոլոր
Հոգով, առանց սեր ու գորով, տառապելու:
Եվ ես հաճախ գնում եմ ջինջ մայրամուտին
Մեր հանդիպման վայրերն այն սուրբ ու բաղձալի,
Ու երազով քո նուրբ տեսքն եմ տեսնում մութին
Եվ լսում եմ լռության մեջ հեծկլտանքը քո թախծալի:

*(1913)*

## У МОГИЛЫ

*На память об усопшем*

В этой могиле под скромными ивами
Спит он, зарытый землей,
С чистой душой, со святыми порывами,
С верой зари огневой.
Тихо погасли огни благодатные
В сердце страдальца земли,
И на чело, никому не понятные,
Мрачные тени легли.
Спит он, а ивы над ним наклонилися,
Свесили ветви кругом,
Точно в раздумье они погрузилися,
Думают думы о нем.
Тихо от ветра, тоски напустившего,
Плачет, нахмурившись, даль.
Точно им всем безо времени сгибшего
Бедного юношу жаль.

*⟨1913⟩*

# ՇԻՐԻՄԻ ՄՈՏ

*Ի հիշատակ ննջեցյալի*

Շիրիմում այս պաղ, ուռիների տակ խոնարհ,
Հանգչում է նա՝ հողում թաղված, լուռ ու մունջ,
Մաքուր հոգում սուրբ պոռթկումներ անհամար,
Արշալույսի վառ հավատով անմռունչ:
Խաղաղ հանգան կրակները բարեծին
Սրտում երկրի տառապյալի անմեկին,
Ու ճակատին իջան, մռայլ փռվեցին
Ստվերները խորախորհուրդ ամենքին:
Ննջում է նա, ուռիները գլխիկոր
Նուրբ շյուղերն են կախել շուրջը տրտմաշուք,
Ու մշուշում նրանք նույնպես ծանրախոհ
Անրջում են նրա մասին անշշուկ:
Ամպոտ հեռուն մեղմիկ քամուց թախծածոր
Լալիս է, և կնճիռներն են խտանում,
Նրանք բոլորն ափսոսում են վշտով խոր
Կյանքից շատ վաղ անցած այդ խեղճ պատանուն:

*(1913)*

## БЕРЕЗА

Белая береза
Под моим окном
Принакрылась снегом,
Точно серебром.

На пушистых ветках
Снежною каймой
Распустились кисти
Белой бахромой.

И стоит береза
В сонной тишине,
И горят снежинки
В золотом огне.

А заря, лениво
Обходя кругом,
Обсыпает ветки
Новым серебром.

*⟨1913⟩*

# ԿԵՉԻՆ

Սպիտակ կեչին
Պատուհանիս տակ,
Ձյուների միջին
Արծաթ է իստակ:

Խավոտ ճյուղերին
Ձյունե կոպերով,
Փնջերն են կախվել
Ճերմակ ծոպերով:

Կանգնած է կեչին
Քնատ անդորրում,
Փաթիլներն են ջինջ
Ոսկեհուր վառվում:

Իսկ այգը, ծույլ-ծույլ,
Անցնում է մոտով
Ու ճյուղերն օծում
Մի նոր արծաթով:

*(1913)*

## МИКОЛА

### 1

В шапке облачного скола,
В лапоточках, словно тень,
Ходит милостник Микола
Мимо сел и деревень.

На плечах его котомка,
Стягловица в две тесьмы,
Он идет, поет негромко
Иорданские псалмы.

Злые скорби, злое горе
Даль холодная впила;
Загораются, как зори,
В синем небе купола.

Наклонивши лик свой кроткий,
Дремлет ряд плакучих ив,
И, как шелковые четки,
Веток бисерный извив.

Ходит ласковый угодник,
Пот елейный льет с лица:
«Ой ты, лес мой, хороводник,
Прибаюкай пришлеца».

# ՄԻԿՈԼԱ

## 1

Ամպի ջարդվածքի նման գլխարկով,
Ու տրեխներով՝ ստվերի նման,
Հյուղակների ու գյուղերի կողքով
Քայլում է պանդուխտ գթոտ Միկոլան:

Նրա ուսերին մախաղ է մաշված՝
Երկտակ թելերով շուլալված ամուր,
Նա քայլում է ու երգում մեղմաձայն
Հին հորդանանյան սաղմոսներ անուշ:

Դառը կսկիծն ու վշտերը դաժան
Ցուրտ հեռաստանն է ներծծել իր մեջ,
Վառվում են, ինչպես լույսը վաղորդյան,
Կապույտ երկնքում գմբեթները պերճ:

Հեզ դեմքերն իրենց լուռ խոնարհելով՝
Լալկան ուռենու շարքերն են նիրհում,
Եվ, ինչ հաշվիչի մետաքս ուլունքներ,
Թավիշ ճյուղերն են գալարվում սիրուն:

Գնում է հուշիկ մարդը սրբակյաց,
Դեմքից եղևնու քրտինքն է հորդում.
«Ո՞վ դու, իմ անտա՛ռ, խմբապար բռնած,
Օրորի՞ր երգով քո եկվոր որդուն»:

2

Заневестилася кругом
Роща елей и берез.
По кустам зеленым лугом
Льнут охлопья синих рос.

Тучка тенью расколола
Зеленистый косогор...
Умывается Микола
Белой пеной из озер.

Под березкою-невестой,
За сухим посошником,
Утирается берестой,
Словно мягким рушником.

И идет стопой неспешной
По селеньям, пустырям:
«Я, жилец страны нездешной,
Прохожу к монастырям»

Высоко стоит злотравье,
Спорынья кадит туман:
«Помолюсь схожу за здравье
Православных христиан».

2

Եղևնուտի ու կեչուտի ամբողջ
Պուրակն է մեկեն հարսնացու դարձել,
Կանաչ թավուտի թփերին դողդոջ
Արծաթ ցողերի խծուծն է կառչել:

Բարձր բլուրի սիզավետ լանջն է
Զարդուխուրդ արել ամպն իր ստվերով...
Եվ լվացվում է Միկոլան տանջված
Կապույտ լճերի ճերմակ փրփուրով:

Հարսնացած կեչու ստվերում նրբին,
Ցուպի ետևում, ճյուղերի տակ չոր,
Կնձնու կեղևով երեսն է սրբում,
Ասես մի փափուկ ձեռքի սրբիչով:

Եվ նա գնում է անշտապ քայլքով,
Հեռու գյուղերով ու լերկ հանդերով.
«Ես՝ բնակիչս, ուրիշ երկրի,
Շրջում եմ այստեղ հին-հին վանքերով»:

Բարձր կանգնած են խոտերը փշոտ,
Ժանգ է խնկարկում մշուշը մոտիկ.
«Կերթա՛մ, կաղոթե՛մ՝ ոտքերս փոշոտ,
Հանուն ողջության ուղղափառ հոտի»:

### 3

Ходит странник по дорогам,
Где зовут его в беде,
И с земли гуторит с богом
В белой туче-бороде.

Говорит господь с престола,
Приоткрыв окно за рай:
«О мой верный раб, Микола,
Обойди ты русский край.

Защити там в черных бедах
Скорбью вытерзанный люд.
Помолись с ним о победах
И за нищий их уют».

Ходит странник по трактирам,
Говорит, завидя сход:
«Я пришел к вам, братья, с миром -
Исцелить печаль забот.

Ваши души к подорожью
Тянет с посохом сума.
Собирайте милость божью
Спелой рожью в закрома».

3

Քայլում է պանդուխտն օտար ճամփեքով,
Ուր որ կանչում են փորձության ժամին,
Վարից խոսում է նա ամպ-մորուքով
Աստծո հետ՝ նստած ճերմակ իր գահին:

Տերը, նրա հետ խոսելով վերից,
Դրախտի դուռն է կիսաբաց անում.
«Օ՜, իմ նվիրյալ ծառա, Միկոլա՛,
Անցիր դու Ռուսաց երկրով անհուն:

Պաշտպանիր այնտեղ դժբախտության մեջ
Վշտով տառապող խեղճ ժողովրդին,
Աղոթիր հանուն հաղթության անվերջ
Եվ հանուն նրանց կենցաղի՝ խրթին»:

Պանդուխտն անցնում է հին պանդոկներով
Եվ ասում մարդկանց. «Եկել եմ ձեզ մոտ
Ես խաղաղ հոգով ու խորունկ սիրով
Հոգսերի ցավը բուժելու թախծոտ:

Ձեր հոգիները մախաղն է ձգում
Յուղի հետ մեկտեղ դեպի մութ ճամփան:
Հավաքե՛ք Աստծո ողորմությունը
Եվ ամբարեցեք հասուն աշորան»:

**4**

Горек запах черной гари,
Осень рощи подожгла.
Собирает странник тварей,
Кормит просом с подола.

«Ой, прощайте, белы птахи,
Прячьтесь, звери, в терему.
Темный бор, – щекочут свахи, –
Сватай девицу-зиму».

«Всем есть место, всем есть логов,
Открывай, земля, им грудь!
Я – слуга давнишний богов –
В божий терем правлю путь».

Звонкий мрамор белых лестниц
Протянулся в райский сад;
Словно космища кудесниц,
Звезды в яблонях висят.

На престоле светит зорче
В алых ризах кроткий Спас;
«Миколае-чудотворче,
Помолись ему за нас».

4

Թավ պուրակներն է աշունը վառել,
Եվ դառն է հոտը սև այրվածքների:
Եկվորն հավքերին իր շուրջը առել
Ու հատիկներ է ուտեցնում փեշից:

«Օ՜, մնաք բարով, իմ ճերմակ հավքեր,
Գազաննե՛ր, փախե՛ք, որջերը մտեք,
Մթին անտառը,- լսել են ովքեր,-
Պիտի պսակել կույս ձյուն-ձմռան հետ»:

«Բոլորն ունեն տեղ, բոլորն ունեն բույն,
Բացի՜ր, ո՜վ մայր հող, ծով կուրծքդ նրանց:
Ես՝ աստվածների ծառան հինավուրց,
Տիրոջ դղյակն է տանում ինձ ճամփան»:

Ձնգուն մարմարը լույս սանդուղքների,
Ձգվում է մինչև դրախտի այգին,
Հանց փռչոտ մազեր չար փիսիկների,
Աստղերն են կախվել խնձորի ծառին:

Ավելի վառ է լույս տալիս գահին
Համեստ Փրկիչը՝ շուրջառը վրան,
«Ո՜վ հրաշագործ Միկոլա, գնա՛
Եվ մեր փոխարեն աղոթիր նրան»:

## 5

Кроют зори райский терем,
У окошка божья мать
Голубей сзывает к дверям
Рожь зернистую клевать.

«Клюйте, ангельские птицы:
Колос – жизненный полет».
Ароматней медуницы
Пахнет жней веселых пот.

Кружевами лес украшен,
Ели словно купина.
По лощинам черных пашен –
Пряжа выснежного льна.

Засучивши с рожью полы,
Пахаря трясут лузгу,
В честь угодника Миколы
Сеют рожью на снегу.

И, как по траве окосья
В вечереющий покос,
На снегу звенят колосья
Под косницами берез.

*1913 – ⟨август 1914⟩*

### 5

Մայրամուտն է փակում դուռը դրախտի,
Իսկ Տիրամայրը պատուհանի դեմ
Աղավնիներին իր մոտ է կանչում,
Որ աշորայի հատիկներ ուտեն:

«Ո՞վ հրեշտակային թռչնակնե՛ր, կտցե՛ք,
Հասկը կենսատու թռիչքն է կյանքի»,
Սեղվախոտից էլ քաղցր է բուրում
Ծղնոտի ուրախ քրտինքը անգին:

Ճոխ ժանյակներով անտառն է զուգված,
Եղևնիներն ասես թփուտներ լինեն:
Իսկ սև հերկերի խոր ակոսներում
Ձյան պես ճերմակ հյուսվածքն է վուշի:

Վուշի արտերում փեշերը քշտած,
Կանայք ունդերից կճեպն են հանում
Ու թափառական Միկոլի պատվին
Չոր աշորա են ձյուներին ցանում:

Եվ, ինչպես խոտին գերանդու կոթերն
Իրիկնամուտի քաղի ժամանակ,
Այնպես էլ ձյունին հասկերն են խշշում,
Կեչիներիի նուրբ ծամթելների տակ:

*1913 - (օգոստոս 1914)*

* * *

На небесном синем блюде
Желтых туч медовый дым.
Грезит ночь. Уснули люди,
Только я тоской томим.

Облаками перекрещен,
Сладкий дым вдыхает бор.
За кольцо небесных трещин
Тянет пальцы косогор.

На болоте крячет цапля;
Четко хлюпает вода,
А из туч глядит, как капля,
Одинокая звезда.

Я хотел бы в мутном дыме
Той звездой поджечь леса
И погинуть вместе с ними,
Как зарница в небеса.

*⟨1913 – 1914?⟩*

* * *

Երկնի կապույտ սկուտեղին լայնանիստ
Խիտ ամպերի դեղին ծուխն է մեղրածոր,
Մութն է խոկում, մարդիկ քնած են հանգիստ,
Միայն ես եմ անրջում ու թախծում խոր:

Ամպերով է խաչվել հեռուն միգապատ,
Եվ սոճուտի անուշ ծուխն է խտանում,
Լեռնալանջն իր սապատները, ինչպես մատ,
Երկարում է երկնի ճեղքի մատանուն:

Խոր ճահճուտում ձկնկուլն է կռնչում,
Ջուրն է ճողփում նա կտուցով իր հատու,
Ամպի միջից մեն մի աստղ է վար նայում
Ու ծորում է ինչպես կաթիլն արցունքի:

Ես կուզեի պղտոր ծխում այդ խավար,
Այդ մեկ աստղով անտառները հրդեհել,
Ու նրա հետ, ինչպես փայլակ հրավառ,
Անվերջ կիզվել ու լույս տալով թռչել վեր:

*(1913-1914)*

* * *

Зашумели над затоном тростники.
Плачет девушка-царевна у реки.

Погадала красна девица в семик.
Расплела волна венок из повилик.

Ах, не выйти в жены девушке весной,
Запугал ее приметами лесной.

На березке пообъедена кора, –
Выживают мыши девушку с двора.

Бьются кони, грозно машут головой, –
Ой, не любит черны косы домовой.

Запах ладана от рощи ели льют,
Звонки ветры панихидную поют.

Ходит девушка по бережку грустна,
Ткет ей саван нежнопенная волна.

*1914*

* * *

Գետախորշում զով զեփյուռից եղեգները սրսփացին,
Գեղեցկուհին իր չար բախտից արտասվում է ջրի ափին:

Ջատկի տոնին վիճակ հանեց, պսակ հյուսեց դաղձի ծաղկից,
Բայց ալիքը քանդեց նրա այդ հյուսվածքը վերադարձին:

- Ա՜խ, նա մարդու էլ չի գնա, այս գարնանը դրվի պսակ,-
Վախեցնում են մութ անտառի նշանները չարագուշակ:

Ճերմակ կեչու խաս կեղևն է քամին պոկել կրծքի տակից,
Եվ աղջկան գորշ մկները դուրս են քշում իրենց բակից:

Գլուխները թափահարում, դոփդոփում են ձիերն ուժգին,
- Օ՜, չի սիրում սև հյուսքերը տան պահապան արթուն ոգին:-

Մոտ պուրակից եղևնուտի խնկաբույրն է առատ հորդում,
Քամիներն են անվերջ զնգում, հոգեհանգիստ ասես կարդում:

Գետի ափով կույսը այսպես լուռ քայլում է թախծամորմոք,
Իսկ ալիքը ձյունափրփուր նուրբ պատանք է հյուսում անհոգ:

*1914*

* * *

Край любимый! Сердцу снятся
Скирды солнца в водах лонных.
Я хотел бы затеряться
В зеленях твоих стозвонных.

По меже, на переметке,
Резеда и риза кашки.
И вызванивают в четки
Ивы – кроткие монашки.

Курит облаком болото,
Гарь в небесном коромысле.
С тихой тайной для кого-то
Затаил я в сердце мысли.

Все встречаю, все приемлю,
Рад и счастлив душу вынуть.
Я пришел на эту землю,
Чтоб скорей ее покинуть.

*1914*

* * *

Սիրասո՜ւն եզերք, սիրտս է երազում
Արևի դեզեր լճերի ծոցում:
Ես կուզենայի կորչել զովասուն
Հազարաշշուկ քո կանաչ բոցում:

Արտերի շուրջն ու սահմանամիջին՝
Երեքնուկների շուրջառ ու հափրուկ:
Եվ զնգացնում են հատերն հաշվիչի
Ուռիներն, ինչպես հեզ միանձնուհիք:

Իր ծուխն է ճամփում ճահիճն ամպերին
Ու խանձահոտով երկինքն է պատում:
Ես ինչ-որ մեկի համար հույժ գաղտնի
Սրտիս մեջ թաքուն մտքերս եմ պահում:

Բոլորին տեսնում, բոլորն ընդունում,
Եվ ուրախությամբ հոգիս դուրս կտամ:
Ես հայտնվել եմ այս դառն աշխարհում,
Որ այն շուտ թողնեմ, ընդմիշտ հեռանամ:

*1914*

## ОСЕНЬ

*Р. В. Иванову*

Тихо в чаще можжевеля по обрыву.
Осень – рыжая кобыла – чешет гриву.

Над речным покровом берегов
Слышен синий лязг ее подков.

Схимник-ветер шагом осторожным
Мнет листву по выступам дорожным

И целует на рябиновом кусту
Язвы красные незримому Христу.

*1914⟨?⟩*

# ԱՇՈՒՆ

*Ռ. Վ. Իվանովին*

Գիհիների թավուտի մեջ, զառիթափին խորունկ,
Աշունը մի աշխետ զամբիկ, բաշն է խաղաղ քորում:

Գետափերի դեղնափրփուր ծածկոցի տակ անփույթ,
Խաս պայտերի շաչյուններն են լսվում նրա կապույտ:

Սքեմավոր քամին զգույշ իր թևերով անթիվ
Տերևներին գիրկն է առնում ելուստներին ճամփի:

Եվ համբուրում արոսենու խիտ թփերի մեջ հիր
Աներևույթ Քրիստոսի խոր խոցերը կարմիր:

*(1914)*

* * *

Не ветры осыпают пущи,
Не листопад златит холмы.
С голубизны незримой кущи
Струятся звездные псалмы.

Я вижу – в просиничном плате,
На легкокрылых облаках,
Идет возлюбленная мати
С пречистым сыном на руках.

Она несет для мира снова
Распять воскресшего Христа:
«Ходи, мой сын, живи без крова,
Зорюй и полднюй у куста».

И в каждом страннике убогом
Я вызнавать пойду с тоской,
Не помазуемый ли богом
Стучит берестяной клюкой.

И может быть, пройду я мимо
И не замечу в тайный час,
Что в елях – крылья херувима,
А под пеньком – голодный Спас.

*1914*

* * *

Հողմերը չե՛ն, որ ծածկում են թավուտները,
Ոչ էլ սե՛զն է բլուրները ոսկեզօծում:
Այդ երկնքի աներևույթ խորաններից
Աստղաժխոր սաղմոսներն են անուշ ծորում:

Ես տեսնում եմ՝ կապտափիրփուր գլխաշորով,
Թեթևաթև ամպերի մեջ հրավառված
Տիրամայրն է վերից նայում սիրագորով՝
Մաքրամաքուր Աստծո որդուն գիրկը առած:

Նա բերում է բիրտ աշխարհի համար կրկին
Խաչ հանելու Քրիստոսին վերածնված.
«Գնա՛, որդյա՛կ, ապրի՛ր խեղճ ու առանց տանիք,
Լույսն ու մութը դիմավորիր թփին հենված»:

Եվ ամեն մի թափառական աղքատի մեջ
Ես կգնամ ճանաչելու խոր կարոտով,
Թե նա արդյոք Աստծո կողմից օծվածը չէ՞,
Որ շրջում է կեչուց հատած ձեռնափայտով:

Եվ կարող է, որ ես նրա կողքով անցնեմ,
Ու չտեսնեմ գաղտնախորհուրդ պահին հստակ,
Որ թփերում հրեշտակի նուրբ թևերն են,
Իսկ կոճղի տակ քաղցած Փրկիչն է նստած:

*1914*

## В ХАТЕ

Пахнет рыхлыми драченами;
У порога в дежке квас,
Над печурками точеными
Тараканы лезут в паз.

Вьется сажа над заслонкою,
В печке нитки попелиц,
А на лавке за солонкою —
Шелуха сырых яиц.

Мать с ухватами не сладится,
Нагибается низко́,
Старый кот к махотке крадется
На парное молоко.

Квохчут куры беспокойные
Над оглоблями сохи,
На дворе обедню стройную
Запевают петухи.

А в окне на сени скатые,
От пугливой шумоты,
Из углов щенки кудлатые
Заползают в хомуты.

*1914*

# ԽՐճԻԹՈՒՄ

Գաղջ ծվապուրն է լխկահոտ բուրում,
Կվասն է տաշտով դռան տակ դրված,
Հին վառարանի ժանգոտ ճեղքերում
Որդերն են սողում՝ խրձերով խրված:

Մուրն է գալարվում կաթսայի խուփին,
Մոխիր է մանում կրակը հանգած,
Սեղանին դրված թաց աղի կողքին
Հում ձվի լորձոտ կճեպն է ընկած:

Մայրն այս ամենից գլուխ չի հանում,
Մեջքից կորանում, հենվում է ցուպին,
Ծեր կատուն կաթի թարմ հոտը առնում,
Մարաղ է մտնում կճուճին մոտիկ:

Բակում կռթում են հավերն անհանգիստ՝
Թառած արորի մաշված կռնակին,
Իսկ աքլորները՝ ներդաշնակ ու խիստ,
Տալիս են իրենց պատարագն ուժգին:

Եվ պատուհանի փեղկերի տակից
Այդ երկյուղալի աղմուկից փախչում,
Բրդոտ քոթոթներն իջնում են հակից
Ու անուրի տակ սողալով թաքչում:

*1914*

* * *

Сторона ль моя, сторонка,
Горевая полоса.
Только лес, да посолонка,
Да заречная коса...

Чахнет старая церквушка,
В облака закинув крест.
И забольная кукушка
Не летит с печальных мест.

По тебе ль, моей сторонке,
В половодье каждый год
С подожочка и котомки
Богомольный льется пот.

Лица пыльны, загорелы,
Веки выглодала даль,
И впилась в худое тело
Спаса кроткого печаль.

*1914*

* * *

Ա՜յ թե երկիր իմ, հայրենի եզերք,
Դու անբախտության մի շերտ՝ երկնի տակ:
Միայն անտառ ու աղուտներ են թեք
Եվ գետամերձ մի ցամաք լեզվակ...

Հյուծվում է քո հին խուլ եկեղեցին՝
Խաչը երկնքի ամպերին նետած:
Դրա համար էլ կկուն վշտակիր
Տխուր ափերից չունի վերադարձ:

Այդ քո համար է, իմ վշտոտ երկիր,
Որ ամեն տարվա հեղեղին խորունկ
Փոքրիկ ցուպից ու մաշված տոպրակից
Ուխտավորության քրտինքն է ծորում:

Փոշոտ են դեմքերն արևահարված,
Եվ թարթիչներն են հողմերը կրծել,
Ու ներծծվել է մարմնում հյուծված
Մեր հեզ Փրկիչի տխրությունը ծեր:

*1914*

* * *

Чую радуницу божью –
Не напрасно я живу,
Поклоняюсь придорожью,
Припадаю на траву.

Между сосен, между елок,
Меж берез кудрявых бус,
Под венком, в кольце иголок,
Мне мерещится Исус.

Он зовет меня в дубровы,
Как во царствие небес,
И горит в парче лиловой
Облаками крытый лес.

Голубиный дух от бога,
Словно огненный язык,
Завладел моей дорогой,
Заглушил мой слабый крик.

Льется пламя в бездну зренья,
В сердце радость детских снов,
Я поверил от рожденья
В богородицын покров.

*1914*

* * *

Զգում եմ Աստծո երանությունը, -
Եվ իզուր չէ, որ ապրում եմ ու կամ,
Եվ խոնարհվելով ճամփեզրի թփին՝
Քար ու խոտերին խոր գլուխ կտամ:

Եղևնուտում ու սոճուտում մթին
Եվ կեչիների գանգուր գինդերում,
Փշե օղակով պսակը գլխին,
Հիսուսն է ասես աչքիս երևում:

Նա ինձ դեպի խոր կաղնուտն է կանչում,
Որտեղ երկնային դրախտն է հառնում,
Ու ծիրանագույն լույսի ճաճանչում
Ամպերով ծածկված անտառն է վառվում:

Աստծո տված աղավնառգին
Ասես կրակի լեզու է անշեջ,
Որ նվաճել է ճամփան իմ կյանքի
Եվ իմ թույլ ճիչն է խեղդել հոգուս մեջ:

Լցվում է բոցը անդունդը լույսի,
Սրտիս մեջ խինդն է մանկութ երազի,
Ես հավատում եմ իմ ծնված օրից
Սուրբ Աստվածամոր պաշտպանիչ քողին:

*1914*

* * *

По дороге идут богомолки,
Под ногами полынь да комли.
Раздвигая щипульные колки,
На канавах звенят костыли.

Топчут лапти по полю кукольни,
Где-то ржанье и храп табуна,
И зовет их с большой колокольни
Гулкий звон, словно зык чугуна.

Отряхают старухи дулейки,
Вяжут девки косницы до пят.
Из подворья с высокой келейки
На платки их монахи глядят.

На вратах монастырские знаки:
«Упокою грядущих ко мне»,
А в саду разбрехались собаки,
Словно чуя воров на гумне.

Лижут сумерки золото солнца,
В дальних рощах аукает звон...
По тени от ветлы-веретенца
Богомолки идут на канон.

*1914*

* * *

Ճանապարհով ուխտավորներն ուխտ են գնում,
Ոտքերի տակ՝ օշինդր ու կոշտուկներ:
Խանդակներում հենակներն են գործի դնում՝
Հեռացնելով սուր փշերն ու տատասկներ:

Տրեխներով անջրդեղի դաշտն են տանջում,
Եվ ինչ-որ տեղ խրխնջոցն է թաքունի,
Հեռվից զանգի զիլ ղողանջն է նրանց կանչում,
Ինչպես անհեղ շառաչյունը չուգունի:

Կանայք փոշոտ հանդերձներն են քամում տալիս,
Աղջիկները ծամ են հյուսում մինչ կրունկ:
Վեհ վանատան աբեղաներն առաջ գալիս
Ու տեսնում են եկվորների աչքն ու ունք:

Լայն դարպասի խորհուրդ-գիրն է մարդկանց կանչում.
«Եկողներին իմ մեջ հանգիստ ես կտամ»,
Իսկ թավ այգում գամփռները ո՜նց են հաչում,
Ասես գողի հոտ են առել կալատան:

Մթնշաղն է բորբ արևի ոսկին լիզում,
Հեռուն զանգի արձագանքն է կրկնում...
Թեշիկի պես ուռիների շուքով նազուն
Ուխտյալները ժամերգության են գնում:

*1914*

* * *

Край ты мой заброшенный,
Край ты мой, пустырь.
Сенокос некошеный,
Лес да монастырь.

Избы забоченились,
А и всех-то пять.
Крыши их запенились
В заревую гать.

Под соломой-ризою
Выструги стропил,
Ветер плесень сизую
Солнцем окропил.

В окна бьют без промаха
Вороны крылом,
Как метель, черемуха
Машет рукавом.

Уж не сказ ли в прутнике
Жисть твоя и быль,
Что под вечер путнику
Нашептал ковыль?

*1914*

* * *

Եզե՛րք, դու իմ, վաղուց լքված,
Դո՛ւ, երկիր իմ, լուռ ու անկյանք:
Խոտհարքեր են՝ հար չհնձված,
Անտառներ են, լճեր ու վանք:

Խեղճ ու խարխուլ խրճիթներ են,
Մունջ նիրհում են՝ մեջքից կքած:
Նրանց թեքված տանիքների
Գերաններն են խխմել մգլած:

Դարմանի շուրջ փայտամածեր՝
Ծղեպներով կապված իրար,
Գորշ բորբոսն է քամին բացել,
Կարկատում է շողերով վառ:

Ագռավներն են իջնում անվրեպ,
Լուսամուտին թևով բախվում,
Եվ թխենին, ինչպես մրրիկ,
Հեռվից ինձ է ձեռքով անում:

Մի՞թե հեքիաթ չէ մի խրթին,
Քո այս կյանքն ու բախտդ ննջած,
Մութում տեսնես հեգ ճամփորդին
Փետրախոտը ի՞նչ շշնջաց:

*1914*

* * *

Топи да болота,
Синий плат небес.
Хвойной позолотой
Взвенивает лес.

Тенькает синица
Меж лесных кудрей,
Темным елям снится
Гомон косарей.

По лугу со скрипом
Тянется обоз –
Суховатой липой
Пахнет от колес.

Слухают ракиты
Посвист ветряной...
Край ты мой забытый,
Край ты мой родной!..

*1914*

* * *

Ճահճուտներ ու խրուտներ են
Եվ երկնքի կապույտ սավան,
Ոսկեջրված փշատերև
Թավ անտառն է բուրում ալվան:

Ամռան հավքն է սաղմոս ասում
Գանգուրներում սեգ ծառերի,
Եղևնուտն է երազ տեսնում,
Ժխորն առնում խոտհարների:

Մարգագետնում ճռճռոցով
Սայլաշարն է ձգվում սիրուն,
Անիվներից լորուտի չոր
Խեժահոտն է անուշ բուրում:

Ուռիներն էլ՝ լուռ կռացած,
Սուր սուլոցն են լսում քամու...
Եզե՛րք, դու իմ, հար մոռացված,
Իմ հարազա՜տ եզերք անհուն...

*1914*

## ПОРОША

Еду. Тихо. Сльшны звоны
Под копытом на снегу,
Только серые вороны
Расшумелись на лугу.

Заколдован невидимкой,
Дремлет лес под сказку сна,
Словно белою косынкой
Подвязалася сосна.

Понагнулась, как старушка,
Оперлася на клюку,
А над самою макушкой
Долбит дятел на суку.

Скачет конь, простору много,
Валит снег и стелет шаль.
Бесконечная дорога
Убегает лентой вдаль.

*‹1914›*

# ՁՅՈՒՆԱՓՈՇԻ

Շուրջս լուռ է: Վարգում է ձիս,
Պայտերի տակ ձյունն է ճռռում,
Ագռավներն են միայն կողքիս`
Մարգագետնում թունդ կռկռում:

Եվ կախարդված անտառն օրոր,
Երազի մեջ նիրհում է լուռ,
Ճերմակածուփ գլխաշորով
Փաթաթվել է սոճին տխուր:

Կռացել է, ինչպես պառավ,
Ու հենվել է ցուպին ամուր,
Նրա բարձր ճյուղին թառած`
Փայտփորիկն է նինջս ցրում:

Ձիս թռչում է: Եվ անձանձիր
Ձյունն իր ճերմակ շալն է փռում,
Ու ձգվում է ճամփան անծիր,
Պարանի պես փախչում հեռուն:

*(1914)*

## СЕЛО

*(Из Тараса Шевченко)*

Село! В душе моей покой.
Село в Украйне дорогой,
И, полный сказок и чудес,
Кругом села зеленый лес.
Цветут сады, белеют хаты,
А на горе стоят палаты,
И перед крашеным окном
В шелковых листьях тополя,
А там всё лес, и всё поля,
И степь, и горы за Днепром...
И в небе темно-голубом
Сам бог витает над селом.

*⟨1914⟩*

## ԳՅՈՒՂ

*(Տարաս Շևչենկոյից)*

Գյուղ. իմ հոգում խաղաղ անդորր:
Գյուղ՝ իմ անգին Ուկրաինայում,
Շուրջը՝ փարթամ կանաչ անտառ,
Անբավ ասք ու հեքիաթ՝ ներսում:
Ծաղկուն այգիք, ճերմակ հյուղեր,
Լեռան ուսին՝ ճոխ պալատներ,
Պատուհաններ, ու նրանց տակ
Չիգ բարդիներ թավշատերև:
Հեռվում՝ դաշտեր ու անտառներ,
Իսկ Դնեպրից անդին՝ լեռներ...
Գյուղի վրա՝ լուրթ երկնքում
Աստված ինքն է հավերժ հսկում:

*(1914)*

* * *

Колокол дремавший
Разбудил поля,
Улыбнулась солнцу
Сонная земля.

Понеслись удары
К синим небесам,
Звонко раздается
Голос по лесам.

Скрылась за рекою
Белая луна,
Звонко побежала
Резвая волна.

Тихая долина
Отгоняет сон,
Где-то за дорогой
Замирает звон.

*⟨1914⟩*

* * *

Նիրհող զանգի ղողանջից
Բիլ դաշտերն արթնացան,
Եվ արևին ժպտաց ջինջ
Քնած աշխարհն անձայն:

Հնչյուններն այդ ցրվեցին,
Հասան երկնին կապույտ,
Զիլ ղողանջով փռվեցին
Անտառներին անփույթ:

Գետից անդին լուռ թաքչեց
Լուսնի լիրը պայծառ,
Ու մեղմ ձայնով կարկաչեց
Ալիքն աշխույժ, կայտառ:

Իսկ հովիտը՝ լո՜ւռ, խաղա՜ղ,
Վանեց իր խոր քունը,
Ճամփի եզրին, ինչ-որ տեղ,
Մարմրեց հնչյունը:

*(1914)*

## КУЗНЕЦ

Душно в кузнице угрюмой,
И тяжел несносный жар,
И от визга и от шума
В голове стоит угар.
К наковальне наклоняясь,
Машут руки кузнеца,
Сетью красной рассыпаясь,
Вьются искры у лица.
Взор отважный и суровый
Блещет радугой огней,
Словно взмах орла, готовый
Унестись за даль морей...
Куй, кузнец, рази ударом,
Пусть с лица струится пот.
Зажигай сердца пожаром,
Прочь от горя и невзгод!
Закали свои порывы,
Преврати порывы в сталь
И лети мечтой игривой
Ты в заоблачную даль.
Там вдали, за черной тучей,
За порогом хмурых дней,
Реет солнца блеск могучий
Над равнинами полей.

# ԴԱՐԲԻՆԸ

Հեղձուկն է խեղդում մռայլ դարբնոցում,
Շոգն՝ անտանելի ու ծանր է օդը,
Ճիչ ու աղմուկից բացի հնոցում
Գլուխդ է լցվում սուր ածխահոտը:
Կռանի շուրջը՝ մեջքից կռացած,
Ծեր դարբիններն են ձեռքերը ցնցում,
Ու կայծկլտում է ցանցը շիկացած,
Նրանց դեմքերից կայծեր են թռչում:
Եվ հայացքներում՝ խիզախ ու ցասկոտ,
Ծիածանվում է հուրը կրակի,
Պատրաստ են նրանք արծվի թափով
Հասնել հեռավոր ծովերի ակին...
Կոփի՛ր դու կամքդ ու թևե՛րդ՝ հույժ,
Եվ պոռթկումներդ դարձրու պողպատ,
Եվ երազներով սավառնիր աշխույժ
Հեռո՜ւ-հեռավոր ամպերից էլ շատ:
Կռի՛ր դու, դարբի՛ն, ուժգին հարվածով,
Դեմքիդ քրտինքը թող հոսի վարար,
Սիրտդ հրդեհի՛ր զարկերիդ կայծով,
Վիշտն ու կարիքը քեզնից հար վանի՛ր:
Եվ այնտեղ՝ մթին ամպերի հեռվում,
Մռայլ օրերիդ սահմանից անդին,
Հզոր արևի ցոլքերն են վառվում

Тонут пастбища и нивы
В голубом сиянье дня,
И над пашнею счастливо
Созревают зеленя.
Взвейся к солнцу с новой силой,
Загорись в его лучах.
Прочь от робости постылой,
Сбрось скорей постыдный страх.
. . . . . . . . . . . . .

*⟨1914⟩*

Եվ արոտներն ու արտերն են թաղվում
Օրերի կապույտ փայլերում անանց,
Եվ խոր հերկերին շողերն են մաղվում
Ու հասունանում ծաղիկ ու կանաչ:
Եվ դու նոր ուժով արևին ձգտի՛ր,
Թրծվի՛ր նրա շողերում պայծառ,
Զզվանք սարսափդ դու մի կողմ նետիր,
Եվ անդուր վախդ քեզնից հեռու տար:
. . . . . . . . . . . . . . .

*(1914)*

## С ДОБРЫМ УТРОМ!

Задремали звезды золотые,
Задрожало зеркало затона,
Брезжит свет на заводи речные
И румянит сетку небосклона.

Улыбнулись сонные березки,
Растрепали шелковые косы.
Шелестят зеленые сережки,
И горят серебряные росы.

У плетня заросшая крапива
Обрядилась ярким перламутром
И, качаясь, шепчет шаловливо:
«С добрым утром!»

*⟨1914⟩*

## ԲԱՐԻ՜ ԱՌԱՎՈՏ

Ոսկի աստղերը խաղաղ ննջեցին,
Եվ գետածոցի հայելին դողաց,
Այգը բացվեց ու լույսը նորածին
Երկնքի ցանցին վարդագույն շողաց:

Եվ կեչիները ժպտացին քնատ`
Քանդելով մետաքս ծամերը փարթամ:
Զնգացին կանաչ գինդերը նրանց,
Եվ հուրհրացին ջինջ ցողերն արծաթ:

Ցցերին հյուսված եղինջը ցանցառ
Վառ սադափով է զուգվել արևոտ,
Եվ, օրորվելով, կատակում կայտառ
Ու շշնջում է. «Բարի՜ առավոտ»:

*(1914)*

## ЕГОРИЙ

В синих далях плоскогорий,
В лентах облаков
Собирал святой Егорий
Белых волков.

«Ой ли, светы, [ратовой уж]
Слухайте мой глас.
У меня в лихом изгой уж
Есть поклон до вас.

Все волчицы строят гнезда
В муромских лесах.
В их глазах застыли звезды
На ребячий страх.

И от тех ли серолобых
Ваш могучий род,
Как и вы, сгорает в злобах
Грозовой 〈?〉 оплот.

Но недавно помирились
С русским мужиком.
Долго злились, долго бились
В пуще вы тайком.

Там с закатных поднебесий
Скачет враг – силен,
Как на эти ли полесья
Затаил полон.

# ԵԳՈՐԻ

Բիլ հեռուներում սարահարթերի,
Ամպերի ձգվող ժապավեններում
Շուրջն է ժողովում ճերմակ գայլերին
Մեր սուրբ Եգորին:

«Վա՜յ, դուք անվեհեր իմ աչքի լույսեր,
Խոսքն իմ լսեցե՛ք տեղին ու հարմար:
Չարության նոխազ, ո՜վ վտարյալնե՛ր,
Ես ողջույն ունեմ հիմա ձեզ համար:

Մուրմոնյան հեռու խոր անտառներում
Բոլոր մայր գայլերն հիմնում են բներ:
Նրանց աչքերում աստղերն են սառում,
Մանկամիտ վախն է սրտերում քնել:

Եվ ձեր մոխրագույն ճակատից է որ
Ձեր հզոր ցեղը, ինչպես նաև դուք,
Այրվում է ձեզ պես չարության մեջ խոր՝
Դարձած բռնկվող ցասմանը նեցուկ:

Բայց դե վերջերս ռուս գյուղացու հետ
Հաշտվել եք իբրև, և չի բացառվում,
Որ հույժ կատաղել, երկար կռվել եք
Ու մեկտեղ թաքուն փռվել անտառում:

Ուր մայրամուտի երկնքի տակից
Հանկարծ կարշավի ուժեղ թշնամին,
Հենց այդ հայրենի անտառն է ակից
Ուզում վերցնել նա այս նեղ ժամին:

Чую, выйдет лохманида –
Не ужиться вам,
Но уж черная планида
Машет по горам».

Громовень подняли волки:
«Мы ль трусовики!
Когти остры, зубы колки –
Разорвем в клоки!»

Собирались все огулом
Вырядить свой суд.
Грозным криком, дальним гулом
Замирал их гуд.

Как почуяли облаву,
Вышли на бугор.
«Ты веди нас на расправу,
Храбрый наш Егор!»

«Ладно, – молвил им Егорий, –
Я вас поведу
Меж далеких плоскогорий,
Укрочу беду».

Скачет всадник с длинной пикой,
Распугал всех сов.
И дрожит земля от крика
Волчьих голосов.

*⟨1914⟩*

Զգում եմ, կլինի լուրջ իրարանցում,
Երբեք միասին դուք չեք մերվելու,
Բայց սև բախտն արդեն ձեռքով է անում
Ու սավառնում է բարձր լեռներում»:

Լսեցին գայլերն ու որոտացին.
«Այդ մե՞նք ենք վախկոտ: Դա բնավ սո՛ւտ է,
Սուր ճանկեր ունենք, ժանիքներ՝ կացին,
Կպատառոտենք և հում-հում կուտենք»:

Եվ հավաքվեցին նրանք ոհմակով՝
Անելու ահեղ դատաստանն իրենց:
Ուժգին ոռնոցով, երկար աղմուկով
Հեռվում խլացան ձայները նրանց:

Հենց որ զգացին ընկել են դարան,
Բարձունքը ելան կաղկանձով մի գոռ:
«Դու տա՛ր մեզ այնտեղ,- հնչեց անվարան,-
Վրե՛ժ առնելու, մեր խիզախ Եգո՛ր»:

«Դե լա՛վ,- ասաց քաջ Եգորը նրանց,-
Ձեզ կառաջնորդեմ ինչպես զորավար,
Բարձր լեռների լանջերով անանց,
Որ մեղմեմ գալիք փորձանքն ահավոր»:

Սուրաց հեծյալը իր երկար տեգով,
Եվ թռան բոլոր բուերը ահից:
Եվ հողը դողաց ու պատվեց մեգով
Գայլերի ահեղ ոռնոցի ձայնից:

*(1914)*

## МОЛИТВА МАТЕРИ

На краю деревни старая избушка,
Там перед иконой молится старушка.

Молитва старушки сына поминает,
Сын в краю далеком родину спасает.

Молится старушка, утирает слезы,
А в глазах усталых расцветают грезы.

Видит она поле, поле перед боем,
Где лежит убитым сын ее героем.

На груди широкой брызжет кровь, что пламя,
А в руках застывших вражеское знамя.

И от счастья с горем вся она застыла,
Голову седую на руки склонила.

И закрыли брови редкие сединки,
А из глаз, как бисер, сыплются слезинки.

*⟨1914⟩*

# ՄՈՐ ԱՂՈԹՔԸ

Գյուղի եզրին, մի մենավոր ու հինավուրց խրճիթում,
Սրբապատկեր խորանի դեմ մի ծեր կին է աղոթում:

Աղոթում է նա տրտում, որդուն հիշում՝ վշտանում,
Որդին հեռու եզերքում հայրենիքն է պաշտպանում:

Աղոթում է մայրը ծեր, արցունքներն է սրբում դառն,
Իսկ հոգնատանջ աչքերում անուրջներն են ծաղկում վառ:

Կռվի դաշտն է նա տեսնում մարտից առաջ՝ իր չորս դին,
Ուր պառկած է սպանված նրա զինվոր քաջ որդին:

Եվ լայն կրծքից, ինչպես բոց, ալ արյունն է ցայտում հորդ,
Իսկ գոց ձեռքում՝ թշնամուց խլված դրոշն արյունոտ:

Հրճվանքի հետ մեկտեղ նա խոր վշտից կարկամեց,
Եվ գլուխը ալեհեր գոս ափերին վար գամեց:

Նոսըր վարսերն իջան ցած ու հոնքերը ծածկեցին,
Իսկ աչքերից, հանց ուլունք, արցունքները թափվեցին:

*(1914)*

## БОГАТЫРСКИЙ ПОСВИСТ

Грянул гром. Чашка неба расколота.
Разорвалися тучи тесные.
На подвесках из легкого золота
Закачались лампадки небесные.
Отворили ангелы окно высокое,
Видят – умирает тучка безглавая,
А с запада, как лента широкая,
Подымается заря кровавая.
Догадалися слуги божии,
Что недаром земля просыпается,
Видно, мол, немцы негожие
Войной на мужика подымаются.
Сказали ангелы солнышку:
«Разбуди поди мужика, красное,
Потрепи его за головушку,
Дескать, беда для тебя опасная».
Встал мужик, из ковша умывается,
Ласково беседует с домашней птицею,
Умывшись, в лапти наряжается
И достает сошники с палицею.
Думает мужик дорогой в кузницу:
«Проучу я харю поганую».
И на ходу со злобы тужится,
Скидает с плечей сермягу рваную.

# ԴՅՈՒՑԱԶՆԱԿԱՆ ՍՈՒԼՈՑ

Շանթը ճայթեց ու փշրվեց երկնի ափսեն,
Խիտ ամպերը ծվեն-ծվեն պատռտվեցին,
Ոսկեղեղին նուրբ թելերից կախված վսեմ,
Աստեղային կանթեղները լուռ ճոճվեցին:
Հրեշտակները բացին երկնի փեղկը վերին
Ու տեսան, թե ոնց է մեռնում ամպը խաղաղ,
Արևմուտքից, նման մի լայն ժապավենի,
Բարձրանում է արշալույսը արնաշաղախ:
Եվ Աստծո նաժիշտները գուշակեցին,
Որ իզուր չէ աշխարհին իր շուրջ պտույտ տալիս,
Երևում է՝ գերմանները զինվել կրկին
Ու մեծ կռվով մեր մուժիկի դեմ են գալիս:
Եվ դիմում են հրեշտակներն արեգակին.
«Գնա՛ շուտով, քաջ մուժիկին արթնացրու,
Ու գլուխը գզիր մի լավ, թափ տուր ուժգին,
Հայտնիր նրան, որ փորձանք է շուտով գալու»:
Ելավ մուժիկն ու շերեփով դեմքը ցողեց
Ու սիրալիր խոսեց տանու թռչնակի հետ,
Եվ լվացած կոշտ ձեռքերը հանգիստ յուղեց
Ու գութանի խոփը հանեց, ինչպես մի նետ:
Դարբնոցի ճամփին անձայն միտք է անում.
«Ես կջարդեմ կեղտոտ խոզի դունչը դրանց»:
Ու ընթացքում զայրույթին էլ չի դիմանում,

Сделал кузнец мужику пику вострую,
И уселся мужик на клячу брыкучую.
Едет он дорогой пестрою,
Насвистывает песню могучую,
Выбирает мужик дорожку приметнее,
Едет, свистит, ухмыляется,
Видят немцы – задрожали дубы столетние,
На дубах от свиста листы валятся.
Побросали немцы шапки медные,
Испугались посвисту богатырского...
Правит Русь праздники победные,
Гудит земля от звона монастырского.

*⟨1914⟩*

Դարբինն իսկույն կռում է մի սուրսայր նիզակ,
Եվ մուժիկն է արագ հեծնում պառավ իր ձին
Ու վարգում է դեպի կովի դաշտը շիտակ:
Եվ սուլոցով երգում է նա հզոր մի երգ,
Հետո ընկնում ձիուն հարմար մի լայն ճամփա,
Գնում է ու սուլում ուժգին, զվարթ խնդում,
Այդ սուլոցից կաղնիներն են դողում հսկա,
Տերևներն են թափվում կանաչ, շուրջը պատում:
Գերմանները գլխարկներն են մեկեն նետում՝
Սարսափելով սուլոցից այդ դյուցազնական...
Իսկ Ռուսիան հաղթանակն է հպարտ տոնում,
Եվ երկիրն է ցնծում ձայնից ժամերգության:

*(1914)*

## ЧТО ЭТО ТАКОЕ?

В этот лес завороженный,
По пушинкам серебра,
Я с винтовкой заряженной
На охоту шел вчера.
По дорожке чистой, гладкой
Я прошел, не наследил...
Кто ж катался здесь украдкой?
Кто здесь падал и ходил?
Подойду, взгляну поближе:
Хрупкий снег изломан весь.
Здесь вот когти, дальше – лыжи...
Кто-то странный бегал здесь.
Кабы твердо знал я тайну
Заколдованным речам,
Я узнал бы хоть случайно,
Кто здесь бродит по ночам.
Из-за елки бы высокой
Подсмотрел я на кругу:
Кто глубокий след далекий
Оставляет на снегу?..

*⟨1914⟩*

# ՍԱ Ի՞ՆՉ Է

Այս կախարդված խոր անտառը լայնածիր՝
Արծաթե նուրբ փետրիկներով զարդարված,
Որսի էի գնում երեկ անձանձիր,
Իմ մարտական հրացանով նոր լարված:
Հարթ ու մաքուր արահետով ես անցա,
Եվ ոչ մի հետք իմ ետևից ես չթողի...
Ո՞վ է այստեղ գլուխկոնծի տվել նոր,
Ո՞վ է սահել ու գլորվել գաղտագողի:
Մոտենում եմ ես ավելի ու նայում.
Փխրուն ձյունն է ամբողջովին խազմզվել:
Այստեղ՝ ճանկեր, այնտեղ՝ խորունկ դահուկներ...
Ինչ-որ մեկն է տարօրինակ վազվզել:
Եթե ես լավ իմանայի կախարդական
Պատկերների այս գաղտնիքը ցանկալի,
Ապա գոնե կիմանայի պատահական
Ո՞վ է այստեղ գիշերները ման գալիս:
Բարձրուղեշ եղևնուտից մենավոր
Կտեսնեի շրջանակի մեջ սիրով,
Թե ո՞վ է խոր հետքն իր թողնում հեռավոր
Ճերմակ ձյունին՝ մութ ու անտես գիշերով:

*(1914)*

## УЗОРЫ

Девушка в светлице вышивает ткани,
На канве в узорах копья и кресты.
Девушка рисует мертвых на поляне,
На груди у мертвых – красные цветы.

Нежный шелк выводит храброго героя,
Тот герой отважный – принц ее души.
Он лежит, сраженный в жаркой схватке боя,
И в узорах крови смяты камыши.

Кончены рисунки. Лампа догорает.
Девушка склонилась. Помутился взор.
Девушка тоскует. Девушка рыдает.
За окошком полночь чертит свой узор.

Траурные косы тучи разметали,
В пряди тонких локон впуталась луна.
В трепетном мерцанье, в белом покрывале
Девушка, как призрак, плачет у окна.

*⟨1914⟩*

## ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐ

Աղջիկը մենակ նստած սրահում ասեղնագործում,
Հինած կտավին հյուսում է նաշխուն գեղարդ ու խաչեր:
Նա նկարում է ննջեցյալներին բացատի ծոցում
Ու մեռյալների կրծքներին կարում կարմիր կակաչներ:

Եվ նուրբ մետաքսն է ուրվապատկերում զոհված հերոսին,
Իսկ այդ հերոսը իր արքայազնն է ու հոգու սերը,
Որը ընկել է թեժ գոտեմարտում՝ ցողը երեսին,
Եվ խիտ զարդերում արյամբ են օծված թավ եղեգները:

Նկարն ավարտվում ու լամպն է թարթում թրթիռն իր վերջին:
Պղտոր հայացքով նա խոնարհվում է, ցավից կսկծում:
Աղջիկը թախծում ու հեծկլտում է՝ արցունքն աչքերին,
Իսկ դրսում արդեն խոր կեսգիշերն է զարդերն իր գծում:

Քամին քանդել է սգո հյուսքերը, ցրել երկնքով,
Լուսնի շողերն են խճճվել բարակ վարսերի ցանցում:
Դողդոջուն լամպի թրթիռների տակ, ճերմակ ծածկոցով,
Պատուհանի մոտ, ինչպես մի ուրու, աղջիկն է լացում:

*(1914)*

## БУРЯ

Дрогнули листочки, закачались клены,
С золотистых веток полетела пыль...
Зашумели ветры, охнул лес зеленый,
Зашептался с эхом высохший ковыль...

Плачет у окошка пасмурная буря,
Понагнулись ветлы к мутному стеклу,
И качают ветки, голову понуря,
И с тоской угрюмой смотрят в полумглу...

А вдали, чернея, выползают тучи,
И ревет сердито грозная река,
Подымают брызги водяные кручи,
Словно мечет землю сильная рука.

*⟨1914 – 1915?⟩*

# ՀՈՂՄ

Ցնցվեցին տերևները, թխկիները օրորվեցին,
Ոսկեզօծված նուրբ ճյուղերից արծաթ փոշի բարձրացավ...
Աղմկեցին քամիները, թավ ծառերը մոլորվեցին,
Եվ սվսվաց, «ախ» քաշելով, փետրախոտը չորացած...

Մառախլապատ հողմը լացեց պատուհանի գոգին խավար,
Ու կռացան ուռիները, դիպան պղտոր ապակուն,
Եվ շյուղերով օրորվեցին ծամերի պես կախված շվար,
Ու թախիծով կիսախավար մթնշաղն է կուտակվում...

Իսկ մթամած հորիզոնից սև ամպերն են դուրս սողում,
Եվ զայրացած մռնչում է ահեղ գետը հանց սամում,
Լեռնանում են ալիքները և ափերն են ողողում,
Ու մի հուժկու ձեռք ասես ողջ աշխարհին է սասանում:

*(1914-1915)*

* * *

Ты ушла и ко мне не вернешься,
Позабыла ты мой уголок,
И теперь ты другому смеешься,
Укрываяся в белый платок.

Мне тоскливо, и скучно, и жалко,
Неуютно камин мой горит,
Но измятая в книжке фиалка
Все о счастье былом говорит.

*⟨1914 – 1915?⟩*

* * *

Դու հեռացար, ու չես դառնա էլ ինձ մոտ,
Մոռացել ես իմ անկյունը այնպես տաք,
Եվ դու հիմա ուրիշին ես ժպտում լոկ՝
Թաքնվելով գլխաշորում սպիտակ:

Ու ես՝ թախծոտ, կարոտաբաղձ ու տխուր,
Բուխարիս էլ մարմրում է ու հատնում,
Բայց գրքիս մեջ մանուշակն այն դալկաշուրթ,
Երջանկության մասին է մեր դեռ պատմում:

*(1914-1915)*

## КОРОЛЕВА

Пряный вечер. Гаснут зори.
По траве ползет туман,
У плетня на косогоре
Забелел твой сарафан.

В чарах звездного напева
Обомлели тополя.
Знаю, ждешь ты, королева,
Молодого короля.

Коромыслом серп двурогий
Плавно по небу скользит.
Там, за рощей, по дороге
Раздается звон копыт.

Скачет всадник загорелый,
Крепко держит повода.
Увезет тебя он смело
В чужедальни города.

Пряный вечер. Гаснут зори.
Слышен четкий храп коня.
Ах, постой на косогоре
Королевой у плетня.

*⟨1914 – 1915?⟩*

# ԹԱԳՈՒՀԻ

Իրիկուն է: Վերջալույսն է մարում բուրյան:
Եվ խոտերին բիլ մշուշն է սողում թեթև,
Լեռնալանջին, պարսպի մոտ հնադարյան,
Մի պահ ցոլաց սարաֆանդ ճերմակաթև:

Ջինջ աստղերի դյութիչ ծորող մեղեդու տակ
Բարդիներն են շշուկները իրենց պահել:
Գիտեմ՝ այդտեղ սպասում ես, ով թագուհի՜,
Քո ոսկեթագ թագավորին սեգ ու ջահել:

Լուսինն իր սուր եղջյուրներով սահում անբիծ,
Մանգաղի պես երկնի լազուր կրծքին քսվում,
Իսկ պուրակից անդին ձգվող հեռու ճամփից
Սմբակների դոփյուններն են արդեն լսվում:

Արշավում է քաջ հեծյալը ինչպես քամի՝
Սանձը ամուր բռնած ձեռքին, դեմքը շիկնած:
Նա քեզ անվախ կառնի թամբին ու կտանի
Օտար վայրեր ու քաղաքներ հեքիաթային:

Իրիկուն է: Վերջալույսն է մարում բուրյան:
Վարգող ձիու փռնչոցն է լսվում հստակ:
Ա՜խ, դու կանգնիր լեռան լանջին մի պահ միայն,
Եվ հանդիպիր քո թագուհուն պարսպի տակ:

*(1914-1915)*

* * *

На плетнях висят баранки,
Хлебной брагой льет теплынь.
Солнца струганые дранки
Загораживают синь.

Балаганы, пни и колья,
Карусельный пересвист.
От вихлистого приволья
Гнутся травы, мнется лист

Дробь копыт и хрип торговок,
Пьяный пах медовых сот.
Берегись, коли не ловок:
Вихорь пылью разметет.

За лещужною сурьмою –
Бабий крик, как поутру.
Не твоя ли шаль с каймою
Зеленеет на ветру?

Ой, удал и многосказен
Лад веселый на пыжну.
Запевай, как Стенька Разин
Утопил свою княжну.

Ты ли, Русь, тропой-дорогой
Разметала ал наряд?
Не суди молитвой строгой
Напоенный сердцем взгляд.

*1915*

* * *

Ցանկապատերին թամբեր են կախված,
Եվ ջերմությունն է օդու պես թափվում:
Շողերն արևի՝ ոսկով շաղախված,
Երկնի կապույտն են ժանյակով փակում:

Մարագներ, կոճղեր, շիվեր են շարված,
Կարուսելային սուլոցն է ձգվում:
Լայնարձակության քայլերից արբած
Խոտերն են թեքվում, տերևն է ճկվում:

Պայտերի դոփյուն ու ձայներ աշխույժ,
Արբեցնող բույրեր մեղրահացերի,
Եթե ճարպիկ ես, եղիր շատ զգույշ,
Թե չէ փոշու պես քամին կցրի:

Սուրմայի տակից փայլող սև աչքեր,
Կանացի կանչեր առավոտ կանուխ:
Այն քո շալը չէ՞ զառ երիզներով,
Որ կանաչին է տալիս զով քամուց:

Օ՜, ինչ շատախոս ու ճարպիկ է այն
Ուրախ մեղեդին ականջներ փետում:
Երգի՛ր, թե ոնց է Ռազին Ստենկան
Իր իշխանուհուն խորտակել գետում:

Դո՞ւ ես, Ռուսաստա՛ն, շավիղ-ճամփեքով
Քամուն տվել քո հանդերձանքը վառ:
Մի՛ դատապարտիր սաստող աղոթքով
Սրտով հագեցած հայացքը պայծառ:

*1915*

## ТАБУН

В холмах зеленых табуны коней
Сдувают ноздрями златой налет со дней.

С бугра высокого в синеющий залив
Упала смоль качающихся грив.

Дрожат их головы над тихою водой,
И ловит месяц их серебряной уздой.

Храпя в испуге на свою же тень,
Зазастить гривами они ждут новый день.

*

Весенний день звенит над конским ухом
С приветливым желаньем к первым мухам.

Но к вечеру уж кони над лугами
Брыкаются и хлопают ушами.

Все резче звон, прилипший на копытах,
То тонет в воздухе, то виснет на ракитах.

И лишь волна потянется к звезде,
Мелькают мухи пеплом по воде.

## ԵՐԱՄԱԿ

Կանաչազարդ բլուրներին երամներն են ձիերի,
Որ սրբում են հուր պինչերով ոսկի փոշին օրերի:

Բարձր թմբից ծիրանածուփ ծովածոցն է երևում,
Ուր որ նրանց խաս բաշերի թանձր ձյութն է երերում:

Գլուխներն են ցնցում խաղաղ ալյաց ծոցում գաճձերով,
Եվ լուսինն է որսում նրանց իր արծաթե սանձերով:

Եվ իրենց իսկ ստվերներից երկյուղելով՝ հառնում են
Ու սպասում, որ նոր օրվա ճամփան կտրեն ու բռնեն:

* * *

Գարնան օրը զրնգում է, ականջներում շառաչում՝
Ողջունելով բյուր ճաճճերի գրոհները առաջին:

Մայրամուտին թռչկոտում են՝ ձիերն իրար խաբ տալով,
Խրխնջում են, քացի տալիս՝ ականջները թափ տալով:

Էլ ավելի զիլ է հնչում սմբակների դողանջը,
Երբ սուզվում է, կամ էլ լցվում ուռիների ականջը:

Ու երբ ծովի գոռ ալիքը ձգտում է զառ աստղերին,
Ճանճերն, ինչպես ճերմակ մոխիր, լույս են սփռում ջրերին:

*

Погасло солнце. Тихо на лужке.
Пастух играет песню на рожке.

Уставясь лбами, слушает табун,
Что им поет вихрастый гамаюн.

А эхо резвое, скользнув по их губам,
Уносит думы их к неведомым лугам.

Любя твой день и ночи темноту,
Тебе, о родина, сложил я песню ту.

*1915*

* * *

Արևն հանգավ, ու ձայները մարգագետնում լռեցին,
Հովիվն ածեց իր եղջյուրը, հնչյունները փռվեցին:

Ճակատներով իրարու դեմ ժիր ձիերն են հավաքվում՝
Լսելու թե իրենց համար նա ինչ երգ է նվագում:

Արձագանքը ծավալվելով ձիերի պիրկ շուրթերին,
Ծով խոհերն է տանում նրանց, փռում հեռու ուրթերին:

Օ՜, հայրենի՛ք, սիրելով քո լույսն ու մութը գիշերվա,
Քեզ եմ ձոնում իմ այս երգը իբրև նվեր նոր օրվա:

*1915*

* * *

Алый мрак в небесной черни
Начертил пожаром грань.
Я пришел к твоей вечерне,
Полевая глухомань.

Нелегка моя кошница,
Но глаза синее дня.
Знаю, мать-земля черница,
Все мы тесная родня.

Разошлись мы в даль и шири
Под лазоревым крылом.
Но сзовет нас из псалтыри
Заревой заре псалом.

И придем мы по равнинам
К правде сошьего креста
Светом книги голубиной
Напоить свои уста.

*⟨1915⟩*

* * *

Ալվան մութը սևերի մեջ երկնային
Հրդեհով մի եզր է գծել ոսկեգույն:
Ես եկել եմ քո ժամերգին իրիկնային,
Իմ հեռավոր թավ բացատի խուլ անկյուն:

Թեքև չէ քո զամբյուղն անանց վշտերով,
Բայց աչքերդ կապտաջինջ են բիլ օրից:
Սակայն, գիտե՛մ, սուրբ վանուհի իմ մայր հող,
Որ ծնվել ենք մենք բոլորս նույն մորից:

Սփռվել ենք լայնությամբ ու երկայնքով
Երկնի լազուր թևերի տակ շատ նոսըր:
Բայց կկանչի, կհավաքի մեզ իր քով
Հրակարմիր արշալույսի սաղմոսը:

Եվ մենք կգանք մեր լայնածիր դաշտերով
Ու կհասնենք արդար խաչին գութանի,
Աղավնակերպ քո գրքերի լույսերով
Քո շուրթերին ջուր կցողենք կենդանի:

*(1915)*

* * *

В лунном кружеве украдкой
Ловит призраки долина.
На божнице за лампадкой
Улыбнулась Магдалина.

Кто-то дерзкий, непокорный,
Позавидовал улыбке.
Вспучил бельма вечер черный,
И луна – как в белой зыбке.

Разыгралась тройка-вьюга,
Брызжет пот, холодный, тёрпкий,
И плакучая лещуга
Лезет к ветру на закорки.

Смерть в потемках точит бритву...
Вон уж плачет Магдалина.
Помяни мою молитву
Тот, кто ходит по долинам.

*⟨1915⟩*

* * *

Լուսնի ժանյակում հովիտը թաքուն
Ուրվականներ է որսում ծպտված:
Սուրբ պատկերի դեմ, կանթեղի ետքում,
Մագթաղինեն ինձ սիրալիր ժպտաց:

Եվ ինչ-որ մեկը՝ ըմբոստ ու բռի,
Նախանձեց նրա ժպիտին հոգում:
Սև երեկոն իր աչքերը չռեց,
Լուսինն էլ քնեց իր ճերմակ ճոճքում:

Եռաձի բուքն է իր կառքով սուրում,
Քրտինքն է ծորում սառն ու լպրծուն,
Լացող ուռենին, ինչպես մի ուրու,
Սլացող քամու շալակն է հեծնում:

Մահը մութի մեջ դանակն է սրում...
Արդեն լացում է Մագթաղինեն:
Ով թափառում է խոր հովիտներում,
Թող հիշի նա իմ աղոթքը՝ իրեն:

*(1915)*

## УДАЛЕЦ

Ой, мне дома не сидится,
Размахнуться б на войне.
Полечу я быстрой птицей
На саврасом скакуне.

Не ревите, мать и тетка,
Слезы сушат удальца.
Подарила мне красотка
Два серебряных кольца.

Эх, достану я ей пикой
Душегрейку на меху,
Пусть от радости великой
Ходит ночью к жениху.

Ты гори, моя зарница,
Не страшён мне вражий стан.
Зацелует баловница,
Как куплю ей сарафан.

Отчего вам хныкать, бабы,
Домекнуться не могу.
Али руки эти слабы,
Что пешню согнут в дугу.

Буду весел я до гроба,
Удалая голова.
Провожай меня, зазноба,
Да держи свои слова.

*⟨1915⟩*

## ԿՏՐԻՃԸ

Ա՜խ, ոնց նստեմ տանը պարապ,
Թափ առներ թե մարդ թեժ կռվում:
Կթռչեմ ես հավքից արագ
Աշխետ ձիով դեպի հեռուն:

Մի՛ ողբացեք, մա՛յր ու քույրեր,
Ձեր արցունքն ինձ չի սատարի:
Նվիրել է գեղեցկուհին
Ինձ արծաթե զույգ մատանի:

Հե՜յ, կճարեմ գետնի տակից
Նրան մորթե կարճ քոթանակ:
Թող որ նա այդ մեծ հրճվանքից
Փեսացուին այցի գնա:

Վառվի՛ր գլխիս, դու իմ փայլակ,
Նենգ թշնամուց ես ահ չունեմ:
Հա՜ կպաչի լիրբն այն անհագ,
Մի սարաֆան հենց որ գնեմ:

Ես չեմ կարող հասկանալ թե
Դուք ինչո՞ւ եք թթվել, կանա՛յք:
Այդ ձեռքերը թույլ են մի՞թե,
Որ հաստ լինգն են ծռում մենակ:

Կապրեմ ուրախ մինչև դագաղ,
Ես մի կտրիճ, ինձ մի՛ շեղեք:
Սե՛ր իմ, դե ինձ ճամփեք անվախ,
Բայց ձեր խոսքի տերը եղեք:

*(1915)*

## СОНЕТ

Я плакал на заре, когда померкли дали,
Когда стелила ночь росистую постель,
И с шепотом волны рыданья замирали,
И где-то вдалеке им вторила свирель.

Сказала мне волна: «Напрасно мы тоскуем», –
И, сбросив свой покров, зарылась в берега,
А бледный серп луны холодным поцелуем
С улыбкой застудил мне слезы в жемчуга.

И я принес тебе, царевне ясноокой,
Кораллы слез моих печали одинокой
И нежную вуаль из пенности волны.

Но сердце хмельное любви моей не радо...
Отдай же мне за все, чего тебе не надо,
Отдай мне поцелуй за поцелуй луны.

*⟨1915⟩*

# ՍՈՆԵՏ

Ես լացեցի մայրամուտին, երբ հեռուներն աղոտվեցին,
Երբ գիշերը փռեց շաղոտ անկողինն իր լայնատարած,
Եվ շշուկով ալիքների աղմուկները խաղաղվեցին,
Եվ սրինգը արձագանքով կրկնեց նրանց ձայնը մարած:

Եվ ալիքն ինձ ասաց մեղմիվ. «Իզուր ենք մենք թախծում խռով»,-
Ու, նետելով փառը ճերմակ, ափերն ի վար արագ ցրվեց,
Իսկ մանգաղը՝ դալուկ լուսնի, իր ցոլքերի պաղ համբույրով
Եվ ժպիտով արցունքներս մարգարիտներ իսկույն դարձրեց:

Ու ես սիրով բերեցի քեզ՝ թագուհուն իմ կապուտաչյա,
Իմ մենության թախծից ծնված արցունքներիս մարջանն ընծա,
Եվ նուրբ քողը քնքուշ ալյաց՝ փրփուրների փայլով բյուրեղ:

Սակայն, սիրտս՝ քեզնով արբած, երջանիկ չէ իմ այդ սիրուց...
Ե՛տ տուր դու ինձ այն ամենը, ինչը էլ քեզ պետք չէ վաղուց,
Եվ համբույրը ե՛տ դուր դու ինձ՝ լուսնի տված համբույրի տեղ:

*(1915)*

## ЧАРЫ

В цветах любви весна-царевна
По роще косы расплела,
И с хором птичьего молебна
Поют ей гимн колокола.
Пьяна под чарами веселья,
Она, как дым, скользит в лесах,
И золотое ожерелье
Блестит в косматых волосах.
А вслед ей пьяная русалка
Росою плещет на луну.
И я, как страстная фиалка,
Хочу любить, любить весну.

*⟨1915⟩*

## ԿԱԽԱՐԴԱՆՔ

Ծաղկանց ծոցում՝ գարունը պերճ մի թագուհի,
Իր հյուսքերն է պսակով մեկ փռել կանաչ,
Եվ հավքերի խմբերգերի մաղթանքներով
Զանգակները հիմնն են երգում նրանց անանց:
Հրճվանքի կախարդանքով ասես դյութված՝
Նա ծուխ դարձած շուլալվում է անտառներում,
Եվ իր փռչոտ բողբողջներին՝ հենց նոր բացված,
Մանյակներ են փայլում ոսկի ու սիրտ գերում:
Ջրահարսն է նրա ետքից արբած շրջում,
Ցողով պատված ջինջ շողում է լուսնի դեմքին,
Իսկ ես՝ կրքոտ մի մանուշակ, սեր եմ տենչում
Եվ ուզում եմ անվերջ բուրել, սիրել մեկին:

*(1915)*

## ЧЕРЕМУХА

Черемуха душистая
С весною расцвела
И ветки золотистые,
Что кудри, завила.
Кругом роса медвяная
Сползает по коре,
Под нею зелень пряная
Сияет в серебре.
А рядом, у проталинки,
В траве, между корней,
Бежит, струится маленький
Серебряный ручей.
Черемуха душистая,
Развесившись, стоит,
А зелень золотистая
На солнышке горит.
Ручей волной гремучею
Все ветки обдает
И вкрадчиво под кручею
Ей песенки поет.

*⟨1915⟩*

## ԹԽԵՆԻ

Թխենին է բուրումնավետ
Գարնան շնչով փարթամ բացվել,
Եվ ճյուղերն են ոսկեվորված
Գանգուրներով լայն տարածվել:
Ու մեղրաբույր խեժը՝ ավիշ,
Կեղևն ի վար ցած է ծորում,
Իսկ խնկաբույր սեզը թավիշ
Արծաթի պես լույս է ցոլում:
Իսկ նրա մոտ, հալուտն ի վար,
Խոտերի մեջ կյանք արարում,
Ալիքվում է, կանչում զվարթ,
Արծաթափայլ փոքրիկ առուն:
Եվ թխենին բուրումնավետ,
Ճյուղատարած կանգնել շիտակ,
Իսկ կանաչը ոսկեջրված
Հուրհրում է արևի տակ:
Եվ ջինջ առուն հորդում հնչեղ,
Ողջ ճյուղերն է ցողով պատում,
Ու շողոքորթ ձայնով այնտեղ
Նրա համար երգ է կարդում:

*(1915)*

* * *

О дитя, я долго плакал над судьбой твоей,
С каждой ночью я тоскую все сильней, сильней...

Знаю, знаю, скоро, скоро, на закате дня,
Понесут с могильным пеньем хоронить меня...

Ты увидишь из окошка белый саван мой,
И сожмется твое сердце от тоски немой...

О дитя, я долго плакал с тайной теплых слов,
И застыли мои слезы в бисер жемчугов...

И связал я ожерелье для тебя из них,
Ты надень его на шею в память дней моих!

*⟨1915⟩*

* * *

Օ՜, մանկի՛կ իմ, ես տխրել եմ, բախտիդ համար երկար լացել,
Ամեն անցնող գիշերվա հետ ես ավելի խորն եմ թախծել...

Գիտե՛մ, շուտո՜վ, օրվա իջնող վերջալույսի թույլ շողերում
Մահվան տխուր սաղմոսներով ինձ կտանեն լուռ թաղելու...

Դու կտեսնես պատուհանից իմ պատանքը ճերմակ կապած,
Ու կցավի սիրտդ համակ, լուռ ու անլուր վշտից կքած...

Օ՜, մանկի՛կ իմ, շա՜տ եմ լացել, ջերմ բառերով թախծել շվար,
Եվ սառել են արցունքներս ու դարձել են մարգարտաշար...

Եվ դրանցով ես քեզ համար թանկ վզնոց եմ հյուսել նորից,
Դու այն կախի՛ր պարանոցիդ իբրև մի հուշ իմ օրերից...

*(1915)*

## СТАРУХИ

Под окном балякают старухи.
Вязлый хрип их крошит тишину.
С чурбака, как скатный бисер, мухи
Улетают к лесу-шушуну.
Смотрят бабки в черные дубровы,
Где сверкают гашники зарниц,
Подтыкают пестрые поневы
И таращат веки без ресниц.
«Быть дождю, – решают в пересуде, –
Небо в куреве, как хмаровая близь,
Ведь недаром нонче на посуде
Появилась квасливая слизь,
Не зазря прокисло по махоткам
В погребах парное молоко
И не так гагачится молодкам,
Видно, дыхать бедным нелегко».
Говорят старухи о пророке,
Что на небе гонит лошадей,
А кругом в дымнистой заволоке
Веет сырью звонистых дождей.

*⟨1915⟩*

# ՊԱՌԱՎՆԵՐԸ

Լուսամուտի տակ խմբված պառավներ են զվարճանում,
Նրանց խռպոտ խզխզոցն է ցրում անդորրն անընդհատ,
Կոճղից ելնող գորշ ճանճերի խիտ պարսերն են, ինչպես սամում,
Թռչում դեպի մութ անտառի բացատները թավշապատ:
Ու նայում են կանայք հեռվում սևին տվող կաղնուտներին,
Ուր առկայծող փայլակների ցոլանքներ են լույս տալիս,
Եվ աչքերի նեղ կոպերն են չռում առանց թարթիչների:
«Հորդ անձրև է շուտով գալու,- գուշակում է խումբը նրանց,-
Ողջ երկինքը ծխի մեջ է, ամպից չունենք էլ պրծում,
Չէ՞ որ հիմա հենց այնպես չի ամաններին համատարած
Թքված լորձի հայտնվելը կվասի պես լպրծուն,
Կամ իզուր չէ նաև այն, որ նկուղների կճուճներում
Հենց նոր կթած թարմ կաթը կտրվել է ու շաղվել,
Կամ էլ ուրախ չեն հռհռում աղջիկները լայն բակերում,
Երևում է, որ խեղճերն էլ հեշտ չեն կարող խաղաղվել»:
Հետո նրանք խոսք են բացում հրաշագործ մեկի մասին,
Իսկ ամենուր թանձր ծխի ծածկույթի տակ վերջալույսին
Զրնգացող անձրևների խոնավ շունչն է թևածում:

*(1915)*

* * *

У крыльца в худой логушке деготь.
Струи черные расхлябились, как змейки.
Ходят куры черных змей потрогать
И в навозе чистят клюв свой клейкий.
В колымаге колкая засорень,
Без колес, как лапы, смотрят оси.
Старый дед прямит на втулке шкворень,
Словно косу долбит на покосе.
У погребки с маткой поросята,
Рядом с замесью тухлявая лоханка.
Под крылом на быльнице измятой
Ловит вшей расхохленная канка.
Под горой на пойло скачет стадо.
Плачут овцы с хлябистою жовкой.
Голосят пастушки над оградой:
«Гыть кыря!» и щелкают веревкой.

*⟨1915⟩*

* * *

Մուտքի մոտ ընկած հին տաշտում ձյութն է թանձր խռնվել,
Եվ սև շիթերն են օձերի նման դուրս ցայտել ճեղքից:
Հավերն ուզում են այդ սև օձերին խնամքով բռնել
Եվ կտուցները գոմաղբում մաքրել լպրծուն կեղտից:
Իսկ բեռնակառքում թափոն է լցված ու անպետք իրեր,
Եվ սռնիներն են, առանց անիվներ, թաթերի նման:
Պապը շտկում է սռնակալներն ու խոսում ինքն իրեն՝
Ի՜նչ զնդաններ են հնձին գերանդի ծեծելու համար:
Նկուղի առաջ իր խոճկորներով մերունն է պառկած,
Իսկ կողքին տաշտն է՝ թթված խմորով ու լափով լեցուն:
Մոտիկ ծածկի տակ ճմռթված ու հին չլեր են թափված,
Որոնց ծալքերում ցոփ հնդկահավն է ոջիլներ որսում:
Իսկ լեռան կողով հոտն արոտի է շտապում քաղցած,
Եվ ոչխարներն են որոճում թքոտ ու խուլ բառաչում:
Կին հովիվներն են փարախի գլխից ձայնակցում նրանց.
«Դե, շո՛ւտ հեռացեք»,- և մտրակներն են ուժգին շառաչում:

*(1915)*

## РЮРИКУ ИВНЕВУ

Я одену тебя побирушкой,
Подпояшу оструганным лыком.
Упираяся толстою клюшкой,
Уходи ты к лесным повиликам.

У стогов из сухой боровины
Шьет русалка из листьев обновы.
У ней губы краснее малины,
Брови черные круче подковы.

Ты скажи ей: «Я странник усталый,
Равнодушный к житейским потерям».
Скинь-покинь свой армяк полинялый,
Проходи с нею к зарослям в терем.

Соберутся русалки с цветами,
Заведут под гармони гулянку
И тебя по заре с петухами
Поведут провожать на полянку.

Побредешь ты, воспрянувший духом,
Будешь зыкать прибаски на цевне
И навстречу горбатым старухам
Скинешь шапку с поклоном деревне.

*29 марта 1915 г.*

## ՌՅՈՒՐԻԿ ԻՎՆԵՎԻՆ

Ես քեզ սիրով կհագցնեմ ցնցոտիներ մուրացկանի,
Ու կկապեմ մեջքիդ ամուր խաս լորենուց հանված գոտի:
Դու, հենվելով կեռագլուխ քո անմշակ հաստ մականին,
Գնա՛ անտառ, շրջիր մենակ, շնչի՛ր բույրը գայլախոտի:

Անտառի չոր միջնակներում դրված բուրյան դեզերի մոտ
Ջրահարսն է տերևներից նոր հագուստներ կարում վառման:
Նրա շուրթերն ազնվամորուց կարմիր են ու թավշախավոտ,
Իսկ հոնքերը սև են սաթից և հյուսվածքն է՝ պայտից կեռման:

Նրան ասա. «Ես մի հոգնած, խեղճ պանդուխտ եմ
թափառական,
Անտարբեր եմ կորուստների և առօրյա հոգսի հանդեպ»:
Հետո հանիր ու դեն նետիր հին ու խամրած քողդ երկար
Եվ նրա հետ քայլիր ուրախ մացառուտի դղյակը դեպ:

Կհավաքվեն շուրջդ իսկույն ջրահարսերն ալ փնջերով
Եվ հարմոնի նվագի տակ ճոխ խրախճանք կանեն քեզ հետ:
Ապա նրանք ծեգը ծեգին, աքլորների զիլ կանչերով,
Երգ ու պարով քեզ կուղեկցեն թփուտներով դեպի բացատ:

Դու՝ թարմացած, հոգով առույգ, կքափառես սիրով անանց,
Սրինգ կածես, կաղաղակես, ջանգյուլումներ կասես հողին:
Եվ ընդառաջ երբ դու գնաս մեջքից կորված պառավ կանանց,
Նոր գլխարկդ լուռ հանելով՝ կխոնարհվես հառնող գյուղին:

*29 մարտի 1915 թ.*

* * *

На лазоревые ткани
Пролил пальцы багрянец.
В темной роще, по поляне,
Плачет смехом бубенец.

Затуманились лощины,
Серебром покрылся мох.
Через прясла и овины
Кажет месяц белый рог.

По дороге лихо, бойко,
Развевая пенный пот,
Скачет бешеная тройка
На поселок в хоровод.

Смотрят девушки лукаво
На красавца сквозь плетень.
Парень бравый, кучерявый
Ломит шапку набекрень.

Ярче розовой рубахи
Зори вешние горят.
Позолоченные бляхи
С бубенцами говорят.

*⟨1915⟩*

* * *

Լազուր երկնքի լաջվարդ հյուսվածքին
Ծիրանին բոսոր մատները հեղեց:
Կանաչ պուրակի բացատում մթին
Բոժոժ-թմբուկը լացով ծիծաղեց:

Հովիտ ու ձորակ լուռ մթագնեցին,
Մամուռն արծաթե շղարշով պատվեց:
Խըրձանոցների հետևից թաքուն
Լուսնի սպիտակ եղջյուրն հայտնվեց:

Եվ ճանապարհով, աշխույժ ու արի,
Ծով քրտինքի ու փոշու մեջ կորած,
Եռաձի կառքն է սուրում շուրջպարի,
Դեպի ավանը, թափով մոլեգնած:

Եվ աղջիկներն են խորամանկ նայում
Այն քաջ տղային՝ վառվռուն հագած:
Իսկ նա իր տեսքով նրանց հմայում,
Սուրում է՝ կեպին ծոծրակին թեքած:

Ու նրա ալվան շապիկից էլ վառ
Մայրամուտներն են հրդեհով հոսում:
Եվ ոսկեզօծված փահանակներն են
Բոժոժների հետ զնգոցով խոսում:

*(1915)*

* * *

Я странник убогий.
С вечерней звездой
Пою я о боге
Касаткой степной.

На шелковом блюде
Опада осин,
Послухайте, люди,
Ухлюпы трясин.

Ширком в луговины,
Целуя сосну,
Поют быстровины
Про рай и весну.

Я, странник убогий,
Молюсь в синеву.
На палой дороге
Ложуся в траву.

Покоюся сладко
Меж росновых бус;
На сердце лампадка,
А в сердце Исус.

*⟨1915⟩*

* * *

Ես մի պանդուխտ ուխտավոր եմ.
Իրիկնային աստղի տակ
Աստծո գովքն եմ անում նորեն,
Ինչպես հանդի ծիծեռնակ:

Ու մետաքսե սկուտեղին՝
Կաղամախու խաս սաղարթ,
Լսեցե՛ք, ով բարի՜ մարդիկ,
Խոսքն իմ դողդոջ ու անհարթ:

Մարգագետնի անափ գրկում,
Ճերմակ սոճու համբույրով,
Ծղրիդներն են անուշ երգում
Գարնան մասին ու սիրո:

Ուխտավոր եմ ես մի պանդուխտ,
Աղոթում եմ աննախանձ,
Այս անծանոթ ճամփի վրա՝
Պառկած խոտին կիսախանձ:

Ես հանգչում եմ քաղցր այստեղ,
Ցողերի մեջ աստղալույս,
Սրտիս վրա՝ մի հույս-կանթեղ,
Իսկ հոգուս մեջ՝ Տերն Հիսուս:

*(1915)*

## БАБУШКИНЫ СКАЗКИ

В зимний вечер по задворкам
Разухабистой гурьбой
По сугробам, по пригоркам
Мы идем, бредем домой.
Опостылеют салазки,
И садимся в два рядка
Слушать бабушкины сказки
Про Ивана-дурака.
И сидим мы, еле дышим.
Время к полночи идет.
Притворимся, что не слышим,
Если мама спать зовет.
Сказки все. Пора в постели...
Но а как теперь уж спать?
И опять мы загалдели,
Начинаем приставать.
Скажет бабушка несмело:
«Что ж сидеть-то до зари?»
Ну, а нам какое дело, –
Говори да говори.

*⟨1915⟩*

## ՏԱՏԻԿԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ

Ձմռան իրիկվա խավարում արթուն,
Կայտառ խմբերով, աղմուկ ու ճիչով,
Մենք թափառելով շտապում ենք տուն
Ձյունաթմբերի, խութերի միջով:
Եվ, սահնակներից զզված ու հոգնած,
Նստում ենք երկշարք խմբով միասին՝
Լսելու տատի հեքիաթներն անթիվ
Իվան-հիմարի քաջության մասին:
Ու մենք վերացած հազիվ ենք շնչում,
Արդեն դառնում է կեսը գիշերվա:
Եվ ձևացնում ենք, թե մենք չենք լսում,
Երբ քնելու է մայրիկը կանչում:
-Ժա՛մն է պառկելու: Հեքիաթներին վե՛րջ...
Բայց դե էլ ինչպե՞ս կարող ենք քնել:
Եվ մենք նորից ենք աղմկում անվերջ,
Ու սկսում ենք նույնը կրկնել:
Ապա տատիկն է մեղմորեն ասում.
-Ի՞նչ է, ուրեմն, մինչև լույս նստե՞նք:–
-Մեր ինչ գործն է, թե գիշերն է կիսվում,
Պատմի՛ր հա պատմիր, մենք քեզ կլսենք:

*(1915)*

## ПЛЯСУНЬЯ

Ты играй, гармонь, под трензель,
Отсыпай, плясунья, дробь!
На платке краснеет вензель,
Знай прищелкивай, не робь!

Парень бравый, синеглазый
Загляделся не на смех.
Веселы твои проказы,
Зарукавник – словно снег.

Улыбаются старушки,
Приседают старики.
Смотрят с завистью подружки
На шелковы косники.

Веселись, пляши угарней,
Развевай кайму фаты.
Завтра вечером от парней
Придут свахи и сваты.

*⟨1915⟩*

## ՊԱՐՈՒՀԻ

Հնչի՛ր, հարմո՛ն, թմբկահարի նվագի տակ,
Պարահանդես մտի՛ր, աղջի՛կ, լուռ մի կենա:
Գլխաշորիդ զարդն է ասես շիկնել հստակ,
Չա՛փ տուր արագ ու շրջանցիր, մի՛ վախենա:

Կապուտաչյա այն քաջ տղան` քեզնով տարված,
Կատակո՛վ չի նայում վրադ, կանգնած մենակ:
Քո այդ ուրախ շարժումներին սիրահարված,
Մի՛ հապաղիր, բա՛ց թևերդ ձյունաճերմակ:

Տարեց կանայք նայում են քեզ ու ծիծաղում,
Ծեր այրերը ծունկ են ծալում դռան տակին:
Աղջիկներն էլ նախանձով են արդեն նայում
Ճոխ ծամերիդ մետաքսակար վարդակապին:

Ուրախացի՛ր, կաքավի՜ր ու պարի՜ր անզուսպ,
Բա՛ց փեշերիդ երիզը լայն, նայի՛ր արթուն:
Եվ իմացի՛ր, այն տղայի կողմից, անշուշտ,
Վաղն իրիկուն հարսնախոսի կգան ձեր տուն:

*(1915)*

* * *

Тебе одной плету венок,
Цветами сыплю стежку серую.
О Русь, покойный уголок,
Тебя люблю, тебе и верую.
Гляжу в простор твоих полей,
Ты вся — далекая и близкая.
Сродни мне посвист журавлей
И не чужда тропинка склизкая.
Цветет болотная купель,
Куга зовет к вечерне длительной,
И по кустам звенит капель
Росы холодной и целительной.
И хоть сгоняет твой туман
Поток ветров, крылато дующих,
Но вся ты — смирна и ливан
Волхвов, потайственно волхвующих.

*⟨1915⟩*

* * *

Քեզ մի հյուսկեն դափնեպսակ ես կբերեմ
Ու կծածկեմ ճամփաներդ ծաղկունքով:
Օ՜, Ռուսաստա՜ն, խաղաղ անկյուն իմ աներեր,
Քեզ սիրում եմ ու հավատում խոր հոգով:
Եվ նայում եմ քո դաշտերին լայնածիր,
Դու հեռու ես ամբողջովին ու ինձ մոտ:
Հարազատ են կռունկներից կանչերն ինձ
Եվ օտար չեն շավիղները քո ցեխոտ:
Ծաղկում է սուրբ ավազանդ ճահճուտի,
Ջրեղեգն է ժամերգության կանչում ինձ,
Եվ թփերում զրնգում են ցող ու շաղի
Պաղ ու բուժիչ կաթիլները մշտաջինջ:
Ու թեև քո մշուշներն են հեռու մղում
Ուժգին շաչող քամիներդ թևավոր,
Բայց դու նորից սուրբ մյուռոն ու խնուկ ես ծխում,
Որ դյութերն են թաքուն բերում ամեն օր:

*(1915)*

* * *

Занеслися залетною пташкой
Панихидные вести к нам.
Родина, черная монашка,
Читает псалмы по сынам.

Красные нити часослова
Кровью окропили слова.
Я знаю, – ты умереть готова,
Но смерть твоя будет жива.

В церквушке за тихой обедней
Выну за тебя просфору,
Помолюся за вздох последний
И слезу со щеки утру.

А ты из светлого рая,
В ризах белее дня,
Покрестися, как умирая,
За то, что не любила меня.

*⟨1915⟩*

* * *

Գարնան չվեկ թռչնակի պես այն հեռավոր,
Մահվան լուրեր են մեզ հասնում օրը օրին:
Հայրենիքը՝ միանձնուհի մի սևավոր,
Սաղմոսներ է կարդում իր հեգ որդիներին:

Ժամագրքի ժապավեններն հուր ու վառման,
Արյունով են ցողել բառերն ամեն բանի:
Ես գիտեմ, որ դու պատրաստ ես եղել մահվան,
Բայց քո մահը լինելու է հար կենդանի:

Եկեղեցում, պատարագի խաղաղ ժամին,
Քո փոխարեն նշխար կառնեմ՝ կհաղորդվեմ,
Եվ կաղոթեմ հոգուդ համար կարգով ամեն,
Ու արցունքներն այտերիցս լուռ կսրբեմ:

Իսկ դո՛ւ, հեռու քո դրախտից, թևեր առած,
Ճերմակափառ շուրջառի մեջ երբ գաս հուրիեր,
Խաչակնքվի՛ր այնպես, ինչպես մահից առաջ,
Նրա՛ համար, որ դու երբեք ինձ չես սիրել:

*(1915)*

## КОЛДУНЬЯ

Косы растрепаны, страшная, белая,
Бегает, бегает, резвая, смелая.
Темная ночь молчаливо пугается,
Шалями тучек луна закрывается.
Ветер-певун с завываньем кликуш
Мчится в лесную дремучую глушь.
Роща грозится еловыми пиками,
Прячутся совы с пугливыми криками.
Машет колдунья руками костлявыми.
Звезды моргают из туч над дубравами.
Серьгами змеи под космы привешены,
Кружится с вьюгою страшно и бешено.
Пляшет колдунья под звон сосняка.
С черною дрожью плывут облака.

*⟨1915⟩*

# ԿԱԽԱՐԴԸ

Գզգզված ու ահարկու, ճերմակ ծամերն հերարձակ,
Վազում է ու թռչկոտում, փախչում կայտառ, համարձակ:
Եվ մթամած գիշերն է խոր լռությամբ սարսռում,
Ու լուսինն է գորշ ամպերի շալերով ծածկվում:
Իսկ երգասաց խենթ քամին ընկնավորի ճղղոցով
Գալարվում է անտառի մութ ծմակում ննջացող:
Եվ բացատն է ահարկում եղևնուտի սայրերով
Ու բուերն են թաքնվում երկյուղալի ձայներով:
Ոսկրացած ձեռքերով չար պառավն է կախարդում,
Մութ ամպերից աստղերն են կաղնուտներին լուռ թարթում:
Օձագալար գինդերով ծամերի տակ մակաղած
Գալարվում է հողմի հետ խելահեղ ու կատաղած:
Եվ պարում է կախարդը սոսափի տակ սոճուտի,
Իսկ ամպերն էլ սև կառքով գիրկն են լողում չար մութի:

*(1915)*

## РУСАЛКА ПОД НОВЫЙ ГОД

Ты не любишь меня, милый голубь,
Не со мной ты воркуешь, с другою,
Ах, пойду я к реке под горою,
Кинусь с берега в черную прорубь.

Не отыщет никто мои кости,
Я русалкой вернуся весною.
Приведешь ты коня к водопою,
И коня напою я из горсти.

Запою я тебе втихомолку,
Как живу я царевной, тоскую,
Заману я тебя, заколдую,
Уведу коня в струи за холку!

Ой, как терем стоит под водою –
Там играют русалочки в жмурки, –
Изо льда он, а окна-конурки
В сизых рамах горят под слюдою.

На постель я травы натаскаю,
Положу я тебя с собой рядом.
Буду тешить тебя своим взглядом,
Зацелую тебя, заласкаю!

*⟨1915⟩*

# ՋՐԱՀԱՐՍԸ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՇԵՄԻՆ

Ինձ չես սիրում դու վաղուց, իմ թանկագին աղավնյակ,
Եվ հետս չես դունդունում, ուրիշին ես սիրում դու,
Ա՜խ, ես գետափ կգնամ, զառիթափով լեռան տակ,
Եվ այնտեղից կնետվեմ սև ջրերի գիրկը մութ:

Էլ չի կարող գտնել իմ ոսկորները ոչ մի մարդ,
Եվ ջրահարս դարձած ես ետ կդառնամ գարնանը:
Այն ժամանակ երբ դու գաս, բերես քո ձին ջրելու,
Ես ջուր կտամ նրան կուշտ իմ բռերով ակնազարդ:

Կթախծեմ ես քեզ համար ու կերգեմ լռելյայն,
Թե ինչպես եմ ապրում ես թագուհու պես վշտացած,
Քեզ կթովեմ աչքերով, կկախարդեմ միմիայն
Եվ կտանեմ քո ձիուն բաշից բռնած ինձ հետ ցած:

Օ՜յ, ինչպես է ջրի տակ իմ դղյակը մնում խոր,
Ջրահարսերն այնտեղ միշտ աչքակապուկ են խաղում,
Սառույցից է նա շինված, իսկ խցերը լուսավոր
Փայլփլում են փայլարի թխակապույտ շողերում:

Թավիշ կանաչ կբերեմ և անկողին կբացեմ,
Կպառկեցնեմ քեզ կողքիս, բյուրեղապատ իմ խցում,
Եվ հայացքով կթովեմ, անհուն սիրով կտածեմ,
Կհամբուրեմ քեզ անվերջ, կգուրգուրեմ իմ ծոցում:

*(1915)*

## ПОМИНКИ

Заслонили ветлы сиротливо
Косниками мертвые жилища.
Словно снег, белеется коливо –
На помин небесным птахам пища.

Тащат галки рис с могилок постный,
Вяжут нищие над сумками бечевки.
Причитают матери и крестны,
Голосят невесты и золовки.

По камням, над толстым слоем пыли,
Вьется хмель, запутанный и клейкий.
Длинный поп в худой епитрахили
Подбирает черные копейки.

Под черед за скромным подаяньем
Ищут странницы отпетую могилу.
И поет дьячок за поминаньем:
«Раб усопших, господи, помилуй».

*⟨1915⟩*

## ՀՈԳԵՀԱՑ

Ուռիները որբերի պես խոնարհվել են ծամերով
Ու ծածկել են գյուղի դատարկ խրճիթների շարքերը:
Ինչպես ձյունը՝ ճերմակին է տալիս արդեն կոլիվոն՝
Հիշատակի հոգեհացը երկնի ճերմակ հավքերի:

Ճայակներն են բրինձ տանում շիրիմների թմբերից,
Աղքատներն են խուրջինները կապկպելով պատրաստվում:
Կնքահայրերն ու մայրերը սաղմոսներ են երգում ջինջ,
Հարս ու աղջիկ ձայնակցում են ու միասին արտասվում:

Տապանների շուրջը փոշու շերտերն իրար շուլալող
Գայլախոտն է խիտ ու կպչուն թնջուկներով շնկշնկում:
Բարձրահասակ քահանան է ծիսական իր ուրարով
Շիրմատանը հոգեվարձի սև դրամներն հավաքում:

Իսկ շրջմոլիկ օտարները ողորմություն խնդրելով՝
Ծեսն ավարտած շիրիմներն են հերթով փնտրում նորօրյա:
Եվ աբեղան խնկարկում է հիշատակը մեռելոց.
«Քո ննջեցյալ ծառաներին, ո՜վ Տեր Աստված, ողորմյա՜»:

*(1915)*

## РАЗБОЙНИК

Стухнут звезды, стухнет месяц,
Стихнет песня соловья,
В чернобылье перелесиц
С кистенем засяду я.

У реки под косогором
Не бросай, рыбак, блесну,
По дороге темным бором
Не считай, купец, казну!

Руки цепки, руки хватки,
Не зазря зовусь ухват:
Загребу парчу и кадки,
Дорогой сниму халат.

В темной роще заряница
Чешет елью прядь волос;
Выручай меня, ножница:
Раздается стук колес.

Не дознаться глупым людям,
Где копил – хранил деньгу;
Захотеть – так все добудем
Темной ночью на лугу!

*⟨1915⟩*

# ԱՎԱԶԱԿԸ

Աստղերն են հանգչում, լուսինն է թաքչում,
Սոխակի երգն է թփի տակ լռում,
Ավազակների խմբով ես փախչում,
Դարան եմ մտնում հեռու անտառում:

Լեռան հետևում, կանաչ գետափին,
Չկնո՛րս, դու խայծդ ջուրը մի՛ գցիր,
Մթին թավուտի անծանոթ ճամփին,
Դու՝ վաճառակա՛ն, գանձդ մի՛ հաշվիր:

Ձեռքերս՝ շղթա, ձեռքերս՝ աքցան,
Եվ իզուր չեն ինձ թակարդ անվանում.
Ես կողոպտում եմ, խլում ամեն բան,
Եվ թանկ մուշտակն եմ վրայից հանում:

Խավար պուրակում այգը մեղմաբար,
Եղևնու խոպոպ վարսերն է սանրում.
Դե, փրկի՛ր դու ինձ, դանա՛կ իմ սուրսայր,
Անիվների խուլ թխկոց է լսվում:

Չեն կարող հիմար մարդիկ իմանալ,
Թե տերն իր փողը որտե՛ղ է պահում:
Ինչ ուզենք կանենք, եթե կամենանք,
Գիշերվա կեսին, մթին անտառում:

*(1915)*

* * *

Белая свитка и алый кушак,
Рву я по грядкам зардевшийся мак.

Громко звенит за селом хоровод,
Там она, там она песни поет.

Помню, как крикнула, шигая в сруб:
«Что же, красив ты, да сердцу не люб.

Кольца кудрей твоих ветрами жжет,
Гребень мой вострый другой бережет».

Знаю, чем чужд ей и чем я не мил:
Меньше плясал я и меньше всех пил.

Кротко я с грустью стоял у стены,
Все они пели и были пьяны.

Счастье его, что в нем меньше стыда,
В шею ей лезла его борода.

Свившись с ним в жгучее пляски кольцо,
Брызнула смехом она мне в лицо.

Белая свитка и алый кушак,
Рву я по грядкам зардевшийся мак.

Маком влюбленное сердце цветет,
Только не мне она песни поет.

*‹1915›*

* * *

Հագիս՝ ճերմակ պարահանդերձ, մեջքիս՝ կարմիր գոտիկ,
Ես կակաչ եմ քաղում ալվան ածուներում մոտիկ:

Պարն է թնդում գյուղի ծայրին, մարգագետնի գրկում,
Այնտեղ է նա, այնտեղ է նա, և երգեր է երգում:

Հիշում եմ, թե ինչպես էր նա կտրուկ ձայնով ցփնում.
«Ի՞նչ անենք որ գեղեցիկ ես, սիրտս քեզ չի կպնում:

Գանգուրներիդ խոպոպները քամիներն են խառնում,
Բայց իմ սանրը՝ սուր ու ամուր, մեկ ուրիշն է պահում»:

Ես ինչով եմ նրան օտար և ինչու չեմ սիրով մեղմ,
Գիտեմ՝ քիչ եմ պարել հետը և բոլորից քիչ խմել:

Հեզ ու տխուր նայում էի ես ճմբերին կանգնած,
Նրանք ուրախ պարում էին, ու շատ էին հարբած:

Սիրո բախտը այն է, որում ամոթանքն է պակաս,
Եվ աղջկա վիզն էր շոյում նրա մորուքն անսազ:

Ու միասին մենք հյուսելով պարի այրող օղակ,
Իր ծիծաղն է ցողում դեմքիս այն աղջիկը շողակ:

Հագիս՝ ճերմակ պարահանդերձ, մեջքիս՝ կարմիր գոտիկ,
Ես կակաչ եմ քաղում ալվան ածուներում մոտիկ:

Կակաչներին սիրահարված սիրտն է խինդից ծաղկում,
Միայն թե նա ինձ համար չէ այդ երգերը երգում:

*(1915)*

* * *

Наша вера не погасла,
Святы песни и псалмы.
Льется солнечное масло
На зеленые холмы.

Верю, родина, я знаю,
Что легка твоя стопа,
Не одна ведет нас к раю
Богомольная тропа.

Все пути твои – в удаче,
Но в одном лишь счастья нет:
Он закован в белом плаче
Разгадавших новый свет.

Там настроены палаты
Из церковных кирпичей;
Те палаты – казематы
Да железный звон цепей.

Не ищи меня ты в боге,
Не зови любить и жить...
Я пойду по той дороге
Буйну голову сложить.

*1915*

* * *

Չի մարել մեր հավատը սուրբ,
Դեռ սաղմոսն է հնչում զվարթ:
Եվ արևի յուղն է հեղվում
Բլուրներին կանաչազարդ:

Հավատում եմ քեզ, իմ երկի՛ր,
Գիտեմ՝ քայլքդ հեշտ ու թեթև,
Ուխտի միայն մի՛ ճամփա չէ
Մեզ ուղեկցում դեպի եդեմ:

Քո ճամփեքը բաց են բոլոր,
Բայց բախտ չկա միայն մեկում:
Այն թաղված է նոր աշխարհի
Գուշակության ճերմակ մեգում:

Պալատներ կան շինված անդին
Ճոխ վանքերիդ աղյուսներից,
Բայց խուցեր են դրանք բանտի,
Շղթաներն են զնգում վերից:

Դու մի՛ փնտրիր ինձ Աստծո մոտ
Եվ մի՛ կանչիր կյանք սիրելու...
Ես կգնամ հե՛նց այդ ճամփով՝
Տաք գլուխս վար դնելու:

*1915*

* * *

Перо не быльница,
Но в нем есть звон.
Служи, чернильница,
Лесной канон.

О мати вечная,
Святой покров.
Любовь заречная —
Без слов.

*6 октября 1915*

* * *

Գրիչն, այո՛, սուր ցողուն չէ,
Բայց նրա մեջ կա զիլ ղողանջ:
Թանաքամա՛ն, դու ծառայիր
Պատարագին անտառային:

Օ՜, Տիրամայր, հավերժական,
Դու երկնային հովանի քող:
Առանց խոսքի սեր դյութական,
Որ փռված է գետից այն կողմ:

*6 հոկտեմբերի 1915 թ.*

* * *

Вечер, как сажа,
Льется в окно.
Белая пряжа
Ткет полотно.

Пляшет гасница,
Прыгает тень.
В окна стучится
Старый плетень.

Липнет к окошку
Черная гать.
Девочку-крошку
Байкает мать.

Взрыкает зыбка
Сонный тропарь:
«Спи, моя рыбка,
Спи, не гутарь».

⟨*1916*⟩

* * *

Մայրամուտը, ինչպես մրուր,
Պատուհանից ներս է լցվում:
Եվ կտավը՝ ճերմակաթույր,
Իր անթափանց քողն է գործում:

Մարող շողն է թաքուն պարում,
Եվ ստվերն է թեթև ցատկում:
Հին հյուսվածքը խոր խավարում
Պատուհանի փեղկն է թակում:

Լուսամուտի ջինջ ապակին
Սև ձյութով է իսկույն պատվում:
Իր պստլիկ աղջնակին
Հեքիաթներ է մայրը պատմում:

Ճռճռում է ճոճքը փոքրիկ,
Շարական է ասես մանում.
«Քնի՛ր, դու իմ փոքրիկ ձկնիկ,
Մի՛ ճրրա, քնիր անո՜ւշ»:

*(1916)*

* * *

Прячет месяц за овинами
Желтый лик от солнца ярого.
Высоко над луговинами
По востоку пышет зарево.

Пеной рос заря туманится,
Словно глубь очей невестиных.
Прибрела весна, как странница,
С посошком в лаптях берестяных.

На березки в роще теневой
Серьги звонкие повесила
И с рассветом в сад сиреневый
Мотыльком порхнула весело.

*⟨1916⟩*

* * *

Լուսնի լիրը խրճանոցի սնարին
Բորբ արևից դեղին դեմքն է թաքցնում:
Արոտների վրա՝ երկնի կամարին,
Արևելքն իր ծիրանին է հագցնում:

Ջինջ ցողերի ցոլքով այգն է մշուշվում,
Ինչպես կույսի բիլ աչքերի խորքը մով:
Եվ գարունն է անցնում հանց մի ուխտավոր,
Կեչուց կարված տերևներով ու ցուպով:

Լորիներին՝ ստվերախիտ բացատում,
Նա կախել է զնգուն գինդեր թանկագին,
Ու ցայգի հետ եղրևանու պուրակում
Թովռում է թիթեռի պես խնդագին:

*(1916)*

* * *

По лесу леший кричит на сову.
Прячутся мошки от птичек в траву.
Ау!

Спит медведиха, и чудится ей:
Колет охотник острогой детей.
Ау!

Плачет она и трясет головой:
– Детушки-дети, идите домой.
Ау!

Звонкое эхо кричит в синеву:
– Эй ты, откликнись, кого я зову!
Ау!

*⟨1916⟩*

* * *

Խոր անտառում քաջքն է բուի վրա բղավում,
Մժղուկներն են հավքերից խոտերի մեջ նվաղում:
Ա՜ու:

Քնած արջին երազում թվում է թե բացատում
Որսորդն իր սուր ժանիով ճագերին է հոշոտում:
Ա՜ու:

Նա գոռում է ու լացում և գլուխն է օրորում.
- Ո՜վ իմ փոքրիկ քոթոթնե՛ր, շո՛ւտ տուն եկեք բոլորով:
Ա՜ու:

Արձագանքն է զրնգուն կորչում կապույտ երկնքում.
-Հե՜յ, դու ո՞վ ես, ձայն տո՛ւր ինձ, ո՞ւմ եմ այսքան ես կանչում:
Ա՜ու:

*(1916)*

## МОЛОТЬБА

Вышел за́раня дед
На гумно молотить:
«Выходи-ка, сосед,
Старику подсобить».

Положили гурьбой
Золотые снопы.
На гумне вперебой
Зазвенели цепы.

И ворочаст дед
Немолоченый край:
«Постучи-ка, сосед,
Выбивай каравай».

И под сильной рукой
Вылетает зерно.
Тут и солод с мукой,
И на свадьбу вино.

За тяжелой сохой
Эта доля дана.
Тучен колос сухой –
Будет брага хмельна.

*⟨1916⟩*

# ԿԱԼՍՈՒՄ

Պապը վաղ է ելել տնից,
Որ օրանը կալսի շուտով.
-Դե՛, հարևան, զարթնիր քնից,
Խեղճ ծերուկիս հասիր փութով:

Նրանք մեկտեղ բերին կալում
Ոսկի խրձերն իսկույն բացին:
Եվ իրարու հերթ չտալով
Շղթաները զնգզնգացին:

Քրթմնջում է պապը բարի,
Չկալսված եզրն է գնում.
«Ծեծի՛ր, դրկից, դե՛ մոտ արի,
Եվ բոքոնը զտիր հարդից»:

Ու ձեռքի տակ նրա ուժեղ
Հատիկներն են թռչում հիմի.
-Հա՛մ ածիկ է՝ ալյուրի հետ,
Հա՛մ հարսանյաց առատ գինի:

Մեր բաժինը սա է վերուստ՝
Գնալ հետքից ծանր արորի...
Կալսվել է հասկն անկորուստ,
Եվ խմիչքն էլ թունդ կլինի:

*(1916)*

* * *

Скупались звезды в невидимом бреде.
Жутко и страшно проснувшейся бредне.
Пьяно кружуся я в роще помятой,
Хочется звезды рукою помяти.
Блестятся гусли веселого лада,
В озере пенистом моется лада.
Груди упруги, как сочные дули,
Ластится к вихрям, чтоб в кости ей дули.
Тает, как радуга, зорька вечерня,
С тихою радостью в сердце вечерня.

*⟨1916⟩*

* * *

Աներևույթ ցնորքում ջինջ աստղերը լողացան:
Սահմռկելով ու ահով ուռկաններում արթնացան:
Ու ես հարբած շրջում եմ պուրակի մեջ դալկացած
Եվ ուզում եմ աստղերը ճմռթելով բերել ցած:
Նվագում է տավիղը մեղեդիներ ներդաշնակ,
Փրփրածուփ լճակում ջրահարսն է լողանում՝
Ճերմակ կուրծքը բոլորված, նման հյութեղ շամամի,
Եվ իրանն է գեղանի հողմապտույտ գալարվում,
Մայրամուտն է ծավալվում, հալվում ինչպես ծիածան,
Մի ծով խինդով իմ սրտում ժամերգություն է անձայն:

*(1916)*

* * *

Без шапки, с лыковой котомкой,
Стирая пот свой, как елей,
Бреду дубравною сторонкой
Под тихий шелест тополей.

Иду, застегнутый веревкой,
Сажусь под копны на лужок.
На мне дырявая поддевка,
А поводырь мой – подожок.

Пою я стих о светлом рае,
Довольный мыслью, что живу,
И крохи сочные бросаю
Лесным камашкам на траву.

По лопуху промяты стежки,
Вдали озерный купорос,
Цепляюсь в клейкие сережки
Обвисших до земли берез.

И по кустам межи соседней,
Под возглашенья гулких сов,
Внимаю, словно за обедней,
Молебну птичьих голосов.

*⟨1916⟩*

* * *

Գլուխս բաց, մախաղով իմ քրտենի,
Ու սրբելով գաղջ քրտինքս ճիթայուղ,
Թափառում եմ անտառի կողմ մրտենի,
Բարդիների սոսափի տակ աներկյուղ:

Ես գնում եմ՝ մեջքս կապած պարանով,
Ու նստում եմ մարգագետնում, դեզի տակ,
Վրաս առնում բաճկոնակս ծակծկված,
Ձեռքիս պահած կեռ մահակս՝ ուղեկից:

Երգ եմ ձոնում ես լուսաշող դրախտին,
Գոհ այն մտքից, որ ապրում եմ ու դեռ կամ,
Ու գուղձեր եմ նետում հյութեղ թավ խոտին,
Ուր անտառի շամբուտներն են շնկշնկան:

Կռատուկի արահետն է տրորված,
Հեռվում լիճն է սև արջասպի պես ծփում,
Դալարագեղ բարդիներին փաթաթված
Կատվախոտի պոչուկներն են ինձ կպչում:

Հանդաբաժան ծաղկափիթիթ թփերից,
Սև բուերի կռինչի տակ թնդաձայն,
Ունկ եմ դնում կախարդական հավքերի
Ճաշաժամի մաղթանքները ծիսական:

*(1916)*

* * *

Колокольчик среброзвонный,
Ты поешь? Иль сердцу снится?
Свет от розовой иконы
На златых моих ресницах.

Пусть не я тот нежный отрок
В голубином крыльев плеске,
Сон мой радостен и кроток
О нездешнем перелеске.

Мне не нужен вздох могилы,
Слову с тайной не обняться.
Научи, чтоб можно было
Никогда не просыпаться.

*1 февраля 1917*

* * *

Ո՜վ իմ զիլ զանգակ, արծաթահնչյուն,
Այդ դո՞ւ ես երգում, թե՞ ես՝ երազում:
Սրբապատկերի ցոլքը վարդագույն
Դիպել՝ աչքերիս ժանյակ է հյուսում:

Ասենք թե ես չեմ այն հեզ պատանին՝
Աղավնու ծափող թևերին նստած,
Սակայն բարի է, երկնի քաթանին
Բացատի մասին երազն իմ տեսած:

Ավա՜ղ, ինձ պետք չէ հառաչը շիրմի,
Խոսքը չի կարող գաղտնիքին գրկել:
Դու ինձ ուսուցի՛ր, որ հնար լինի
Խոր քնից կանուխ չարթնանալ երբեք:

*1 փետրվարի 1917 թ.*

* * *

Под красным вязом крыльцо и двор,
Луна над крышей, как злат бугор.

На синих окнах накапан лик:
Бредет по туче седой Старик.

Он смуглой горстью меж тихих древ
Бросает звезды – озимый сев.

Взрастает нива, и зерна душ
Со звоном неба спадают в глушь.

Я помню время, оно, как звук,
Стучало клювом в древесный сук.

Я был во злаке, но костный ум
Уж верил в поле и водный шум.

В меже под елью, где облак-тын,
Мне снились реки златых долин.

И слышал дух мой про край холмов,
Где есть рожденье в посеве слов.

*⟨1917?⟩*

* * *

Ալ ծփենու թևի տակ ետնամուտք է ու գավիթ,
Տանիքից վեր լուսինը ասես ոսկու դեզ է մի:

Լուսամուտին կապուտակ կաթիլներն են կերպ առնում,
Մի ծերուկ է ալեհեր ամպի վրա սավառնում:

Նա իր թխլիկ բռերով անտառների խորքերում
Շող աստղեր է շաղ տալիս աշնան խոնավ հերկերում:

Ուռճանում է արտը ծով, և սերմերը ոգեղեն
Ղողանջյունով երկնքից վար են ընկնում մայր հողին:

Կար մի հնչուն ժամանակ, որը, ինչպես փայտփորիկ,
Հարվածում էր ոստերին սուր կտուցով իր փոքրիկ:

Իսկ ես ծոցում ծով արտի, բայց քարացած խելքս սին
Հավատում էր դաշտերին ու ջրերի խշշոցին:

Եղևնուտի բիլ հեռվում, ուր ամպերն են երիզել,
Հովիտների ոսկեղեն գետակներ եմ երազել:

Եվ իմ հոգին գերվել է բլուրների եզերքին,
Ուր բառերի ցանքերում ծնունդ կա մի անմեկին:

*(1917)*

* * *

Нивы сжаты, рощи голы,
От воды туман и сырость.
Колесом за сини горы
Солнце тихое скатилось.

Дремлет взрытая дорога.
Ей сегодня примечталось,
Что совсем-совсем немного
Ждать зимы седой осталось.

Ах, и сам я в чаще звонкой
Увидал вчера в тумане:
Рыжий месяц жеребенком
Запрягался в наши сани.

*1917*

* * *

Մերկ պուրակներ, հնձած արտեր,
Ջրից ելնող մշուշ թեթև,
Գլորվելով արևն արդեն
Անցավ կապույտ լեռան ետև:

Քուն է մտել խարխուլ ճամփան
Ու երազում խորհում է լուռ,
Որ էլ ոչինչ չի մնացել
Ճերմակահեր ձմռան գալուն:

Ա՜հ, ես ինքս խոր թավուտում
Տեսա երեկ՝ ամպը հագին
Շեկ լուսինը, ինչպես մտրուկ,
Ոնց էր լծվել մեր սահնակին:

*1917*

* * *

*Л. И. Кашиной*

Зеленая прическа,
Девическая грудь,
О тонкая березка,
Что загляделась в пруд?

Что шепчет тебе ветер?
О чем звенит песок?
Иль хочешь в косы-ветви
Ты лунный гребешок?

Открой, открой мне тайну
Твоих древесных дум,
Я полюбил – печальный
Твой предосенний шум.

И мне в ответ березка:
«О любопытный друг,
Сегодня ночью звездной
Здесь слезы лил пастух.

Луна стелила тени,
Сияли зеленя.
За голые колени
Он обнимал меня.

* * *

*Լ. Ի. Կաշինային*

Սանրվածքդ՝ կանաչ տեսքի,
Կուրծքդ՝ անբիծ ու կուսական,
Ո՜վ նրբիրան իմ լույս կեչի,
Ի՞նչ ես տարվել լճով այդքան:

Զեփյուռն ի՞նչ է շշնջում քեզ,
Ոսկի ավազն ի՞նչ է ասում,
Թե՞ հյուսքերիդ համար պես-պես
Լուսնի արծաթ սանրն ես ուզում:

Մի թաքցրու հոգուդ խորքում,
Գաղտնիքներդ մեկնիր դու ինձ,
Ես սիրեցի աշնան գրկում
Քո խշշոցը տրտմաթախիծ:

Եվ կեչին ինձ պատասխանեց.
«Ո՜վ հարցասեր իմ լավ ընկեր,
Հովիվն իմ տակ արցունք թափեց
Աստղաշաղախ ողջ այս գիշեր:

Լուսնի ցոլքն էր շուրջս փռվել,
Խոտերն էին փայլուն վերմակ,
Մերկ ծնկներիս նա ջերմ փարվել,
Ու գրկել էր կուրծքս ճերմակ:

И так, вдохнувши глубко,
Сказал под звон ветвей:
«Прощай, моя голубка,
До новых журавлей».

*15 августа 1918*

Հետո հանեց նա խոր հոգոց
Թավ ճյուղերիս շրշյունի տակ,
Եվ ինձ ասաց. «Մնաս բարո՜վ,
Մինչ նոր գարուն, իմ հերշտակ»»:

*15 օգոստոսի 1918 թ.*

* * *

Ветры, ветры, о снежные ветры,
Заметите мою прошлую жизнь.
Я хочу быть отроком светлым
Иль цветком с луговой межи.

Я хочу под гудок пастуший
Умереть для себя и для всех.
Колокольчики звездные в уши
Насыпает вечерний снег.

Хороша бестуманная трель его,
Когда топит он боль в пурге.
Я хотел бы стоять, как дерево,
При дороге на одной ноге.

Я хотел бы под конские храпы
Обниматься с соседним кустом.
Подымайте ж вы, лунные лапы,
Мою грусть в небеса ведром.

*⟨1919?⟩*

* * *

Օ՜, հողմե՜ր, հողմե՜ր, ձնահյուս հողմեր,
Դուք կյանքն իմ անցյալ ավլեք ու թաղե՛ք:
Ես կուզեմ դառնալ պատանի մի նոր,
Կամ մարգագետնում բուսած մի ծաղիկ:

Կուզեմ հովվի սրնգի կանչով
Ես բոլորի տեղ մեռնել ձեր գրկում:
Աստղային զանգերն անուշ ղողանջով
Իրիկվա ձյունն են ունկերս խցկում:

Ի՜նչ լավ է իր այդ գեղգեղանքն անխառն,
Երբ ցավն է խեղդվում բքի մեջ նրա:
Կուզեի կանգնել ես ինչպես մի ծառ,
Հին ճամփի եզրին՝ մի ոտքի վրա:

Եվ խռռոցի տակ հոգնած ձիերի
Կուզեի գրկել ես թուփն այն մոտիկ:
Դե՛, դուք վե՛ր հանեք, լուսնային թաքեր,
Թախիծն իմ դույլով՝ դեպ անհուն եթեր:

*(1919)*

* * *

Кто я? Что я? Только лишь мечтатель,
Синь очей утративший во мгле,
Эту жизнь прожил я словно кстати,
Заодно с другими на земле.

И с тобой целуюсь по привычке,
Потому что многих целовал,
И, как будто зажигая спички,
Говорю любовные слова.

«Дорогая», «милая», «навеки»,
А в душе всегда одно и то ж,
Если тронуть страсти в человеке,
То, конечно, правды не найдешь.

Оттого душе моей не жестко
Не желать, не требовать огня,
Ты, моя ходячая березка,
Создана для многих и меня.

Но, всегда ища себе родную
И томясь в неласковом плену,
Я тебя нисколько не ревную,
Я тебя нисколько не кляну.

Кто я? Что я? Только лишь мечтатель,
Синь очей утративший во мгле,
И тебя любил я только кстати,
Заодно с другими на земле.

*⟨1925⟩*

* * *

Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ, լոկ մի երազող՝
Կապույտն աչքերիս մեգում կորցրած,
Այս կյանքն ապրել եմ ես ասես իզուր
Այլոց հետ մեկտեղ՝ այս երկրի վրա:

Ես քեզ հիմա էլ գգվում եմ այնպես,
Ինչպես շատերին՝ ըստ սովորության,
Եվ լուցկու այրվող հատիկների պես,
Սիրո խոսքեր եմ քեզ նետում ունայն:

- Թա՜նկս, քնքո՜ւշս, ես՝ հար քո գերին,-
Նույնն է հավետ հոգուս մեջ, սակայն,
Եթե մարդուս մեջ դիպչես կրքերին,
Ապա, իհարկե, չես գտնի ճիշտ բան:

Դրանից էլ գուցե, հոգուս էլ ցավ չէ
Կրակ չուզելը խավարում այս մառ,
Դո՛ւ, իմ նրբիրան, իմ քայլող կեչի,
Ստեղծված ինձ ու շատերի համար:

Բայց միշտ փնտրելով մի ջերմ հարազատ,
Եվ տանջվելով բիրտ գերության ծոցում,
Ես քեզ չեմ խանդում, դու եղիր ազատ,
Ես բոլորովին քեզ չեմ անիծում:

Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ, լոկ մի երազող՝
Կապույտն աչքերիս մեգում կորցրած,
Եվ քեզ սիրել եմ ես ասես իզուր,
Այլոց հետ մեկտեղ՝ այս երկրի վրա:

*(1925)*

* * *

Так всегда, как в пьяную пирушку,
Когда свершается всех дней круговорот,
Любой из нас, приподнимая кружку,
В нее слезу нечаянно прольет.

Мы все устали. Да, устали очень.
И потому наш голос за тобой
За васильковые, смеющиеся очи
Над недовольною и глупою судьбой.

*⟨1925⟩*

* * *

Այդպես է միշտ, ինչպես գինով խնջույքում է ոլորվում,
Երբ օրերի շրջապտույտ վերջին լիրն է բոլորվում,
Մեզնից ով էլ կենաց բաժակ բարձրացնել ցանկանա,
Նրա մեջ իր արցունքները նա կիեղի ակամա:

Մենք բոլորս շատ ենք հոգնել, այո՛, հոգնել սին խաղով,
Դրա համար մենք մեր ձայնը քեզ ենք թողնում հեզաբար,
Վերուստ տրված մեր այս բախտի վրա անհոգ ծիծաղող
Քո այդ կապույտ, մեղմաժպիտ աչքերի ու քեզ համար:

*(Հոկտեմբեր, 1925 թ.)*

## ЖЕНЕ РОКОТОВУ

Помнишь наши встречи, споры и мечты?
Был тогда я молод, молод был и ты,
Счастье было близко, жизнь была ясна,
В дни осенней хмури в нас цвела весна.
Мы теперь устали. Нам бы как-нибудь
Поспокойней выбрать ежедневный путь,
Нам бы поскорее завершить свой круг...
Разве я не правду говорю, мой друг?

*23 декабря 1925 г.*

* * *

*Ժենյա Ռոկոտովին*

Հիշո՞ւմ ես մեր փոխայցերը, անուրջներն ու վեճերը.
Ջահել էի ես այնժամ, ջահել էիր նաև դու,
Բախտը մոտ էր մեզ այնքա՜ն ու պարզ՝ կյանքի էջերը,
Աշնան մռայլ օրերին մեր մեջ գարունն էր ծաղկում:
Դե՛, մենք հիմա հոգնել ենք: Եվ երանի՜ թե մի կերպ
Կարենայինք հանգիստ ընտրել ամենօրյա մեր ճամփան,
Եվ մեր լիրը շուտափույթ ավարտեինք մինչև վերջ...
Մի՞թե ճիշտ չեմ ասում ես, իմ մտերիմ բարեկամ:

*23 դեկտեմբերի 1925 թ.*

* * *

До свиданья, друг мой, до свиданья.
Милый мой, ты у меня в груди.
Предназначенное расставанье
Обещает встречу впереди.

До свиданья, друг мой, без руки,
без слова,
Не грусти и не печаль бровей, —
В этой жизни умирать не ново,
Но и жить, конечно, не новей.

*⟨1925⟩*

* * *

Ցտեսությո՜ւն, իմ բարեկամ, մնաս բարով,
Իմ սիրելի, կրծքիս տակ եմ ես քեզ տանում,
Նախանշված բաժանումն այս ճանապարհով
Մեզ առջևում նոր հանդիպում է խոստանում:

Ցտեսությո՜ւն, իմ լավ ընկեր, առանց ձեռքի, առանց խոսքի,
Դու մի՛ թախծիր և հոնքերդ զուր մի կիտիր,-
Մեր այս կյանքում, մեռնելն, անշուշտ, նոր չէ իսկի,
Բայց ապրելն էլ, հարկավ, նոր չէ ու անխտիր:

*27 դեկտեմբերի 1925 թ.*

# DUBIA

## В ЭТУ НОЧЬ

В эту ночь тревожно-голубую,
Распустились ольхи и березы,
И прозрачный воздух на поляны
Уронил серебряные слезы.

На рассвете зорька золотая
Загорелась ярким перламутром
И шепнула сонной деревушке:
«С добрым утром!»

*⟨1913⟩*

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ԱՅՍ ԳԻՇԵՐ

Եվ այս գիշեր՝ հուզումնալի-կապտաթույր,
Կեչիներն ու լաստիները բացվեցին,
Ու կորցրեց երկինքն հեռու բացատում
Արծաթափայլ արցունքներն իր աստղածին:

Արշալույսին այգը ցողաց ոսկեջինջ
Ու բռնկվեց վառ սաղափով փառավոր,
Եվ շշնջաց նիրհող գյուղի ականջին.
«Բարի՜ առավոտ»:

*(1913)*

## УЙТИ БЫ...

Мне снится родимое поле,
Все снится задумчивый лес
И тихая песня на воле,
Как отзвук далеких небес.

Осины шумят за полями
В алмазах весенних лучей,
И звонко лепечет струями
Певун светлоликий – ручей...

Уйти бы в родимое поле,
В зеленый задумчивый лес
И тихо смеяться на воле,
И петь о лазури небес...

*⟨1913⟩*

# ԳՆԱՅԻ՜...

Երազիս գալիս է մեր դաշտը հարազատ,
Շարունակ մեր անտառն եմ տեսնում մտախոհ,
Եվ մեղմ երգն եմ լսում անհունի մեջ ազատ,
Ինչպես մի երկնային արձագանք հեռավոր:

Կաղամախիներն են դաշտից դեն դողդոջում,
Բիլ աղամանդներում գարնանային շողերի,
Եվ ժիր առվակներն են այնտեղ զիլ խոխոջում
Լուսաջինջ շիթերով հակինթ ցողերի:

Երանի՜ գնայի եզերքն իմ հայրենի,
Մեր անտառն այն կանաչ ու հավերժ մտախոհ,
Ազատության գրկում որ խաղաղ խնդայի
Ու երգեի երկնի լազուրը լայն ու խոր:

*(1913)*

## В ОЖИДАНИИ ЗИМЫ

Под осенними осинками
Зайка зайке говорит:
– Посмотри, как паутинками
Наш осинничек обвит.
Замелькали нити белые,
Закраснел в дубраве лист;
Сквозь деревья помертвелые
Чей-то слышен вой и свист.
То зима идет сердитая –
Горе бедному зверью!
Поспешим к ее прибытию
Шубку выбелить свою. –
Под осенними осинками
Обнялись друзья, молчат...
Повернулись к солнцу спинками –
Шубки серые белят.

*⟨1913 – 1914?⟩*

# ՁՄՌԱՆ ՍՊԱՍՈՒՄ

Աշնանային ծեր կաղամախու տակ
Զրույց են անում երկու նապաստակ.
-Նայի՛ր,- ասում է մեկը մյուսին,-
Մեր կաղամախին ոստայնով պատվել,
Ճերմակ, նրբաթել շալով փաթաթվել
Ու կայծկլտում է՝ սարաֆանն ուսին:
Կաղնու տերևն է կարմրին տալիս
Եվ ինչ-որ մեկի սուլոցն է գալիս:
Մեկի ոռնոցն է տանգնապով լսվում,
Մրսած անտառի ծառերին հյուսվում,
Այդ ցուրտ ձմեռն է գալիս զայրացած,
Խեղճ գազանների պատուհասն անսանձ...
Աշնանային պարզ կաղամախու տակ
Իրար են գրկում ընկերները տաք,
Ու մեջքով դեպի արևն են դառնում
Եվ գորշ մորթերին ճերմակ են խառնում:

*(1913-1914)*

## ПАСТУХ

Я сгоню на луг росистый
Шуструю скотину...
Там у речки, речки быстрой,
Срежу камышину...
Продырявлю камышину,
Сделаю свирель я
И рассыплюсь соловьиной
Переливной трелью.

*⟨1913 – 1914?⟩*

# ՀՈՎԻՎ

Հոտն իմ կայտառ դեպի ցողոտ
Մարգագետին ես կքշեմ...
Եվ ժիր վազող գետակի մոտ
Մի ճիգ եղեգ դուրս կքաշեմ...
Ու եղեգն այդ նուրբ կծակեմ,
Կշինեմ մի դալար շվի,
Սոխակի պես անուշ կածեմ,
Գեղգեղանքս կտարածվի:

*(1913-1914)*

## НОЯБРЬ

На белом снеге оттиск лапок
Медлительных гусиных стад,
И звонче голос нежных маток
И смех косматых жеребят.

За сетью снежной паутины
Зимующий темнеет стог.
И, как старухи, горбят спины
Деревья вдоль больших дорог.

*〈1916?〉*

## ՆՈՅԵՄԲԵՐ

Ճերմակ ձյունին՝ դանդաղաշարժ մայր սագերի
Լողակների դաջված հետքեր՝ խառն ու խրթին,
Եվ զիլ խրխինջ գորովալից մատակների
Ու թավամազ մտրուկների ուրախ տրտինգ:

Ու նրբահյուս ձյան քողից այն կողմ քնած
Գորշ դեզերն են սևին տալով լուռ ձմեռում:
Եվ եզերքին մեծ ճամփեքի ծառերն հոգնած
Ծեր կանանց պես սապատներն են ասես ծռում:

*(1916)*

# Поэтъ

ъ блѣденъ. Мыслитъ страшный пу
ъ его душѣ живутъ видѣнья.
даромъ жизни вбита грудь,
щеки выпили сомнѣнья.

Клоками сбиты волоса
Чело высоко въ морщинахъ,
Но ясныхъ грезъ его краса
Горитъ въ продуманныхъ картин

едитъ онъ въ тѣсномъ чердак
арокъ свѣчки режетъ взоры,
Карандашъ въ его рукѣ
едетъ съ нимъ тайно разговор
Онъ пишетъ пѣсню грустныхъ
онъ ловитъ сердцемъ тѣнь
И этотъ шумъ-душевный ш
Снесетъ онъ завтра за цѣ

Сергѣй Есенин

# ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

## ԿԱՐԾԻՔ

Վ. Ս. Մաղալյանի կազմած Սերգեյ Եսենինի «Վաղ շրջանի բանաստեղծություններ (1910-1915 թթ.)» ժողովածուի մասին

Վահան (Վլադիմիր) Մաղալյանը իբրև բանաստեղծ ու թարգմանիչ նոր անուն չէ մեզանում: Արդեն շուրջ կես դար է, ինչ նրա ինքնուրույն ստեղծագործություններն ու թարգմանությունները տպագրվում են Հայաստանի ու արտերկրի գրական մամուլում ու այլ պարբերականներում, ինչպես և լույս են տեսնում առանձին գրքերով՝ արժանանալով ընթերցող լայն շրջանների դրվատանքին: Նրա մեծ բարեխղճությամբ կատարած թարգմանությունները հիմնականում ռուսերենից, գերմաներենից ու վրացերենից են: Եվ այստեղ պետք է նկատել այն կարևոր իրողությունը, որ նա ընտրում է այնպիսի գործեր, որոնք նախկինում հայերեն չեն թարգմանվել: Նույնը վերաբերում է նաև ռուս մեծ քնարերգակ Ս. Եսենինի բանաստեղծություններին, որոնց մի զգալի մասը, հատկապես վաղ շրջանի ստեղծագործությունները, մինչև այժմ հայերեն չեն թարգմանվել:

Վ. Մաղալյանի կողմից Եսենինի այդ շրջանի շուրջ 100 բանաստեղծություն գրեթե ամբողջությամբ հայերեն է թարգմանվում առաջին անգամ, որոնք համահունչ են բնագրերին և, մեր կարծիքով, կատարված են բծախնդրությամբ ու վարպետությամբ, պահպանված են եսենինյան տողերի ռիթմն ու քնարականությունը, իմաստն ու տրամադրությունները, բանաստեղծի հոգու ջերմությունն ու խոսքի յուրահատկությունները: Նա Եսենինի նույն շրջանում գրած մոտ երկու տասնյակ բանաստեղծություններ, որոնք ուրիշների կողմից նախկինում թարգմանվել ու տպագրվել են բանաստեղծի հայերեն հատորյակներում, նորովի է թարգմանել՝ նկատելով դրանցում տեղ գտած որոշ թերություններ ու բնագրային զգալի շեղումներ: Այժմ, երբ դրանք համեմատում ենք նոր թարգմանությունների հետ, տեսնում ենք, որ վերջիններս ավելի հարազատ են բնագրերին և հնչում են ավելի մաքուր ու զուլալ:

Ասվածը հիմնավորելու համար բերենք միայն մեկ օրինակ. Եսենինը ձմռանը նվիրված մի բանաստեղծություն ունի, որի առաջին տունը հետևյալն է.

*Поет зима - аукает,*
*Мохнатый лес баюкает*
*Стозвоном сосняка.*
*Кругом с тоской глубокою*
*Плывут в страну далекую*
*Седые облака.*

Ահա այս վեցյակը Համո Սահյանի թարգմանությամբ.

*Ճերմակ թիկնոցն ուսին առնում,*
*Մութ անտառն է ականջ անում*
*Ձյուն-ձմեռվա երգին:*
*Ուր որ նայես, իրար գալիս,*
*Գորշ ամպերն են թևին տալիս*
*Դեպի հեռու երկիր:*

Իսկ դրա նոր թարգմանությունը հնչում է այսպես.

*Ձմեռն ինչ-որ երգ է մանում,*
*Խուլ անտառի քունն է տանում*
*Սոսիների խմբերգով:*
*Եվ ամենուր թախիծով խոր*
*Լուռ չվում են երկիր մի նոր*
*Գորշ ամպերը երկնքով:*

Ինչպես տեսնում ենք, այս նոր թարգմանությունը ավելի մոտ ու հարազատ է բնագրին:

Վ. Մաղալյանի թարգմանություններից կարելի է նման բազմաթիվ օրինակներ բերել՝ ցույց տալու համար նրա կատարած աշխատանքի լրջությունն ու բարեխղճությունը և պատշաճ մակարդակը: Իսկ եթե նրա թարգմանություններում նկատելի են նաև ինչ-ինչ վրիպումներ ու թերություններ, ապա դրանք չեն ստվերում սույն ժողովածուի արժանիքները, որը կարող է հիմք դառնալ Եսենինի նույն բանաստեղծությունների հետագա, ավելի կատարյալ թարգմանությունների համար: Ուստի, Վ. Մաղալյանի կազմած ներկա ժողովածուն երաշխավորելով տպագրության, կարծում ենք, որ այն կունենա իր հաջողությունները, կարժանանա թարգմանիչների և ընթերցողների ջերմ ընդունելությանը և միաժամանակ ԵՊՀ հրատարակչության կողմից մի լավ նվեր կլինի ռուս մեծ բանաստեղծի ծննդյան 120 և եղերական մահվան 90-ամյակներին, որոնք լրանում են ընթացիկ տարում:

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ
Բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ

*15 հունիսի 2015 թ.*

## ԳՐՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Սերգեյ Եսենին, 1922 թ.
2. Սերգեյ Եսենին, գործ՝ գեղանկարիչ Գ. Գրիգորյանի (Ջիոտտո)
3. Սերգեյ Եսենինի ծնողները
4. Սերգեյ Եսենինը իր հասակակիցների շրջանում, 1909-1910 թթ.
5. Սերգեյ Եսենինը քույրերի հետ, 1912 թ.
6. Սերգեյ Եսենինը Մոսկվայում, 1912 թ.
7. Սերգեյ Եսենինը Պետերբուրգում, 1913 թ.
8. Սերգեյ Եսենին, 1913 թ.
9. Սերգեյ Եսենին, 1914 թ.
10. Սերգեյ Եսենին, 1915 թ.
11. Ս. Եսենինի բանաստեղծությունների «Ռադունիցա» առաջին ժողովածուի շապիկը (1916 թ.)
12. Պատկերներ Եսենինի ծննդավայրից՝
    - ա) Այն տունը, որտեղ ծնվել է Ս. Ա. Եսենինը
    - բ) Այն դպրոցների շենքերը, որոնցում սովորել է Ս. Ա. Եսենինը
    - գ) Տեսարան Կոստանտինովո գյուղից
    - դ) Ձիեր
    - ե) Կեչիներ

## ՆՄՈՒՇՆԵՐ ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻՑ
(Էջեր 58-61)

1. «Պոետ» բանաստեղծության ինքնագիրը
2. «Աստղեր» բանաստեղծության ինքնագիրը
3. «Հուշեր» բանաստեղծության ինքնագիրը
4. «Տխուր է...» բանաստեղծության ինքնագիրը

# СОДЕРЖАНИЕ

«Поэтическое сердце России» .......... 6

1910
«Вот уж вечер. Роса…» .......... 38
«Там, где капустные грядки…» .......... 38
«Поет зима – аукает…» .......... 40
Подражанье песне .......... 42
«Выткался на озере алый свет зари…» .......... 44
«Дымом половодье…» .......... 46
«Сыплет черемуха снегом…» .......... 48
Калики .......... 50
«Упоенье – яд отравы…» .......... 52

1910-1912
Поэт («Он бледен. Мыслит страшный путь…») .......... 54
Ночь («Усталый день склонился к ночи…») .......... 56

1911
«Под венком лесной ромашки…» .......... 62
«Темна ноченька, не спится…» .......... 64
Звезды .......... 66
И. Д. Рудинскому («Солнца луч золотой…») .......... 68

1911-1912
Воспоминание («За окном, у ворот...») .......... 70
Моя жизнь .......... 74
Что прошло – не вернуть .......... 76
Ночь («Тихо дремлет река…») .......... 78
Восход солнца .......... 80
К покойнику .......... 82
Зима .......... 84
Песня старика разбойника .......... 86

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ռուսաստանի քնարական սիրտը»........................................................6

1910
«Ահա իջավ լուրթ իրիկուն...».........................................................39
«Այնտեղ, ուր այգը կաղամբի ծգված...» ..............................................39
«Ձմեռն ինչ-որ երգ է մանում...».....................................................41
Երգի նմանակում .........................................................................43
«Այգաբացի ցոլքն է բոսոր...» .........................................................45
«Տիղմը ծխի պես ցրվեց...»............................................................47
«Թխենին առատ ձյուն է շաղ տալիս...»..............................................49
Ուխտավորները.............................................................................51
«Ձմայլանքը սոսկ մի խայթ է թույնի...».............................................53

1910-1912
Պոետ («Նա գունատ է...») .............................................................55
Գիշեր («Հոգնած օրը թեքվեց դեպի մայրամուտ...») ..............................57

1911
«Երիցուկի պսակի տակ անտառում...»................................................63
«Մթին գիշեր է, չի լինում քնել...»....................................................65
Աստղեր .....................................................................................67
Ի. Դ. Ռուդինսկուն («Ոսկի շողը արևի...») ..........................................69

1911-1912
Հուշեր («Այնտեղ՝ դրսում, դարպասի մոտ...») ......................................71
Իմ կյանքը...................................................................................75
Ինչ անցել է, ետ չես դարձնի............................................................77
Գիշեր («Գետն է խաղաղ նիրհում...»)................................................79
Արևածագ...................................................................................81
Ննջեցյալին..................................................................................83
Ձմեռ.........................................................................................85
Ծեր ավազակի երգը........................................................................87

1912
«Заиграй, сыграй, тальяночка, малиновы меха…» ........ 88
«Матушка в Купальницу по лесу ходила...» ........ 90
«Задымился вечер, дремлет кот на брусе…» ........ 92
Поэт («Тот поэт, врагов кто губит…») ........ 94
Капли ........ 96

БОЛЬНЫЕ ДУМЫ
«Нет сил ни петь и ни рыдать…» ........ 98
«Я ль виноват, что я поэт…» ........ 98
Думы ........ 100
Звуки печали ........ 102
Слезы ........ 104
«Не видать за туманною далью…» ........ 106
Вьюга на 26 апреля 1912 года ........ 108
Пребывание в школе ........ 110
Далекая веселая песня ........ 112
Мои мечты ........ 114
Брату человеку ........ 116
«Я зажег свой костер…» ........ 118
Деревенская избенка ........ 122
Отойди от окна ........ 124
Весенний вечер ........ 126
«И надо мной звезда горит…» ........ 128

1912-1913
Исповедь самоубийцы ........ 130
«Я положил к твоей постели…» ........ 134

1913
«Грустно… Душевные муки…» ........ 136
«Ты плакала в вечерней тишине…» ........ 138
У могилы ........ 140
Береза ........ 142

1912

«Հնչի՛ր, հարմոն, ախորժալուր, նվագներդ առատածիր...» ................. 89
«Համբարձման տոնին մայրս անտառում երկար թափառել...»............ 91
«Իրիկունն իր ծուխն է մանում...»............................................................ 93
Պոետը («Նա է պոետ, ով թշնամուն չի ներում...»)................................ 95
Կաքիլներ ................................................................................................... 97

ՀԻՎԱՆԴՈՏ ԽՈՀԵՐ

«Ես չեմ կարող էլ չերգել ու չլացել...»...................................................... 99
«Մեղավո՞ր եմ ես արդյոք...»..................................................................... 99
Խոհեր..................................................................................................... 101
Տխրության հնչյուններ ......................................................................... 103
Արցունքներ........................................................................................... 105
«Չի նշմարվում...».................................................................................. 107
1912 թվի ապրիլի 26-ի բուքը ................................................................. 109
Դպրոցում................................................................................................ 111
Հեռավոր ուրախ երգ ............................................................................. 113
Իմ երազները ......................................................................................... 115
Եղբորս՝ մարդուն .................................................................................. 117
«Ես վառեցի իմ խարույկը...»................................................................. 119
Գյուղական հյուղակ .............................................................................. 123
Հեռացիր իմ պատուհանից.................................................................... 125
Գարնանային իրիկուն ........................................................................... 127
«Եվ իմ վերևում մի աստղ է վառվում...».............................................. 129

1912-1913

Ինքնասպանի խոստովանությունը ....................................................... 131
«Ես քո սնարին դրել եմ անփույթ...» ...................................................... 135

1913

«Տխուր է... Հոգու տառապանքները...»................................................. 137
«Լալիս էիր դու իրիկվա մով անդորրում...»......................................... 139
Շիրիմի մոտ ........................................................................................... 141
Կեչին ...................................................................................................... 143

1913-1914
Микола .......... 144
«На небесном синем блюде…» .......... 154

1914
«Зашумели над затоном тростники…» .......... 156
«Край любимый! Сердцу снится...» .......... 158
Осень (Р. В. Иванову) .......... 160
«Не ветры осыпают пущи…» .......... 162
В хате .......... 164
«Сторона ль моя, сторонка!…» .......... 166
«Чую радуницу божью…» .......... 168
«По дороге идут богомолки…» .......... 170
«Край ты мой заброшенный…» .......... 172
«Топи да болота…» .......... 174
Пороша .......... 176
Село (из Тараса Шевченко) .......... 178
«Колокол дремавший…» .......... 180
Кузнец .......... 182
С добрым утром! .......... 186
Егорий .......... 188
Молитва матери .......... 192
Богатырский посвист .......... 194
Что это такое? .......... 198
Узоры .......... 200

1914-1915
Буря .......... 202
«Ты ушла и ко мне не вернешься…» .......... 204
Королева .......... 206

1915
«На плетнях висят баранки…» .......... 208
Табун .......... 210
«Алый мрак в небесной черни…» .......... 214
«В лунном кружеве украдкой…» .......... 216
Удалец .......... 218
Сонет .......... 220

1913-1914
Միկոլա ..... 145
«Երկնի կապույտ սկուտեղին...» ..... 155

1914
«Գետախորշում զով զեփյուռից եղեգները խշշացին...» ..... 157
«Սիրասուն եզերք, սիրտս է երազում...» ..... 159
Աշուն (Ռ. Վ. Իվանովին) ..... 161
«Հողմերը չե՛ն, որ ծածկում են թավուտները...» ..... 163
Խրճիթում ..... 165
«Ա՜յ թե երկիր իմ, հայրենի եզերք...» ..... 167
«Զգում եմ Աստծո երանությունը...» ..... 169
«Ճանապարհով ուխտավորներն են գնում...» ..... 171
«Եզերք դու իմ, վաղուց լքված...» ..... 173
«Ճահճուտներ ու խրուտներ են...» ..... 175
Ձյունափոշի ..... 177
Գյուղ (Տարաս Շևչենկոյից) ..... 179
«Նիրհող զանգի ղողանջից...» ..... 181
Դարբինը ..... 183
Բարի՜ առավոտ ..... 187
Եգորի ..... 189
Մոր աղոթքը ..... 193
Դյուցազնական սուլոց ..... 195
Սա ի՞նչ է ..... 199
Զարդանախշեր ..... 201

1914-1915
Հողմը ..... 203
«Դու հեռացար ու չես դառնա էլ ինձ մոտ...» ..... 205
Թագուհի ..... 207

1915
«Ցանկապատերին թմբեր են կախված...» ..... 209
Երամակ ..... 211
«Ալվան մութը սների մեջ երկնային...» ..... 215
«Լուսնի ժանյակի մեջ թաքուն...» ..... 217
Կտրիճը ..... 219
Սոնետ ..... 221

Чары ....... 222
Черемуха ....... 224
«О дитя, я долго плакал над судьбой твоей…» ....... 226
Старухи ....... 228
«У крыльца в худой логушке деготь…» ....... 230
Рюрику Ивневу («Я одену тебя побирушкой…») ....... 232
«На лазоревые ткани…» ....... 234
«Я странник убогий…» ....... 236
Бабушкины сказки ....... 238
Плясунья ....... 240
«Тебе одной плету венок…» ....... 242
«Занеслися залетною пташкой…» ....... 244
Колдунья ....... 246
Русалка под Новый год ....... 248
Поминки ....... 250
Разбойник ....... 252
«Белая свитка и алый кушак…» ....... 254
«Наша вера не погасла…» ....... 256
«Перо не быльница…» ....... 258

1916-1919
«Вечер, как сажа…» ....... 260
«Прячет месяц за овинами…» ....... 262
«По лесу леший кричит на сову…» ....... 264
Молотьба ....... 266
«Скупались звезды в невидимом бреде…» ....... 268
«Без шапки, с лыковой котомкой…» ....... 270
«Колокольчик среброзвонный…» ....... 272
«Под красным вязом крыльцо и двор…» ....... 274
«Нивы сжаты, рощи голы...» ....... 276
«Зеленая прическа...» ....... 278
«Ветры, ветры, о снежные ветры...» ....... 282

1925
«Кто я? Что я? Только лишь мечтатель…» ....... 284
«Так всегда, как в пьяную пирушку…» ....... 286

Կախարդանք ........ 223
Թփենի ........ 225
«Օ՜, մանկիկ իմ...» ........ 227
Պառավները ........ 229
«Մուտքի մոտ ընկած հին տաշտում...» ........ 231
Ռյուրիկ Իվնևին («Ես քեզ սիրով կհազցնեմ ցնցոտիներ մուրացկանի...») ........ 233
«Լազուր երկնքի պաստառին...» ........ 235
«Ես մի պանդուխտ ուխտավոր եմ...» ........ 236
Տատիկի հեքիաթները ........ 239
Պարուհի ........ 241
«Քեզ մի հյուսկեն դափնեպսակ...» ........ 243
«Գարնան չվեկ թռչնակի պես...» ........ 245
Կախարդը ........ 247
Ջրահարսը Նոր տարվա շեմին ........ 249
Հոգեհաց ........ 251
Ավազակը ........ 253
«Հագին ճերմակ պարահանդեձ...» ........ 255
«Չի մարել մեր հավատը սուրբ...» ........ 257
«Գրիչն, այո՛, սուր ցողուն չէ...» ........ 259

1916-1919
«Մայրամուտը ինչպես մրրուր...» ........ 261
«Լուսնի լիրը խրձանոցի սնարին...» ........ 263
«Խոր անտառում քաջքն է բուի վրա բղավում...» ........ 265
Կալում ........ 267
«Աներևույթ ցնորքում ջինջ աստղերը լողացան...» ........ 269
«Գլուխս բաց, մախաղով իմ քրտենի...» ........ 271
«Ով իմ զիլ զանգակ արծաթահնչյուն...» ........ 273
«Ալ ծփենու թևի տակ...» ........ 275
«Մերկ բացատներ, հնձած արտեր...» ........ 277
«Սանրվածքդ՝ կանաչ տեսքի...» ........ 279
«Օ՜, հողմե՜ր, հողմե՜ր, ձնահյուս հողմեր...» ........ 283

1925
«Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ...» ........ 285
«Այդպես է միշտ, ինչպես հարբած խնջույքում...» ........ 287

«Помнишь наши встречи…?» ........ 288
«До свиданья, друг мой, до свиданья…» ........ 290

DUBL
В эту ночь ........ 292
Уйти бы... ........ 294
В ожидании зимы ........ 296
Пастух ........ 298
Ноябрь ........ 300

**Генрих Эдоян** – Вместо пролога ........ 303
Список иллюстраций ........ 307

«Հիշո՞ւմ ես մեր փոխայցերը...» ........ 289
«Ցտեսությո՜ւն, իմ բարեկամ, մնաս բարով» ........ 291

ՀԱՎԵԼՎԱԾ
Այս գիշեր ........ 293
Գնայի՜ ........ 295
Ձմռան սպասում ........ 297
Հովիվ ........ 299
Նոյեմբեր ........ 301

**Հենրիկ Էդոյան** – Վերջաբանի փոխարեն ........ 303
Լուսանկարների ցանկ ........ 307

Сергей Есенин
СТИХИ РАННЕГО ПЕРИОДА
(1910-1915 гг.)

В переводе и с предисловием
Вагана (Владимира) Магаляна
(На русском и армянском языках)

ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆ
ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(1910-1915 թթ.)

Վահան (Վլադիմիր) Մաղալյանի
թարգմանությամբ և առաջաբանով

Հրատարակության տնօրեն՝ Կ. Հ. Գրիգորյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ա. Վ. Պատվականյան
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ Կ. Ժ. Չալաբյանի
Սրբագրիչ՝ Վ. Վ. Դերձյան

Ստորագրված է տպագրության՝ 15.12.2015 թ.:
Չափսը՝ 70x108 1/32: Թուղթը՝ օֆսեթ:
Հրատարակչական՝ 9.93 մամուլ: Տպագրական՝ 10 մամուլ
+ 10 էջ ներդիր=12.5 պայմանական մամուլի:
Տպաքանակ՝ 150:

Издательство ЕГУ, Ереван, 0025, ул. Алека Манукяна 1

ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1